1. Ընտանիքները և Եկեղեցին Աստծո Ծրագրում

1.1 **Հայր Աստծո Ծրագրը Նրա հավերժական ընտանիքի համար 2**

1.1.1 Աստծո նախաերկրային ընտանիքը. 2
1.1.2 Մահկանացու կյանքի նպատակը 2
1.1.3 Հիսուս Քրիստոսի Քավությունը 2
1.1.4 Ընտանիքների դերը Աստծո ծրագրում 2
1.1.5 Եկեղեցու դերը 2

1.2 **Հոր մոտ վերադառնալը 2**

1.2.1 Հիսուս Քրիստոսի ավետարանը. 2
1.2.2 Եկեղեցու ղեկավարների և ուսուցիչների դերը3

1.3 **Հավերժական ընտանիքներ հիմնելը 3**

1.3.1 Ամուսինը և կինը 3
1.3.2 Ծնողները և երեխաները 4
1.3.3 Եկեղեցու չամուսնացած անդամները 4

1.4 **Տունը և Եկեղեցին 4**

1.4.1 Տունն ամրացնելը 4
1.4.2 Ընտանեկան տնային երեկո. 5
1.4.3 Անհատներին ամրացնելը 5

1. Ընտանիքները և Եկեղեցին Աստծո Ծրագրում

1.1 Հայր Աստծո Ծրագրը Նրա հավերժական ընտանիքի համար

1.1.1 Աստծո նախաերկրային ընտանիքը

Ընտանիքը կարգված է Աստծո կողմից: Այն ամենակարևոր միավորն է ժամանակի և հավերժության մեջ: Դեռ երկրի վրա մեր ծնվելուց առաջ, մենք ընտանիքի մաս էինք կազմում: Յուրաքանչյուրս «երկնային ծնողների սիրված հոգևոր որդի կամ դուստր» է՝ «աստվածային էությամբ և ճակատագրով» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign,* Nov. 1995, 102): Աստված մեր Երկնային Հայրն է, և նախաերկրային կյանքում մենք ապրում էինք Նրա ներկայության մեջ՝ որպես Նրա ընտանիքի անդամներ: Այնտեղ մենք սովորել ենք մեր առաջին դասերը և պատրաստվել մահկանացու կյանքին (տես ՎևՈւ 138.56):

1.1.2 Մահկանացու կյանքի նպատակը

Մեր հանդեպ Իր սիրո շնորհիվ, Աստված ծրագիր է պատրաստել, որով մենք պետք է գայինք երկիր և ստանայինք մարմիններ ու փորձվեինք, որպեսզի կարողանայինք զարգանալ և նմանվել Իրեն: Այդ ծրագիրը կոչվեց «փրկության ծրագիր» (Ալմա 24.14), «երջանկության մեծ ծրագիր» (Ալմա 42.8), և «փրկագնման ծրագիր» (Ալմա 12.25; տես նաև հատվածներ 26–33):

Աստծո ծրագրի նպատակն է՝ տանել մեզ դեպի հավերժական կյանք: Աստված հայտարարել է. «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Հավերժական կյանքը Իր զավակներին տված Աստծո մեծագույն պարգևն է (տես ՎևՈւ 14.7): Դա վեհացումն է սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում: Փրկության ծրագրի միջոցով մենք կարող ենք ստանալ Աստծո ներկայությունը վերադառնալու և ուրախության լրիվությունը ստանալու այդ օրհնությունը:

1.1.3 Հիսուս Քրիստոսի Քավությունը

Աստծո արքայությունում վեհացում ստանալու համար մենք պետք է երկու մահկանացու խոչընդոտ հաղթահարենք՝ մահը և մեղքը: Քանի որ մենք չենք կարող դրանցից որևէ մեկը հաղթահարել ինքնուրույն, Երկնային Հայրը ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ լինելու մեր Փրկիչը և Քավիչը: Փրկչի քավիչ զոհաբերությունը Աստծո բոլոր զավակներին հնարավորություն է տալիս հաղթահարել ֆիզիկական մահը, հարություն առնել և անմահություն ձեռք բերել: Քավությունը նաև հնարավորություն է տալիս նրանց, ովքեր ապաշխարում են և հետևում Նրան, հաղթահարել հոգևոր մահը, վերադառնալ Աստծո ներկայություն, բնակվել Նրա հետ և ունենալ հավերժական կյանք (տես ՎևՈւ 45.3–5):

1.1.4 Ընտանիքների դերը Աստծո Ծրագրում

Մեր Երկնային Հոր ծրագրի համաձայն՝ մենք ծնվել ենք ենք ընտանիքներում: Նա հիմնել է ընտանիքները, որպեսզի մենք երջանիկ լինենք, սովորենք ճիշտ սկզբունքները սիրո մթնոլորտում և պատրաստվենք հավերժական կյանքին:

Ծնողները կարևոր պատասխանատվություն են կրում՝ օգնելու իրենց երեխաներին պատրաստվել Երկնային Հոր մոտ վերադառնալուն: Ծնողները այս պատասխանատվությունը կատարում են, սովորեցնելով իրենց երեխաներին հետևել Հիսուս Քրիստոսին և ապրել Նրա ավետարանով:

1.1.5 Եկեղեցու դերը

Եկեղեցին ապահովում է կազմակերպություն և միջոցներ՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը Աստծո բոլոր զավակներին ուսուցանելու համար: Այն ապահովում է քահանայության իշխանություն՝ փրկության և վեհացման արարողությունները սպասավորելու համար բոլոր նրանց, ովքեր արժանի են և ցանկանում են ընդունել դրանք:

1.2 Հոր մոտ վերադառնալը

1.2.1 Հիսուս Քրիստոսի ավետարանը

Փրկության ծրագիրը ավետարանի լրիվությունն է: Այն ընդգրկում է Արարումը, Անկումը, Հիսուս Քրիստոսի Քավությունը և ավետարանի բոլոր օրենքները, արարողությունները և վարդապետությունները: Այն մեզ ուղի է տալիս՝ մահկանացու կյանքում ուրախություն ունենալու (տես 2 Նեփի 2.25), ինչպես նաև հավերժական կյանքի օրհնությունը ստանալու համար:

Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք մաքրվել և սրբագործվել

մեղքից, և պատրաստվել կրկին մտնելու մեր Երկնային Հոր ներկայությունը: Այս օրհնությունը ստանալու համար՝ մենք պետք է հետևենք ավետարանի սկզբունքներին և արարողություններին (տես Հավատո Հանգանակ 1.3): Մենք պետք է.

1. Հավատք գործադրենք առ Տեր Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին:
2. Դառնանք դեպի Աստված՝ անկեղծ ապաշխարության միջոցով, սիրտի փոփոխությամբ, մեր մեղքերը խոստովանելով և դրանցից հրաժարվելով:
3. Ստանանք մկրտության փրկարար արարողությունը՝ մեղքերի թողության համար:
4. Հաստատվենք որպես Եկեղեցու անդամ և ստանանք Սուրբ Հոգու պարգևը՝ ձեռնադրմամբ:
5. Համբերենք մինչև վերջ՝ պահելով սուրբ ուխտերը:

Այս սկզբունքները ուսուցանվել են դեռ Ադամի օրերից: Երբ մենք սկսում ենք հասկանալ այդ ճշմարտությունները և հավատալ դրանց և հաստատուն վկայություն ենք ձեռք բերում Հիսուս Քրիստոսի մասին, մենք ձգտում ենք հնազանդվել Նրա պատվիրաններին և ցանկանում ենք կիսվել մեր օրհնություններով՝ մեր ընտանիքի և ուրիշների հետ (տես 1 Նեփի 8.9–37): Վկայության այս ապահով հիմքի վրա Եկեղեցու գործունեության մնացած տարրերը բնականորեն աշխատում են:

Անձնական հոգևոր աճ է տեղի ունենում, երբ մենք մոտենում ենք Աստծուն՝ աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության, խորհելու և հնազանդության միջոցով: Նեփին սովորեցրել է.

«Հետո, երբ դուք ներս եք մտել այս նեղ և անձուկ արահետը, ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ արված է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ ոչ. քանզի դուք չէիք գա այսքան հեռու, եթե դա չլիներ Քրիստոսի խոսքով և անխախտ հավատքով նրա հանդեպ, ամբողջովին ապավինելով նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս:

«Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.19-20):

Յուրաքանչյուրս պատասխանատու է Աստծո առաջ՝ Նրա պատվիրանները սովորելու և պահելու, և ավետարանով ապրելու համար: Մենք կդատվենք ըստ մեր գործերի, մեր սրտի ցանկությունների և նրա համար, թե ինչպիսի մարդ ենք դարձել: Դառնալով Հիսուս Քրիստոսի իրական հետևորդները՝ մենք սրտի հզոր փոփոխություն ենք ապրում և «այլևս հակում չունենք չարիք անելու» (Մոսիա 5.2, տես նաև Ալմա 5.12–15, Մորոնի 10.32–33): Ապրելով Հիսուս Քրիստոսի ավետարանով, մենք աճում ենք տող առ տող, ավելի շատ նմանվելով Փրկչին՝ սիրելով և ծառայելով ուրիշներին:

1.2.2 Եկեղեցու ղեկավարների և ուսուցիչների դերը

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները և ուսուցիչները աշխատում են օգնել մարդկանց դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները (տես Մոսիա 18.18–30): Անհատներին և ընտանիքներին այս ջանքերում աջակցելու համար, նրանք.

1. Ուսուցանում են Հիսուս Քրիստոսի ավետարանի մաքուր վարդապետությունները և վկայում դրանց մասին:
2. Ամրապնդում են անհատներին և ընտանիքներին՝ սուրբ ուխտերը պահելու նրանց ջանքերում:
3. Տալիս են խորհուրդ, ցուցաբերում են օգնություն և ընձեռում են ծառայության հնարավորություններ:

Ի լրումն՝ քահանայության որոշ ղեկավարներ իշխանություն ունեն վերահսկելու քահանայության փրկարար արարողությունների կատարումը:

1.3 Հավերժական ընտանիքներ հիմնելը

Ընտանիքները կենտրոնական դեր ունեն Աստծո ծրագրում, որը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սրբազան տաճարային արարողությունները և ուխտերը, եթե հավատարմորեն պահվում են, օգնում են մեզ վերադառնալ Աստծո ներկայություն և հավերժ միավորվել մեր ընտանիքների հետ:

1.3.1 Ամուսինը և կինը

Սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում վեհացում կարող են ստանալ միայն նրանք, ովքեր հավատարմորեն ապրել են Հիսուս Քրիստոսի ավետարանով և կնքվել են որպես հավերժական ամուսիններ:

Ամուսնու և կնոջ կնքումը ժամանակի և հավերժության համար՝ քահանայության

իշխանությամբ, որը հայտնի է նաև որպես տաճարային ամուսնություն, սրբազան արտոնություն և պարտավորություն է, որը բոլորը պետք է ձգտեն ստանալ: Դա հավերժական ընտանիքի հիմքն է:

Տղամարդու և կնոջ հոգիների էությունն այնպիսին է, որ նրանք լրացնում են միմյանց: Տղամարդիկ և կանայք պետք է միասին առաջանան դեպի վեհացումը:

Տերը պատվիրել է ամուսիններին և կանանց հարել միմյանց (տես Ծննդոց Բ.24; ՎԱՌ 42.22): Այս պատվիրանի մեջ *հարել* բառը նշանակում է լիովին նվիրված և հավատարիմ լինել որևէ մեկին: Ամուսնացած զույգերը հարում են Աստծուն և միմյանց, ծառայելով և սիրելով իրար, պահելով ուխտերը՝ լինելով լիովին հավատարիմ միմյանց և Աստծո հանդեպ (տես ՎԱՌ 25.13):

Զույգը մեկ է դառնում, երբ հիմնում է իր ընտանիքը արդարակյաց կյանքի հիմքի վրա: Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում ամուսինները և կանայք հրաժարվում են իրենց առանձին անհատական կյանքից և իրենց ամուսնությունը դարձնում են կյանքի առաջնահերթություն: Նրանք թույլ չեն տալիս, որ որևէ այլ անձ կամ շահ ավելի մեծ տեղ զբաղեցնի իրենց կյանքում, քան այն ուխտերը, որ նրանք կապել են Աստծո և միմյանց հետ: Ինչևէ, ամուսնացած զույգերը շարունակում են սիրել և աջակցել իրենց ծնողներին և հարազատ քույրերին ու եղբայրներին, միևնույն ժամանակ կենտրոնանալով սեփական ընտանիքի վրա: Նմանապես, իմաստուն ծնողները հասկանում են, որ իրենց ընտանեկան պարտականությունները շարունակում են ուժի մեջ մնալ կյանքի ընթացքում՝ սիրո և քաջալերանքի ոգով:

Ամուսնության մեջ մեկ լինելը լիարժեք գործընկերություն է պահանջում; Օրինակ, Ադամը և Եվան միասին աշխատում էին, միասին աղոթում և երկրպագում էին, միասին զոհաբերություն էին անում, միասին ուսուցանում էին իրենց զավակներին ավետարանը և միասին վշտանում էին ուղուց հեռացած երեխաների համար (տես Մովսես 5.1, 4, 12, 27): Նրանք միաբան էին միմյանց և Աստծո հետ:

1.3.2 Ծնողները և երեխաները

«Ադամին և Եվային Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը:. . . Իր զավակներին տված բազմանալու և երկիրը լցնելու Աստծո պատվիրանը մնում է ուժի մեջ» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»): Աստվածային նախագծով, և տղամարդը, և կինը կարևոր են՝ մահկանացու կյանք երեխաներ բերելու և նրանց մեծացնելու և դաստիարակելու համար լավագույն պայմանները ապահովելու համար:

Ամուսնությունից առաջ սեռական հարաբերություններից ամբողջովին զերծ մնալը և բացարձակ հավատարմությունը ամուսնության մեջ պահպանում են այս սուրբ պարտականության սրբությունը: Ծնողները և քահանայության ու օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պետք է անեն ամեն ինչ՝ այս ուսմունքը վերստին զորացնելու ուղղությամբ:

Հայրերի և մայրերի դերերի վերաբերյալ Եկեղեցու ղեկավարները ուսուցանել են. «Հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»): Եթե տանը հայր չկա, ընտանիքում նախագահում է մայրը:

Ծնողները աստվածայնորեն նշանակված պարտականություն են կրում՝ «դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», տես նաև Մոսիա 4.14–15):

Իմաստուն ծնողները սովորեցնում են իրենց երեխաներին կիրառել Քավության բուժող, հաշտեցնող և ամրացնող զորությունը իրենց ընտանիքում: Ճիշտ ինչպես մեղքը, մահկանացու թուլությունները, էմոցիոնալ վնասը և զայրույթը այն պայմաններն են, որոնք Աստծո զավակներին առանձնացնում են Իրենից, այս նույն պայմանները կարող են իրարից առանձնացնել ընտանիքի անդամներին: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է ձգտի ընտանեկան միասնության: Տանը միասնության ձգտել սովորող երեխաների համար ավելի հեշտ կլինի դա անել տնից դուրս:

1.3.3 Եկեղեցու չամուսնացած անդամները

Բոլոր անդամները, եթե անգամ երբեք Եկեղեցում չեն ամուսնացել կամ առանց ընտանիքների են, պետք է ձգտեն կատարյալ ապրելաձևի հավերժական ընտանիքում: Դա նշանակում է պատրաստվել դառնալ արժանի ամուսիններ և սիրող հայրեր կամ մայրեր: Որոշ դեպքում, այդ օրհնությունները կիրականացվեն միայն հաջորդ կյանքում, սակայն վերջնական նպատակը բոլորի համար նույնն է:

Հավատարիմ անդամները, ում հանգամանքները թույլ չեն տալիս ստանալ հավերժական ամուսնության և ծնող լինելու օրհնությունները այս կյանքում, կստանան խոստացված բոլոր օրհնությունները հավերժություններում, եթե պահեն Աստծո հետ կապած իրենց ուխտերը:

1.4 Տունը և Եկեղեցին

Վերականգնված ավետարանի ուսմունքներում և գործերում, ընտանիքը և Եկեղեցին օգնում և ամրացնում են միմյանց: Հավերժական օրհնություններին արժանանալու համար, ընտանիքները պետք է սովորեն վարդապետությունները և ստանան քահանայության արարողությունները, որոնք մատչելի են միայն Եկեղեցում: Ամուր և կենսական կազմակերպություն լինելու համար՝ Եկեղեցին արդարակյաց ընտանիքների կարիք ունի:

Աստված հայտնել է անհատների և ընտանիքների հոգևոր զարգացման նախատիպ արարողությունների, ուսուցման, ծրագրերի և գործունեության միջոցով, որոնք կենտրոնացած են տան շուրջ և աջակցվում են Եկեղեցու կողմից: Եկեղեցու կազմակերպությունները և ծրագրերը նպատակ ունեն օրհնելու անհատներին և ընտանիքներին, և դրանք ինքնանպատակ չեն: Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները և ուսուցիչները ձգտում են օգնել ծնողներին, ոչ թե՝ դուրս մղել կամ փոխարինել նրանց:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պետք է աշխատեն ամրացնել տան սրբությունը, հետևելով, որպեսզի Եկեղեցու բոլոր միջոցառումները սատարեն անհատների և ընտանիքների կյանքը: Եկեղեցու ղեկավարները պետք է զգույշ լինեն, որպեսզի չծանրաբեռնեն ընտանիքները Եկեղեցու չափից շատ պարտականություններով: Ծնողները և Եկեղեցու ղեկավարները աշխատում են միասին, օգնելով անհատներին և ընտանիքներին՝ վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ, հետևելով Հիսուս Քրիստոսին:

1.4.1 Տունն ամրացնելը

Քրիստոսի հետևորդները հրավիրվում են «հավաքվել», «կանգնել սուրբ տեղերում», և «չշարժվել» (ՎԱՌ 45.32; 87.8; 101.22; տես նաև Բ Մնացորդաց ԼԵ.5; Մատթեոս ԻԴ.15): Այդ սուրբ վայրերն են՝ տաճարները, տները և ժողովարանները: Այդ շինություններում Հոգու ներկայությունը և այնտեղ այցելողների պահվածքը դարձնում են դրանք «սուրբ վայրեր»:

Որտեղ էլ որ Եկեղեցու անդամները ապրեն, նրանք պետք է հիմնեն տուն, որտեղ Հոգին ներկա կլինի: Եկեղեցու բոլոր անդամները կարող են հետևել, որպեսզի իրենց բնակության վայրը ապաստան լինի աշխարհից: Եկեղեցու ցանկացած տուն՝ մեծ, թե փոքր, կարող է լինել «աղոթքի տուն, ծոմի տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն, կարգուկանոնի տուն, Աստծո տուն» (ՎԱՌ 88.119): Եկեղեցու անդամները կարող են Հոգին հրավիրել իրենց տուն պարզ եղանակների միջոցով, ինչպիսիք են՝ առողջ ժամանցը, լավ երաժշտությունը և ոգեշնչող արվեստի գործերը (օրինակ, Փրկչի կամ տաճարի նկարները):

Սիրող և հավատարիմ ծնողներով տունը լավ միջավայր է, որտեղ առավել արդյունավետ են բավարարվում երեխաների հոգևոր և ֆիզիկական կարիքները: Քրիստոսի վրա կենտրոնացած տունը մեծահասակներին և երեխաներին ապահովում է մեղքերից պաշտպանվելու միջավայր, ապաստան աշխարհից, բուժում է էմոցիոնալ և այլ տեսակի ցավերը, և պարգևում է նվիրյալ ու անկեղծ սեր:

Ծնողներին միշտ պատվիրվել է մեծացնել իրենց երեխաներին «խրատով և Տիրոջ ուսմունքով» (Եփեսացիս 6.4; Ենովս 1.1) և «լույսի և ճշմարտության մեջ» (ՎԱՌ 93.40): Առաջին Նախագահությունը հայտարարել է.

«Մենք կոչ ենք անում ծնողներին իրենց լավագույն ջանքերը նվիրել իրենց զավակներին ավետարանի սկզբունքները ուսուցանելուն և ըստ դրանց նրանց մեծացնելուն, ինչը նրանց մոտ կպահի Եկեղեցուն: Տունը արդարակյաց կյանքի հիմքն է, և ոչ մի այլ միջոց չի կարող փոխարինել կամ կատարել նրա հիմնական դերը՝ առաջ տանելու Աստծո կողմից տրված այս պարտականությունը:

Մենք խորհուրդ ենք տալիս ծնողներին և երեխաներին մեծագույն առաջնահերթություն համարել ընտանեկան աղոթքը, ընտանեկան տնային երեկոն, ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցումը, և ընտանեկան առողջ միջոցառումները: Թեպետ արժանի և պատշաճ այլ պահանջներ կամ միջոցառումներ կարող են լինել, դրանք չպետք է փոխարինեն

աստվածայնորեն նշանակված պարտականություններին, որ միայն ծնողները և ընտանիքները կարող են ինչպես հարկն է կատարել» (First Presidency letter, Feb. 11, 1999):

Ծնողները առաջնային պատասխանատվություն են կրում՝ օգնելու իրենց զավակներին ճանաչել Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին (տես Հովհաննես 17.3): Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հայրերը և մայրերը պատվիրան են ստացել ուսուցանել իրենց զավակներին ավետարանի վարդապետությունները, արարողությունները, ուխտերը և արդարակյաց կյանքի ուղիները (տես ՎևՈւ 68.25–28): Այսպես մեծացած և ուսուցանված երեխաները պատրաստ են համապատասխան տարիքում ստանալ քահանայության արարողությունները և Աստծո հետ ուխտեր կապել ու պահել:

Ընտանիքների ամրացումը Եկեղեցու ոգեշնչված այնպիսի ծրագրերի առանցքն է, ինչպիսիք են՝ տնային ուսուցումը(տես ՎևՈւ 20.47, 51), այցելությամբ ուսուցումը և ընտանեկան տնային երեկոն: Ինչպես բոլոր բաներում, Հիսուսը տներ գնալու և այնտեղ ծառայելու, ուսուցանելու և օրհնելու օրինակ է ծառայել (տես Մատթեոս 8.14–15; 9.10–13; 26.6; Մարկոս 5.35–43; Ղուկաս 10.38–42; 19.1–9):

1.4.2 Ընտանեկան տնային երեկո

Վերջին օրերի մարգարեները խորհուրդ են տվել ծնողներին շաբաթական ընտանեկան տնային երեկոներ կազմակերպել, ուսուցանելով իրենց երեխաներին ավետարանը, վկայելով դրա ճշմարտացիության մասին և ամրացնելով ընտանեկան միասնությունը: Ցցերի և ծխերի ղեկավարները պետք է ազատ պահեն երկուշաբթի երեկոները Եկեղեցու բոլոր ժողովներից և միջոցառումներից, որպեսզի անդամները կարողանան անցկացնել ընտանեկան տնային երեկո:

Ընտանեկան տնային երեկոն կարող է ներառել ընտանեկան աղոթքը, ավետարանի ուսուցանումը, վկայությամբ կիսվելը, օրհներգերը և Երեխաների Խմբի երգերը, առողջ ժամանցը: (Տանը երաժշտությունը օգտագործելու վերաբերյալ հրահանգների համար տես 14.8կետերը:) Որպես ընտանեկան տնային երեկոյի մաս, կամ առանձին, ծնողները կարող են կանոնավոր կերպով անցկացնել ընտանեկան խորհուրդներ՝ նպատակներ դնելու, խնդիրներ լուծելու, օրացույցային հարցերը համակարգելու և ընտանիքի անդամներին սատարելու ու ամրացնելու համար:

Ընտանեկան տնային երեկոն ծնողների ղեկավարությամբ անցկացվող առանձին ընտանեկան սուրբ ժամանակ է: Քահանայության ղեկավարները չպետք է ուղղություն տան նրա վերաբերյալ, թե ինչ պետք է անեն ընտանիքները այդ ժամանակ:

1.4.3 Անհատներին ամրացնելը

Եկեղեցու ղեկավարները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այն անհատներին, ովքեր ներկայումս չեն վայելում Եկեղեցու ամուր անդամների ընտանիքի աջակցությունը: Այդ անդամները կարող են լինել երեխաները և երիտասարդները, ում ծնողները Եկեղեցու անդամներ չեն, այլ անձիք, ում ընտանիքների ոչ բոլոր անդամներն են Եկեղեցու անդամներ, և ցանկացած տարիքի միայնակ չափահասները: Նրանք Աստծո հավերժական ընտանիքի ուխտյալ անդամներն են, որոնց Նա խորապես սիրում է: Այդ անհատներին պետք է Եկեղեցում ծառայելու հնարավորություն տրվի: Եկեղեցին կարող է առողջ ընկերակցություն առաջարկել այդ անդամներին, ինչը նրանք այլ տեղ չեն կարող գտնել:

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ թանկ է: Աստծո հավերժական ծրագիրը հնարավորություն է տալիս Իր բոլոր հավատարիմ զավակներին ստանալ հավերժական կյանքի բոլոր օրհնությունները և վեհացում ապրել հավերժ ընտանիքում:

2. Քահանայության սկզբունքները

2.1 **Քահանայության Իշխանությունը 8**
2.1.1 Քահանայության բանալիները 8
2.1.2 Արարողություններ 9
2.1.3 Ուխտեր 9

2.2 **Եկեղեցու նպատակը 9**

2.3 **Քահանայությունը և ընտանիքը 9**

2.4 **Քահանայության իշխանության օգտագործումը 10**
2.4.1 Իշխանությունը ստանալը 10
2.4.2 Իշխանությունը փոխանցելը 10
2.4.3 Քահանայության իշխանությունն արդար օգտագործելը 10
2.4.4 Նախագահող խորհուրդներ 10
2.4.5 Քահանայության կոչումները մեծարելը 10

2. Քահանայության սկզբունքները

Քահանայությունը Աստծո զորությունը և իշխանությունն է: Այն միշտ գոյություն է ունեցել և կշարունակի գոյություն ունենալ անվերջ (տես Ալմա 13.7–8; ՎևՈւ 84.17–18): Քահանայության միջոցով Աստված ստեղծել է և կառավարում է երկինքը և երկիրը: Այս զորության միջոցով Նա վեհացնում է Իր հնազանդ զավակներին, իրականացնելով «մարդու անմահությունը և հավերժական կյանքը» (Մովսես 1.39; տես նաև ՎևՈւ 84.35–38):

Մահկանացու կյանքում քահանայությունը Աստծո զորությունն է և իշխանությունը, որն Աստված տալիս է մարդուն՝ կատարելու այն ամենը, ինչ անհրաժեշտ է Աստծո զավակների փրկության համար: Քահանայության օրհնությունները մատչելի են բոլորին, ովքեր ընդունում են ավետարանը:

Ղեկավարների համար քահանայության մասին սովորելու կարևոր սուրբ գրություններ են. Ալմա 13 և Վարդապետություն և Ուխտեր 13, 20, 84, 107, 121, և 124:

2.1 Քահանայության իշխանությունը

Քահանայությունը բաժանված է երկու մասի՝ Ահարոնյան Քահանայության և Մելքիսեդեկյան Քահանայության:

Ահարոնյան Քահանայությունը ավելի ցածր քահանայություն է և հավելում է Մելքիսեդեկյան Քահանայությանը (տես ՎևՈւ 107.13–14): Այն կոչվում է Ահարոնյան Քահանայություն, որովհետև շնորհվել է Մովսեսի եղբորը՝ Ահարոնին, և Ահարոնի որդիներին:

Ահարոնյան Քահանայությունը ներառում է հրեշտակների սպասավորման, ապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները (տես ՎևՈւ 13.1; 84.26–27; 107.20): Ահարոնյան Քահանայություն կրողները կարող են լիազորվել սպասավորելու մկրտության «արտաքին արարողությունները» և հաղորդությունը (տես ՎևՈւ 107.14): Եպիսկոպոսը ծխում Ահարոնյան Քահանայության նախագահն է: Որպես այս պատասխանատվության մաս, նա սպասավորում է նյութական հարցերը, ինչպիսիք են՝ ծխի բարօրությունը և ֆինանսները (տես ՎևՈւ 107.68):

Մելքիսեդեկյան Քահանայությունը ավելի բարձր կամ ավելի մեծ քահանայություն է: Այն ներկա է և գործում է, երբ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին իր լրիվությամբ երկրի վրա է: Սկզբում այն կոչվում էր *Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու Կարգի:* Սակայն Գերագույն Էակի անվան հանդեպ հարգանքը կամ Ակնածանքը պահելու նպատակով՝ նրա անունը հաճախ կրկնելուց խուսափելու համար, հնում եկեղեցում այն կոչում էին Մելքիսեդեկի կամ Մելքիսեդեկյան քահանայություն (տես ՎևՈւ 107.3–4): Մելքիսեդեկը «մեծ քահանայապետ էր» (ՎևՈւ 107.2), որն ապրում էր Աբրահամի ժամանակ:

Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ Եկեղեցու ղեկավարները առաջնորդում են Եկեղեցին, ղեկավարում են ողջ աշխարհում ավետարանի քարոզումը և սպասավորում են ողջ հոգևոր աշխատանքը Եկեղեցում (տես ՎևՈւ 84.19–22; 107.18): Եկեղեցու Նախագահը Մելքիսեդեկյան Քահանայության նախագահող քահանայապետն է:

Երբ տղամարդը ստանում է Մելքիսեդեկյան Քահանայություն, նա ուխտ է կապում լինելու հավատարիմ, մեծարելու իր կոչումները և ապրելու Աստծո ու Նրա ծառաների ամեն մի խոսքով (տես ՎևՈւ 84.33–44):

2.1.1 Քահանայության բանալիները

Քահանայության բանալիները Աստծո իշխանությունն են, որը Նա տվել է քահանայության ղեկավարներին՝ երկրի վրա Իր քահանայության օգտագործումը ղեկավարելու, վերահսկելու և կառավարելու համար: Քահանայության իշխանության կիրառումը կառավարվում է նրանց կողմից, ովքեր կրում են դրա բանալիները (տես ՎևՈւ 65.2; 81.2; 124.123): Նրանք, ովքեր կրում են քահանայության բանալիները, իրավունք ունեն նախագահելու և ղեկավարելու Եկեղեցին իրենց իրավասության սահմաններում:

Հիսուս Քրիստոսը կրում է Իր Եկեղեցուն պատկանող քահանայության բոլոր բանալիները: Իր բոլոր Առաքյալներին Նա շնորհել է երկրի վրա Աստծո արքայությանը պատկանող քահանայության բոլոր բանալիները: Ավագ ապրող Առաքյալը՝ Եկեղեցու Նախագահը, միակ անձն է երկրի վրա, որը լիազորված է գործածելու քահանայության բոլոր բանալիները (տես ՎևՈւ 43.1–4; 81.2; 107.64–67, 91–92; 132.7):

Յոթանասունականները գործում են ըստ Առաջին Նախագահության և Տասներկու

Առաքյալների Քվորումի հանձնարարության և իշխանության փոխանցման: Տարածքային Նախագահները կառավարում են իրենց հանձնարարված տարածքները՝ Առաջին Նախագահության և Տասներկուսի լիազորության ներքո: Յոթանասունի Նախագահությունն ի սպաս է դրվում և ստանում է բանալիներ՝ Յոթանասունի Քվորումին նախագահելու համար:

Եկեղեցու Նախագահը քահանայության բանալիներով լիազորում է քահանայության այլ ղեկավարների, որպեսզի նրանք կարողանան նախագահել իրենց պատասխանատվության շրջանակներում: Քահանայության բանալիները շնորհվում են տաճարների, միսիաների, ցցերի և շրջանների նախագահներին, եպիսկոպոսներին, ճյուղերի նախագահներին և քվորումների նախագահներին: Նախագահելու այդ իշխանությունը ուժի մեջ է յուրաքանչյուր ղեկավարի կոչման միայն նշանակված պատասխանատվությունների շրջանակում և աշխարհագրական իրավասության սահմանում: Երբ քահանայության ղեկավարները ազատվում են իրենց ծառայություններից, նրանք այլևս չեն կրում համապատասխան բանալիները:

Քահանայության ղեկավարների խորհրդականները բանալիներ չեն ստանում: Նրանք ի սպաս են դրվում և գործում իրենց կոչումներում՝ ըստ հանձնարարության և լիազորված իշխանության:

Ծխերի և ցցերի բոլոր օժանդակ կազմակերպությունները գործում են եպիսկոպոսի կամ ցցի նախագահի ղեկավարության ներքո, որոնք կրում են նախագահելու բանալիները: Օժանդակ կազմակերպությունների նախագահները և նրանց խորհրդականները բանալիներ չեն ստանում: Նրանք ստանում են լիազորված իշխանություն իրենց կոչումներում գործելու համար:

2.1.2 Արարողություններ

Քահանայության իշխանությունը անհրաժեշտ է ավետարանի արարողությունները կատարելու համար: Արարողությունը խորհրդանշական իմաստ ունեցող ֆիզիկական սուրբ գործողություն է, ինչպես օրինակ՝ մկրտությունը, հաստատումը կամ հաղորդությունը: Յուրաքանչյուր արարողություն բացում է հարուստ հոգևոր օրհնությունների դուռը: Խորհրդանշականությունը օգնում է մասնակիցներին հիշել Հոր սիրո, Որդու Քավության և Սուրբ Հոգու ազդեցության մասին:

Արարողությունները միշտ կազմել են Հիսուս Քրիստոսի ավետարանի մասը: Օրինակ, մկրտությունը հիմնվել է Ադամի և Եվայի ժամանակ և կիրառվում է Տիրոջ Եկեղեցում այսօր: Եկեղեցու անդամներին պատվիրվել է հաճախ հավաքվել միասին և ընդունել հաղորդությունը՝ միշտ հիշելու համար Փրկչին և թարմացնելու մկրտության ուխտերը և օրհնությունները (տես Մորոնի 6.6; ՎևՈւ 59.8–9):

Պատասխանատվություն ունեցող բոլոր անձանց համար որոշ արարողություններ պարտադիր են սելեստիալ արքայությունում վեհացում ստանալու համար: Այդ արարողությունները ներառում են մկրտությունը, հաստատումը, Մելքիսեդեկյան Քահանայության շնորհումը (տղամարդկանց համար), տաճարային օժտումը և տաճարային կնքումը: Եկեղեցու կենդանի անդամները այս փրկող և վեհացնող արարողությունները ստանում են իրենք իրենց համար: Մահացածները կարող են ստանալ դրանք փոխարինողների միջոցով: Փոխարինող արարողությունները ուժի մեջ են մտնում միայն այն ժամանակ, երբ մահացածները, ում համար այդ արարողությունները կատարվում են, ընդունում են դրանք հոգևոր աշխարհում և հարգում դրանց հետ առնչվող ուխտերը:

Արարողություններ կատարելու և անհրաժեշտ լիազորություններ ձեռք բերելու մասին հատուկ տեղեկության համար, տես գլուխ 20:

2.1.3 Ուխտեր

Փրկության և վեհացման համար անհրաժեշտ բոլոր արարողությունները ուղեկցվում են Աստծո հետ ուխտերով: Ուխտը սուրբ և մշտական խոստում է Աստծո և Նրա զավակների միջև: Աստված սահմանում է ուխտի պայմանները, իսկ Նրա զավակները համաձայնվում են պահել այդ պայմանները: Աստված խոստանում է օրհնություններ, որոնք պայմանավորված են անձի կողմից ուխտը հավատքով պահելով:

Եթե Եկեղեցու անդամները պատվում և պահում են իրենց ուխտերը, նրանք մեծապես օրհնվում են մահկանացու կյանքում և դառնում են արժանի վեհացմանը (տես Ելից 19.3–5; Դատավորաց 2.1; 3 Նեփի 20.25–27; Մորոնի 10.33; ՎևՈւ 42.78; 97.8):

Անձին արարողությունին պատրաստելու համար, ծնողները, ընտանիքի մյուս անդամները, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները և ուսուցիչները համոզվում են, որ անձը հասկանում է այն ուխտերը, որոնք պատրաստվում է կապել (տես Մոսիա 18.8–11): Արարողությունից հետո նրանք օգնում են նրան պահել այդ ուխտերը (տես Մոսիա 18.23–26):

2.2 Եկեղեցու նպատակը

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կազմակերպվել է Աստծո կողմից՝ օգնելու համար իրականացնել Նրա աշխատանքը, որն է՝ փրկություն և վեհացում պարգևել Իր զավակներին: Եկեղեցին հրավիրում է բոլորին «գալ Քրիստոսի մոտ և կատարելագործվել նրանում» (Մորոնի 10.32; տես նաև ՎևՈւ 20.59): Քրիստոսի մոտ գալու հրավերը վերաբերում է բոլորին, ովքեր ապրել են, ապրում են և դեռ կապրեն երկրի վրա:

Երբ անձինք ստանում են մկրտության և հաստատման արարողությունները, նրանք դառնում են Եկեղեցու անդամներ: Եկեղեցին օգնում է նրանց և նրանց ընտանիքներին, ծառայելով որպես «ապաստան փոթորիկներից»՝ աշխարհիկ ազդեցություններից և ամբարշտությունից (ՎևՈւ 115.6): Եկեղեցին տալիս է ծառայության, օրհնության և անձնական աճի հնարավորություններ: Եկեղեցու ծրագրերը և միջոցառումները օգնում և ամրացնում են անհատներին և ընտանիքներին:

Իր նպատակն իրականացնելիս, որն է՝ օգնել անհատներին և ընտանիքներին արժանի լինել վեհացմանը, Եկեղեցին կենտրոնանում է աստվածայնորեն նշանակված պարտականությունների վրա: Դրանք ներառում են՝ օգնել անդամներին ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով, հավաքել Իսրայելը միսիոներական աշխատանքի միջոցով, հոգ տանել կարիքավորների և աղքատների համար, և հնարավոր դարձնել մահացածների փրկությունը՝ կառուցելով տաճարներ և կատարելով փոխարինող արարողություններ:

2.3 Քահանայությունը և ընտանիքը

Եկեղեցում յուրաքանչյուր ամուսին և հայր պետք է աշխատի արժանի լինել կրելու Մելքիսեդեկյան Քահանայությունը: Իր կնոջ հետ, որը նրա հավասարազոր գործընկերն է, նա նախագահում է արդարությամբ և սիրով, ծառայելով որպես ընտանիքի հոգևոր առաջնորդ: Նա ղեկավարում է ընտանիքը կանոնավոր աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության և ընտանեկան տնային երեկոյի միջոցով: Իր կնոջ հետ նա ուսուցանում է երեխաներին և օգնում նրանց պատրաստվել ստանալ փրկության արարողությունները (տես ՎևՈւ 68.25–28): Նա ուղղության, բուժման և սփոփանքի քահանայության օրհնություններ է տալիս:

Շատ անդամներ իրենց տներում չունեն Մելքիսեդեկյան Քահանայության կրողներ: Եկեղեցու ղեկավարները պետք է հատուկ ուշադրություն հատկացնեն, սեր և օգնություն ցուցաբերելով այդ անդամներին՝ ոգեշնչված և հոգատար ճանապարհով, ներառյալ տնային և այցելությամբ ուսուցման միջոցով:

2.4 Քահանայության իշխանության օգտագործումը

2.4.1 Իշխանություն ստանալը

Եղբայրներին քահանայության պաշտոնների կարգելու վերաբերյալ տեղեկության համար, տես 20.7: Եկեղեցու կոչումների կանչելու, հաստատելու և ի սպաս դնելու վերաբերյալ տեղեկության համար, տես գլուխ 19:

2.4.2 Փոխանցել իշխանություն

Քահանայության ղեկավարները կարող են լիազորել իշխանությամբ՝ հանձնարարելով ուրիշներին օգնել իրենց կոչման մեջ: Լիազորման մասին տեղեկության համար, տես 3.3.4:

2.4.3 Քահանայության իշխանության արդար օգտագործումը

Քահանայությունը պետք է օգտագործվի մարդկանց կյանքը օրհնելու համար: Քահանայության արդյունավետ ղեկավարները նախագահում են սիրով և բարությամբ: Նրանք չպետք է պարտադրեն իրենց կամքը ուրիշներին: Նրանք խորհրդակցում են մյուսների հետ և աշխատում համաձայնության գալ՝ հայտնության միջոցով: Տերն ասել է, որ քահանայության զորությունը պետք է օգտագործվի միայն արդարացի (տես ՎևՈւ 121.36): Քահանայությունը ճիշտ է օգտագործվում, եթե արվում է համոզմամբ, համբերությամբ, մեղմությամբ, հեզությամբ, անկեղծ սիրով և բարությամբ (տես ՎևՈւ 121.36, 41–42): Եթե տղամարդը փորձում է չարաշահել քահանայության զորությունը, ապա «երկինքները ետ են քաշվում. Տիրոջ Հոգին տրտմում է. և երբ այն ետ է քաշվում, Ամեն այդ մարդու քահանայությանը կամ իշխանությանը» (ՎևՈւ 121.37):

2.4.4 Նախագահող խորհուրդներ

Խորհուրդները ուղի են հանդիսանում ղեկավարների համար՝ միասին հավաքվելու և միասնությամբ ու հավատքով հայցելու Տիրոջ կամքը: Խորհուրդները նաև հնարավորություն են տալիս համակարգելու քվորումների և օժանդակ կազմակերպությունների աշխատանքը: Նախագահող խորհուրդների օրինակներ են հանդիսանում՝ տեղական մակարդակով, ցցի նախագահությունները,

եպիսկոպոսությունները և քահանայության գործադիր հանձնախմբերը: Խորհուրդների գործունեության վերաբերյալ տեղեկության համար, տես 4.1 հոդվածը:

2.4.5 Մեծարել քահանայության կոչումները

Քահանայություն կրողները մեծարում են իրենց կոչումները, ծառայելով իրենց սեփական տներում, ինչպես նաև՝ մյուս Սրբերին, և բարեխղճորեն կատարելով իրենց պարտականությունները: Տերը խորհուրդ է տվել. «Թող ամեն տղամարդ սովորի իր պարտականությունը և ողջ ջանասիրությամբ գործի այն պաշտոնում, որում նշանակված է» (ՎԱՈ 107.99): Քահանայություն կրողները մեծարում են իրենց կոչումները, ջանասիրաբար ծառայելով, հավատքով և վկայությամբ ուսուցանելով, և բարձրացնելով, ամրացնելով և սնուցելով արդարակեցության սկզբունքները նրանց կյանքում, ում համար պատասխանատու են:

3. Ղեկավարումը Հիսուս Քրիստոսի Եկեղեցում

3.1 **Ղեկավարման Փրկչի ուղին 12**

3.2 **Ավետարանական ղեկավարման սկզբունքները 12**

3.2.1 Պատրաստվեք հոգեպես 12
3.2.2 Մասնակցեք խորհուրդներում 12
3.2.3 Ծառայեք ուրիշներին 12
3.2.4 Ուսուցանեք Հիսուս Քրիստոսի Ավետարանը 12
3.2.5 Ղեկավարեք Քահանայության կամ օժանդակ կազմակերպությունը 12

3.3 **Լրացուցիչ հրահանգներ ղեկավարների համար 13**

3.3.1 Ներկայացրեք Տիրոջը և Նրա Եկեղեցին . . . 13
3.3.2 Կառուցեք միասնություն և ներդաշնակություն 13
3.3.3 Պատրաստեք ուրիշներին՝ լինելու ղեկավարներ և ուսուցիչներ 13
3.3.4 Լիազորեք պատասխանատվությամբ և հետևեք հաշվետվողականությանը 13
3.3.5 Զգուշացրեք մեղքի դեմ, սակայն սիրեք մեղավորին 13
3.3.6 Ակնածանք խրախուսեք 13
3.3.7 Ժողովների գրավոր օրակարգեր պատրաստեք 14
3.3.8 Նպատակով ծրագրավորեք 14
3.3.9 Օգտվեք Եկեղեցական աղբյուրներից՝ պարտականությունները սովորելու համար . . 14

3.4 **Ղեկավարման նպատակները 14**

3. Ղեկավարումը Հիսուս Քրիստոսի Եկեղեցում

3.1 Ղեկավարելու Փրկչի ուղին

Եկեղեցու բոլոր ղեկավարները կանչվում են օգնելու համար մարդկանց դառնալ «Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները» (Մորոնի 7.48)։ Դա անելու համար, ղեկավարները նախ աշխատում են լինել Փրկչի հավատարիմ աշակերտները, ամեն օր ապրելով այնպես, որպեսզի կարողանան վերադառնալ Աստծո ներկայություն։ Այնուհետև նրանք կարող են օգնել մյուսներին զարգացնել ամուր վկայություններ և մոտենալ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին։ Եկեղեցու ծրագրերը և միջոցառումները օգնում են իրականացնել այդ նպատակները։

Ղեկավարները իրենց անձնական օրինակով կարող են լավագույնս ուսուցանել մյուսներին՝ լինել «ճշմարիտ հետևորդներ»։ Հավատարիմ աշակերտ լինելով օգնել ուրիշներին դառնալ հավատարիմ աշակերտներ, — այս նախատիպը Եկեղեցու յուրաքանչյուր կոչման նպատակն է։

Երբ ղեկավարները ծառայում են, հետևելով այդ նախատիպին, նրանք օգնում են Եկեղեցու անդամներին ցանկություն ունենալ արժանանալու տաճարային ամուսնությանը և հավերժական ընտանիքի օրհնությանը։

3.2 Ավետարանական ղեկավարման սկզբունքները

3.2.1 Պատրաստվեք հոգեպես

Փրկիչը պատվիրել է Պետրոսին. «Երբ դու դարձի գաս, եղբայրներիդ հաստատիր» (Ղուկաս ԻԲ.32)։ Երբ ղեկավարները դարձի են գալիս և հոգեպես աճում, նրանք կարողանում են օգնել մյուսներին դարձի գալ և հոգեպես աճել։

Ղեկավարները հոգեպես պատրաստում են իրենք իրենց, պահելով պատվիրանները, ուսումնասիրելով սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների ուսմունքները, աղոթելով, ծոմ պահելով և հնազանդվելով Տիրոջ առաջ։ Այդ պատրաստության շնորհիվ նրանք կարողանում են ոգեշնչում ստանալ, որն առաջնորդում է նրանց անձնական կյանքում, ընտանեկան պարտականությունները և կոչումները կատարելիս։

3.2.2 Մասնակցեք խորհուրդներին

Խորհուրդներում, ղեկավարները հանդիպում են նախագահող պաշտոնյաների ղեկավարության ներքո և քննարկում են անհատներին և ընտանիքներին օգնելու ուղիները։ Առաջնորդվելով Սուրբ Հոգով, նրանք միասին գտնում են արդյունավետ ուղիներ՝ իրենց կազմակերպությունների անդամներին ծառայելու համար։ Եկեղեցու խորհուրդների օրինակներ են՝ ծխի խորհուրդը, ցցի խորհուրդը, եպիսկոպոսությունները և քվորումների ու օժանդակ կազմակերպությունների նախագահությունները։ Խորհուրդներում մասնակցելու վերաբերյալ ուղեցույցների համար, տես գլուխ 4։

3.2.3 Ծառայեք ուրիշներին

Փրկչի նման, ղեկավարները ջանում են ծառայել անհատներին և ընտանիքներին՝ հոգեպես և նյութապես։ Նրանք հոգ են տանում յուրաքանչյուր անձի համար, ոչ թե միայն կազմակերպություն են ղեկավարում։ Նրանք օգնում են նոր անդամներին, քիչ ակտիվ անդամներին և նրանց, ովքեր միայնակ են կամ սփոփանքի կարիք ունեն։

Ծառայելու նպատակն է՝ օգնել մյուսներին դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները։ Մյուսներին ծառայելը ներառում է.

- Նրանց անունները հիշել և նրանց հետ ծանոթանալ (տես Մորոնի 6.4)։
- Նրանց սիրել՝ առանց նրանց դատելու (տես Հովհաննես 13.34–35)։
- Նրանց հետևել և նրանց հավատքն ամրացնել՝ «մեկ առ մեկ», ինչպես Փրկիչն էր անում (3 Նեփի 11.15; 17.21)։
- Նրանց հետ անկեղծ ընկերություն անել և տներում կամ այլ վայրերում նրանց այցելել (տես ՎևՈւ 20.47)։

3.2.4 Ուսուցանեք Հիսուս Քրիստոսի ավետարանը

Բոլոր ղեկավարները ուսուցիչներ են։ Արդյունավետ ուսուցումը ոգեշնչում է մարդկանց՝ ամրացնել իրենց հարաբերությունները Աստծո հետ և ապրել ըստ ավետարանի սկզբունքների։

Ղեկավարների ամենազորեղ ուսուցումը բխում է նրանց անձնական օրինակից: Ղեկավարները նաև ուսուցանում են, կիսվելով իրենց վկայություններով և վարելով վարդապետական քննարկումներ ղեկավարման ժողովներին, դասերին և միջոցառումներին: Նրանք ուսուցանում են սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների խոսքերից: Նրանք գիտեն, որ «խոսքի քարոզելն . . . ուներ ավելի զորավոր ազդեցություն, . . . քան սուրը, կամ որևէ այլ բան» (Ալմա 31.5):

Բացի ավետարանը ուսուցանելուց, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պատասխանատու են իրենց կազմակերպություններում սովորելու և ուսուցանելու որակի համար: Նրանք հետևում են, որպեսզի իրենց դասարաններում ուսուցանումը լինի իմաստալի, վեհացնող և ճիշտ վարդապետությունների վրա հիմնվելու եղանակներով:

Ավետարանը ուսուցանելու և ուսման ու ուսուցանման ջանքերը վերահսկելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար, տես 5.5:

3.2.5 Ղեկավարեք Քահանայության կամ օժանդակ կազմակերպությունը

Ղեկավարները առավել արդյունավետ են լինում մյուսներին ամրացնելու իրենց ջանքերում, երբ հետևում են Եկեղեցու հաստատված ուղեցույցներին: Քահանայությունը և օժանդակ կազմակերպություններում սպասավորելու վերաբերյալ ուղեցույցներ տրվում են գլուխներ 7–12-ում:

3.3 Լրացուցիչ հրահանգներ ղեկավարների համար

3.3.1 Ներկայացրեք Տիրոջը և Նրա Եկեղեցին

Քանի որ Եկեղեցու ղեկավարները կանչվել են Տիրոջ կողմից՝ Նրա նշանակված ծառաների միջոցով, նրանք ներկայացնում են Նրան և Նրա Եկեղեցին: Որպես Փրկչի ներկայացուցիչներ, ղեկավարները Նրան ընդունում են որպես իրենց համար օրինակ: Նա ասել է. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27):

3.3.2 Կառուցեք միասնություն և ներդաշնակություն

Տերն ասել է. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք» (ՎԵՈՒ 38.27): Նախագահող պաշտոնյաները խրախուսում են միասնություն՝ խորհուրդ փնտրելով այն տղամարդկանցից և կանանցից, ովքեր ծառայում են իրենց հետ: Նախագահությունների և խորհուրդների անդամները օգնում են հիմնել միասնության մթնոլորտ՝ կիսվելով իրենց անկեղծ զգացմունքներով և մտքերով, հստակ հաղորդակցվելով և միմյանց լսելով:

Երբ Եկեղեցու կազմակերպությունների ղեկավարները հետևում են իրենց քահանայության ղեկավարներին, և երբ նախագահությունների և խորհուրդների անդամները միասնական են դառնում, նրանք ստանում են Սուրբ Հոգու առաջնորդությունը և ղեկավարում են ըստ Տիրոջ կամքի:

3.3.3 Պատրաստեք ուրիշներին՝ լինելու ղեկավարներ և ուսուցիչներ

Որոշ ծխերում, ղեկավարները շարունակ դիմում են մարդկանց մի փոքր խմբի՝ քահանայությունում կամ օժանդակներում ծառայություն մատուցելու համար: Սա կարող է չափից դուրս ծանրաբեռնել մի քանի հավատարիմ անդամների, իսկ մյուսներին զրկել այն փորձառություններից, որոնք կօգնեին նրանց սովորել և աճել: Արդյունավետ ղեկավարները ծառայության հնարավորություններ են տալիս բոլոր անդամներին:

Երբ նախագահող պաշտոնյաները աղոթքով որոշում են, թե որ անդամներին հանձնարարեն ղեկավարման և ուսուցանելու պաշտոնները, նրանք պետք է հիշեն, որ Տերը կպատրաստի նրանց, ում Նա կանչում է: Կարիք չկա, որ անդամները հիանալի փորձ ունենան՝ որպես ուսուցիչներ և ղեկավարներ ծառայելու համար: Նրանք կարող են սովորել իրենց փորձի վրա, եթե հավատք գործադրեն և ջանասիրաբար աշխատեն, ինչպես նաև հրահանգներ և աջակցություն ստանան իրենց ղեկավարներից:

Նախագահող պաշտոնյաները փնտրում են ուղիներ՝ ծառայելու հնարավորություններ տալու նոր անդամներին, Եկեղեցու ակտիվությանը վերադարձած անդամներին և երիտասարդ ամուրիներին: Նոր և վերադարձած անդամները ոգևորված են վերականգնված ավետարանով, և նրանք հաճախ պատրաստ են ուրիշներին ծառայելու և Եկեղեցու մասին սովորելու նոր հնարավորություններին: Երիտասարդ ամուրիները Տիրոջ գործին մասնակցելու և հոգեպես աճելու հնարավորությունների կարիք ունեն:

Անդամներին Եկեղեցու կոչումներում ծառայելու առաջարկների վերաբերյալ տեղեկության համար, տես 19.1.1 և 19.1.2:

3.3.4 Լիազորեք պատասխանատվությամբ և հետևեք հաշվետվողականությանը

Առանձին ղեկավարները չեն կարող և չպետք է ամեն ինչ միայնակ անեն: Չափից շատ բան անող ղեկավարները «անպատճառ կմաշուին» (Ելից ԺԸ.18), ինչպես նաև այն մարդիկ, ում նրանք ծառայում են: Ղեկավարները պետք է ծառայության հնարավորությամբ լիազորեն ուրիշների՝ խորհրդականներին, գործավարներին և խորհուրդների կամ հանձնախմբերի անդամներին:

Լիազորելն ավելին է, քան որևէ մեկին հանձնարարություն տալը: Այն ներառում է հետևյալ բաղադրիչները.

- Բացատրել հանձնարարության նպատակները, առաջարկել այն կատարելու եղանակները և բացատրել կատարման ժամկետները: Հանձնարարություն ստացած անձը պետք է հասկանա և ընդունի հանձնարարության պատասխանատվությունը և հաշվետու լինի դրա համար:
- Հանձնարարության մասին գրառում կատարել և ժամանակ առ ժամանակ ստուգել առաջընթացը:
- Հարգել հանձնարարությունը կատարող անձի ջանքերը՝ ծրագիր կազմելու և հանձնարարությունը կատարելու ուղղությամբ: Անհրաժեշտության դեպքում, ղեկավարները, խրախուսում և օգնություն են ցուցաբերում:
- Խնդրել անձին զեկուցել հանձնարարության կատարման ընթացքի մասին: Հաշվետվությունը ստանալուց հետո, ղեկավարը ընդունում է անձի լավագույն կատարողականը և շնորհակալություն հայտնում կատարած լավ գործերի համար:

3.3.5 Զգուշացրեք մեղքի դեմ, սակայն սիրեք մեղավորին

Ղեկավարները պետք է հաստատակամ և անզիջում լինեն՝ մեղսավոր պահվածքի դեմ զգուշացնելիս, սակայն միևնույն ժամանակ՝ գթասիրտ և բարի նրանց հանդեպ, ովքեր մեղք են գործում: Նրանք մյուսներին պետք է վերաբերվեն այնպես, ինչպես Փրկիչը կվերաբերվեր նրանց: Դա օգնում է անդամներին զգալ Տիրոջ սերը իրենց հանդեպ, մինչ նրանք կիրառում են Քավությունն իրենց կյանքում:

3.3.6 Ակնածանք խրախուսեք

Ակնածանքը Աստծուն հանգիստ և խաղաղ ձևով երկրպագելու և հարգելու զգացում է: Այն տանում է դեպի ավետարանի ուսուցում և անձնական հայտնություն: Ճշմարիտ ակնածանքը բխում է անձի ներքնաշխարհից:

Ղեկավարները կարող են օգնել ստեղծել ականածալից մթնոլորտ Եկեղեցու հավաքներին: Հաղորդության ժողովներին, ցցերի համաժողովներին և նմանատիպ ժողովներին, ղեկավարները ակնածանքի օրինակ են ծառայում, նստելով բեմահարթակին: Ղեկավարները նաև ակնածանք ենք դրսևորում, կազմակերպելով երկրպագությանը պատշաճ երաժշտություն և ոգեշնչող ելույթներ: Ուսուցիչները նպաստում են դասարաններում ակնածալից մթնոլորտի ձևավորմանը՝ պատրաստելով ոգեշնչող դասեր, նախապես պատրաստելով դասարանները, օգտագործելով համապատասխան նկարներ և երաժշտություն, և ողջունելով դասարանի անդամներին հանգիստ և սիրալիր եղանակով: Երկրպագության ծառայությունները և Եկեղեցու դասերը ավելի օգտակար են դառնում, երբ ողջ ծուխը միասնական է լինում ակնածանքին նպաստող իր ջանքերում:

3.3.7 Ժողովների գրավոր օրակարգեր պատրաստեք

Գրավոր օրակարգերը կարող են ուղեցույց ծառայել ղեկավարներին, երբ նրանք քննարկում են ուրիշներին ծառայելու ուղիները: Եթե օրակարգը բաժանվում է խորհրդի կամ ծրագրավորման ժողովներից առաջ, ապա ղեկավարները ավելի պատրաստված են լինում քննարկումներին: Տարբեր ժողովների համար օրակարգեր պատրաստելու վերաբերյալ ուղեցույցներ տրվում են գլուխ 4 և գլուխներ 7–12-ում:

3.3.8 Նպատակով Ծրագրավորեք

Ղեկավարները ծրագրում են միջոցառումները, դասերը և այլ ջանքեր են գործադրում՝ օրհնելու համար ծխի անդամների կյանքը: Նրանք միշտ ծրարգրում են որոշակի նպատակով, որպեսզի իրենց ջանքերը օգուտ բերեն նրանց, ում իրենք ծառայում են: Ծրագրելիս ղեկավարները հետևում են 13.1 և 13.2}-ում տրված սկզբունքներին: Գործնական վերապատրաստում և ավետարանական ուսուցում ծրագրելիս նրանք հետևում են 5.5-ում տրված սկզբունքներին:

Ղեկավարները նաև կազմում են իրենց կազմակերպությունների երկարաժամկետ ծրագրերը: Այդ թվում նրանք կազմում են տարեկան օրացույցը, սահմանում են նպատակները և պարբերաբար գնահատում են այդ նպատակներին հասնելու գործընթացը:

Քարտուղարների օգնությամբ, ղեկավարները արձնագրություն են վարում իրենց ծրագրերի և հանձնարարությունների կատարման առաջընթացի վերաբերյալ: Իրենց ծրագրերը կատարելուց հետո նրանք գնահատում են, թե որքանով են հասել իրենց նպատակներին: Այդ գնահատումը օգնում է հետագա ծրագրավորման ժամանակ:

3.3.9 Օգտվեք Եկեղեցու աղբյուրներից՝ պարտականությունները սովորելու համար

Ղեկավարները օգտվում են հետևյալ աղբյուրներից, որոնք օգնում են նրանց սովորել և կատարել իրենց պարտականությունները.

- Սույն ձեռնարկից: Ցցերի նախագահությունները և եպիսկոպոսությունները պետք է ամբողջությամբ ծանոթանան այս ձեռնարկին: Մյուս ղեկավարները պետք է ծանոթանան 1-6 գլուխներին, իրենց կազմակերպություններին վերաբերող գլուխներին և ցանկացած այլ տեղեկությանը, որը վերաբերում է իրենց պարտականություններին: Ձեռնարկն ուսուցանում է այն սկզբունքները և գործերը, որոնք կարող են օգնել նրանց արդյունավետ ծառայել:
- Հաշվետվություններից: Գործավարները և քարտուղարները ղեկավարներին ապահովում են հաշվետվություններով, որոնք ներկայացնում են անհատների և խմբերի առաջընթացը: Այդ տեղեկությունը օգնում է ղեկավարներին հասկանալ, թե ովքեր կամ որ կազմակերպությունները հատուկ ուշադրության կարիք ունեն:
- Տեղական ղեկավարների հրահանգներից: Հաստատվելուց հետո յուրաքանչյուր նոր ղեկավար պետք է կողմնորոշիչ ուսուցում ստանա իր կոչման վերաբերյալ: Կողմնորոշիչ ուսուցում տվող ղեկավարները պետք է շարունակեն հրահանգավորել և աջակցել՝ ղեկավարների ժողովների և անձնական հաղորդակցման միջոցով:
- Եկեղեցու ուսուցման նյութերից: Այդ նյութերը մատչելի են LDS.org-ում՝ Ծառայել Եկեղեցում բաժնում, կամ Եկեղեցու գլխավոր գրասենյակում, կամ նշանակված վարչական գրասենյակում:
- Եկեղեցու ամսագրերից և այլ հրապարակումներից:

3.4 Ղեկավարման նպատակները

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը ղեկավարների համար հիմնել են հետևյալ նպատակները, որոնք նրանք պետք է հաշվի առնեն՝ իրենց կոչումները մեծարելիս:

Ղեկավարները խրախուսում են յուրաքանչյուր անդամի՝ ստանալ քահանայության բոլոր կարևոր արարողությունները, պահել դրանց հետ կապված ուխտերը և արժանանալ վեհացմանը և հավերժական կյանքին: Եկեղեցու ղեկավարները պետք է օգտագործեն քահանայության քվորումները, օժանդակ կազմակերպությունները, ցցերի և ծխերի խորհուրդները՝ օգնելու համար ստանալ հետևյալ արդյունքները.

Ընտանիքներ. Ուսուցանել տան և ընտանիքի՝ որպես Եկեղեցու հիմնական կազմակերպության գերակայության մասին: Շեշտել բարձրագույն քահանայության կարևոր դերը՝ անհատներին և ընտանիքներին վեհացմանը արժանանալու գործում օգնելիս (տես ՎևՈւ 84.19–22): Խրախուսել ընտանիքի յուրաքանչյուր անդամի՝ ծնողներին և երեխաներին, ուսումնասիրել սուրբ գրությունները, կանոնավոր աղոթել և ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով:

Չափահասներ. Խրախուսել յուրաքանչյուր չափահասի լինել արժանի՝ ստանալու տաճարային արարողությունները: Ուսուցանել բոլոր չափահասներին գտնել իրենց նախնիներին և կատարել նրանց համար տաճարային փոխարինող արարողությունները:

Երիտասարդներ. Օգնել յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն, տաճարային արարողությունները և արժանի լինել ծառայելու լիաժամկետ միսիայում:Օգնել յուրաքանչյուր երիտասարդ կնոջ պատրաստվել արժանի լինելու կապել և պահել սրբազան ուխտերը և ստանալ տաճարային արարողությունները: Ամրացնել երիտասարդներին՝ իմաստալից միջոցառումներին մասնակցելու միջոցով:

Բոլոր անդամները. Օգնել քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին, ծխի խորհուրդներին, ծխի և լիաժամկետ միսիոներներին և անդամներին՝ համատեղ աշխատել, հավասարակշռված ջանքեր գործադրելով՝ փրկել անհատներին, ամրացնել ընտանիքները և Եկեղեցու միավորները, ավելացնել քահանայության ակտիվությունը և հավաքել Իսրայելը՝ դարձի բերելու, պահպանելու և ակտիվացնելու միջոցով: Ուսուցանել անդամներին ապահովել իրենց և իրենց ընտանիքները և օգնել աղքատներին և կարիքավորներին Տիրոջ ձևով:

4. Ծխի խորհուրդ

4.1 **Խորհուրդները Եկեղեցում 16**

4.2 **Եպիսկոպոսություն 16**

4.3 **Քահանայության գործադիր հանձնախումբ 16**

4.4 **Ծխի խորհուրդ. 16**

4.5 **Ծխի խորհրդի աշխատանքը 16**

4.5.1 Օգնել յուրաքանչյուր անձին զարգանալ . . . 16

4.5.2 Օգնել ամրացնել ծուխը 17

4.6 **Ծխի խորհրդի ժողովներ. 17**

4.6.1 Առաջնորդող սկզբունքներ 17

4.6.2 Օրակարգի նմուշ 18

4.6.3 Գործողությունների իրականացում 18

4.6.4 Ծխի գործավարի պարտականությունները. . .18

4.6.5 Գործադիր քարտուղարի պարտականությունները. 19

4. Ծխի խորհուրդ

4.1 Խորհուրդները Եկեղեցում

Տիրոջ Եկեղեցին կառավարվում է խորհուրդների միջոցով՝ ընդհանուր, տարածքի, ցցի և ծխի մակարդակներով: Այդ խորհուրդները Եկեղեցու կարգի հիմքն են կազմում:

Քահանայության ղեկավարության բանալիների ներքո, յուրաքանչյուր մակարդակի վրա, ղեկավարները միասին խորհրդակցում են՝ անհատների և ընտանիքների օգտի համար: Խորհրդի անդամները նաև ծրագրում են Եկեղեցու աշխատանքը՝ իրենց պատասխանատվությունների սահմաններում: Արդյունավետ խորհուրդներում խորհրդի անդամները լիովին արտահայտվում են և միավորում իրենց ջանքերը, որոնք ուղղված են անհատների, ընտանիքների և կազմակերպչական կարիքները հոգալուն:

Լինելով ծխի նախագահող քահանայապետը, եպիսկոպոսը նախագահում է երեք համապատասխան խորհուրդներում՝ եպիսկոպոսությունում, քահանայության գործադիր հանձնախմբում և ծխի խորհրդում: Այս գլուխը տալիս է դրանցից յուրաքանչյուրի բացատրությունը:

4.2 Եպիսկոպոսություն

Եպիսկոպոսությունը պատասխանատու է ծխի բոլոր անդամների, կազմակերպությունների և միջոցառումների համար: Եպիսկոպոսությունը սովորաբար հանդիպում է առնվազն շաբաթը մեկ անգամ: Ծխի գործավարը և ծխի գործադիր քարտուղարը ներկա են գտնվում: Առաջարկվող օրակարգի համար տես 18.2.6:

Եպիսկոպոսի որոշումները ավելի լավ են տեղեկացվում և ավելի արդյունավետ են կիրառվում, երբ ընդունվում են նրա խորհրդականների հետ քննարկումների հիման վրա, իսկ երբ պատշաճ է, ծխի խորհուրդների հետ մեկտեղ: Այդ քննարկումների ժամանակ եպիսկոպոսը չի կիսվում տեղեկությամբ, որը պետք է գաղտնի պահել:

4.3 Քահանայության գործադիր հանձնախումբ

Ծխի քահանայության գործադիր հանձնախմբի (ՔԳՀ) կազմում են եպիսկոպոսությունը, ծխի գործավարը, ծխի գործադիր քարտուղարը, քահանայապետերի խմբի ղեկավարը, երեցների քվորումի նախագահը, ծխի միսիայի ղեկավարը և Երիտասարդ Տղամարդկանց նախագահը:

ՔԳՀ պարբերաբար հանդիպում է քահանայության հարցերը քննարկելու համար: Սովորաբար, ՔԳՀ-ն չի քննարկում այն հարցերը, որոնք քննարկվում են ծխի խորհրդում: Ինչևէ, ՔԿԳ-ի համար օգտակար է դիտարկել որոշ հարցեր, որոնք պետք է լինեն ծխի խորհրդի օրակարգում: Հարմարության համար, ՔԳՀ-ն կարող է հանդիպել ծխի խորհրդից առաջ:

Եթե անհրաժեշտ է, եպիսկոպոսը կարող է հրավիրել Սփոփող Միության նախագահին՝ ներկա լինելու ծխի ՔԳՀ որոշ ժողովներին՝ քննարկելու համար բարօրության խորհրդապահ հարցերը և համակարգելու տնային ուսուցումը և այցելությամբ ուսուցման հանձնարարությունները:

4.4 Ծխի խորհուրդ

Ծխի խորհուրդի մեջ են մտնում եպիսկոպոսությունը, ծխի գործավարը, գործադիր քարտուղարը, քահանայապետերի խմբի ղեկավարը, երեցների քվորումի նախագահը, ծխի միսիայի ղեկավարը և Սփոփող Միության, Երիտասարդ Տղամարդկանց, Երիտասարդ Կանանց, Երեխաների Խմբի և Կիրակնօրյա Դպրոցի նախագահները:

Ծխի խորհրդի անդամները աշխատում են օգնել անհատներին կառուցել իրենց վկայությունները, ստանալ փրկարար արարողությունները, պահել պատվիրանները և դառնալ Հիսուս Քրիստոսի սրբագործված հետևորդները (տես Մորոնի 6.4–5): Ծխի խորհրդի բոլոր անդամները հիմնականում պատասխանատվություն են կրում ծխի անդամների բարեկեցության համար: Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները նաև հատուկ պարտականություն ունեն՝ իրենց կազմակերպության յուրաքանչյուր անդամի համար հոգալու և նրան ամրացնելու ուղղությամբ:

Սովորաբար, ծխի լիարժեք խորհուրդը դիտարկում է միայն հարցեր, որոնց արդյունավետության համար պահանջում է (1) կազմակերպությունների համակարգված աշխատանքը, (2) խորհրդի քննարկումը և միացյալ ջանքերը, կամ (3) դրանք ամբողջ ծխին վերաբերող հարցեր են: Հարցերի մեծ մասը, որոնք հատուկ են քահանայության կամ

օժանդակ կազմակերպությունների գործառույթներին, պետք է դիտարկվեն այդ կազմակերպության ղեկավարների կողմից, ոչ թե ծխի ամբողջ խորհրդով: Բացի այդ, ծխի խորհրդի անդամները զգայուն կամ խորհրդապահ հարցերը կարող են եպիսկոպոսի հետ առանձին քննարկել:

4.5 Ծխի խորհրդի աշխատանքը

4.5.1 Օգնել յուրաքանչյուր անձին զարգանալ

Ծխի խորհրդի անդամները իրենց աշխատանքի մեծ մասը կատարում են ծխի խորհրդի ժողովներից դուրս: Նրանք աշխատում են իրենց խորհրդականների և տնային ուսուցիչների, այցելող ուսուցիչների, նաև ուրիշների հետ, ծառայելով իրենց կազմակերպությունների անդամներին և մյուսներին, ովքեր օգնության կարիք ունեն:

Ծխի խորհրդի անդամները աշխատում են տեղեկացված լինել իրենց կազմակերպությունների անդամների կարիքներից, բարօրությունից և հոգևոր առաջընթացից: Նրանք նաև տեղեկացված են այն անդամներից, ովքեր հատուկ խնդիրների առաջ են կանգնած կամ հայտնվում են փոփոխվող իրավիճակներում: Այս տեղեկությունը թույլ է տալիս ամրացնել նրանց, ովքեր առավելագույնս ունեն իրենց կարիքը: Միևնույն ժամանակ, նրանք հարգում են անձի և ընտանիքի անձնական կյանքը: Միայն եպիսկոպոսն է զբաղվում անձնական արժանավորության հարցերով:

Հետևյալ աղբյուրները կարող են օգնել ծխի խորհրդի անդամներին տեղյակ լինել անդամների և հետաքրքրվողների առաջընթացից.

1. Անդամների հաճախումների հաշվետվությունները, օրինակ՝ ծխի եռամսյակային հաշվետվությունը: Այս հաշվետվությունները պատրաստվում են ծխի գործավարի կողմից: Դրանք տեղեկություն են ներկայացնում Եկեղեցում անհատների ակտիվության, արարողությունների կարգավիճակի և առաջընթացի, տարիքային խմբերի և ամբողջ ծխի մասին: Ծխերում, որոնք օգտագործում են Եկեղեցու հաշվառման համակարգչային ծրագիրը, գործավարը կարող է տրամադրել նաև այլ հաշվետվություններ, որոնք օգտակար տեղեկություն են պարունակում:
2. Հաշվետվություններ տնային և այցելող ուսուցիչներից:
3. «Նոր և վերադարձող անդամի առաջընթացի» ձև: Ծխի խորհրդի անդամները օգտագործում են այս ձևաթուղթը, որպեսզի ծրագրեն նոր անդամներին ուսուցանելու և ամրացնելու ուղիները՝ մկրտությունից և հաստատումից սկսած մինչև տաճարային օժտում ստանալը: Ծխի խորհրդի անդամները կարող են նաև օգտագործել այս ձևաթուղթը, որպեսզի ծրագրեն ուղիներ, որոնցով կարող են օգնել քիչ ակտիվ անդամներին պատրաստվել ստանալու իրենց տարիքին համապատասխան արարողություններ, ներառյալ տաճարային արարողությունները:
4. «Առաջադիմության գրառում»: Լիաժամկետ միսիոներները օգտագործում են այս ձևաթուղթը, որպեսզի արձանագրեն յուրաքանչյուր հետաքրքրվողի առաջընթացը: Միսիոներները կիսվում են այս տեղեկությամբ ծխի միսիայի ղեկավարի հետ, որն իր հերթին կիսվում է դրանով ծխի խորհրդի հետ:

4.5.2 Օգնել ամրացնել Ծուխը

Ծխի խորհրդի անդամները աշխատում են միասին՝ ծխում հոգևոր տոկունություն և միասնություն կառուցելու ուղղությամբ: Ծխի խորհուրդը նաև ղեկավարում է ծխում միջոցառումների ծրագրավորումը: Միջոցառումները պետք է ուղղված լինեն ավետարանի նպատակների իրականացմանը: Միջոցառումներ վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար տես գլուխ 13:

4.6 Ծխի խորհրդի ժողովները

Ծխի խորհուրդը հավաքվում է կանոնավոր կերպով (առնվազն ամիսը մեկ անգամ): Ժողովը սովորաբար տևում է 60-90 րոպե:

Եպիսկոպոսը նախագահում է ժողովին: Իր բացակայության դեպքում, նա կարող է հանձնարարել խորհրդականներից մեկին նախագահել: Ինչևէ, եպիսկոպոսի բացակայությամբ մեծ որոշումներ չեն ընդունվում:

Ծխի միսիայի ղեկավարի խորհրդով, եպիսկոպոսը ժամանակ առ ժամանակ կարող է հրավիրել լիաժամկետ միսիոներներին հանդիպել ծխի խորհրդի հետ:

4.6.1 Առաջնորդող սկզբունքներ

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները ներկա են լինում խորհրդի ժողովներին երկու դերակատարությամբ. (1) որպես ծխի խորհրդի անդամներ, ովքեր օգնում են եպիսկոպոսին հոգալ ծխի կարիքները և մտահոգությունները և լուծումներ գտնել, և (2) որպես իրենց կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Այդ ղեկավարները փնտրում են Սուրբ Հոգու առաջնորդությունը, միավորվելով սիրով և մտահոգությամբ նրանց համար, ում ծառայում են:

Ծխի խորհուրդների ժողովները պետք է կենտրոնանան այնպիսի հարցերի շուրջ, որոնք ամրացնում են անհատներին և ընտանիքներին: Խորհուրդը նվազագույն ժամանակ է հատկացնում օրացույցեր կազմելու, միջոցառումներ ծրագրավորելու և վարչարարական այլ հարցերի վրա:

Ժողովի ժամանակ եպիսկոպոսը բացատրում է դիտարկվող յուրաքանչյուր խնդիրը, սակայն նա սովորաբար չի որոշում, թե ինչպես լուծել խնդիրը, քանի դեռ քննարկում տեղի չի ունեցել: Նա խրախուսում է, որ քննարկում անցկացվի առանց գերիշխելու: Նա հարցեր է տալիս և կարող է խնդրել խորհրդի անդամներին կիսվել իրենց առաջարկություններով: Որոշում կայացնելուց առաջ նա ուշադիր լսում է: Քննարկումները պետք է ոգեշնչման ոգի խթանեն:

Խորհրդի անդամներին խրախուսվում է խոսել ազնիվ, հիմնվելով իրենց անձնական փորձի և որպես կազմակերպության ղեկավարներ իրենց կոչումների վրա: Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք պետք է զգան, որ իրենք լիարժեք մասնակիցներ են, և որ իրենց դիտողությունները արժեքավորվում են: Եպիսկոպոսը ակնկալում է Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց և Երեխաների Խմբի ղեկավարների կարծիքները ծխի խորհրդի կողմից դիտարկվող բոլոր հարցերի վերաբերյալ: Կանանց տեսակետը երբեմն տարբերվում է տղամարդկանց տեսակետից և էական լրացում է տրամադրում անդամների կարիքները հասկանալու և հոգալու հարցերին:

Բաց քննարկումից հետո, եպիսկոպոսը կարող է որոշում կայացնել, կամ կարող է շարունակել հարցի քննարկումը իր խորհրդականների հետ: Նրա որոշումից հետո, խորհրդի անդամները պետք է աջակցեն այդ որոշմանը՝ միասնության և ներդաշնակության ոգով:

Եթե խորհրդի անդամները խիստ անհանգիստ զգացումներ ունեն կարևոր որոշման հետ կապված, եպիսկոպոսը կարող է սպասել և դիտարկել այդ հարցը հետագայում, փնտրելով հոգևոր հաստատում և միասնություն:

Խորհրդի անդամները պետք է գաղտնի պահեն ցանկացած անձնական կամ զգայուն տեղեկություն անդամների, ընտանիքների և քննարկվող թեմաների մասին:

4.6.2 Օրակարգի նմուշ

Եպիսկոպոսի ղեկավարությամբ, գործադիր քարտուղարը պատրաստում է ծխի խորհրդի ժողովի օրակարգը: Եպիսկոպոսը խնդրում է, որպեսզի խորհրդի անդամները գործադիր քարտուղարին հաղորդեն օրակարգում ընդգրկվող իրենց հարցերը: Գործադիր քարտուղարը նույնպես կարող է առաջարկել օրակարգի հարցեր, ներառյալ նախկին ժողովներից այն հարցերը, որոնք լրացուցիչ քննարկման կամ հետևելու կարիք ունեն: Գործադիր քարտուղարը կարող է նաև պատրաստել ծխի գալիք գործերի օրացույցը՝ խորհրդի անդամների դիտարկման համար:

Հարցերի ցանկը, որոնք կարող են ընդգրկված լինել օրակարգում, տրված է ստորև: Եպիսկոպոսը չպետք է ձգտի այս բոլոր հարցերը դիտարկել յուրաքանչյուր ժողովի ժամանակ: Փոխարենը, նա առաջնահերթություններ է սահմանում յուրաքանչյուր ժողովի օրակարգում՝ որպեսզի առաջնային ուշադրություն հատկացվի առավել կարևոր հարցերին: Չափից շատ հարցեր արհեստականորեն քննարկելու փոխարեն, ավելի լավ է կենտրոնանալ մի քանի կարևոր հարցերի վրա, որոնք թվով ավելի շատ անդամների և ընտանիքների օրհնություններ կբերեն: Եպիսկոպոսը ապավինում է ոգեշնչմանը, որպեսզի իմանա, թե տվյալ պահին որ հարցերն են առավել կարևոր:

1. Համառոտ զեկույց վերջին ժողովի հանձնարարականների մասին:
2. Հոգևոր և նյութական բարօրություն: Քննարկեք ընտրված անհատների և ընտանիքների հոգևոր և նյութական բարօրությունը: Ծրագիր կազմեք՝ օգնելու նրանց հոգալ իրենց կարիքները, ներառյալ՝ երկարաժամկետ կարիքները: Քննարկեք, թե ինչպես ամրացնել ընտանիքները: Լրացուցիչ տեղեկության համար տես 6.2.2:
3. Միսիոներական աշխատանք: Մշակեք և քննարկեք ծխի միսիայի ծրագիրը (տես 5.1.8): Օգտվելով «Առաջադիմության գրառում» ձևաթղթից, դիտարկեք մկրտության թեկնածուների և ներկա հետաքրքրվողների առաջընթացը: Եպիսկոպոսը կարող է խնդրել ծխի միսիայի ղեկավարին առաջնորդել այդ գործընթացը: Լրացուցիչ տեղեկության համար տես 5.1.2:
4. Նորադարձների պահպանում: Վերանայեք «Նոր և վերադարձող անդամի առաջընթաց» ձևի վրա նշված յուրաքանչյուր նոր անդամի առաջընթացը. ուղիներ

նախանշեք օգնելու համար նրանց շարունակել իրենց առաջընթացը (տես 5.2.3):

5. Ակտիվացում: Վերանայեք «Նոր և վերադարձող անդամի առաջընթաց» ձևի վրա նշված քիչ-ակտիվ անդամների առաջընթացը և անդամության կարգավիճակը. ուղիներ նախանշեք օգնելու համար նրանց շարունակել իրենց առաջընթացը (տես 5.3.2):
6. Տաճար և ընտանեկան պատմություն: Վերանայեք առանձին անդամների առաջընթացը, որոնք պատրաստվում են ստանալ տաճարային արարողությունները: Եթե եպիսկոպոսը անհրաժեշտ է համարում, քննարկեք, թե ինչպես կարելի է խրախուսել անդամներին ավելի լիարժեք մասնակցել տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքներին: Լրացուցիչ տեղեկության համար տես 5.4.2:
7. Ավետարանի ուսումնասիրություն և ուսուցանում: Քննարկեք, թե ինչպես կարելի է բարելավել ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցանումը Եկեղեցում և տանը (տես 5.5.2):
8. Հաշվետվություններ երեցների քվորումի, քահանայապետերի խմբի և օժանդակ կազմակերպությունների աշխատանքի վերաբերյալ: Ժողովի այս մասը պետք է լինի շատ համառոտ, որպեսզի խորհուրդը չշեղվի անձերի վրա կենտրոնանալու իր հիմնական խնդրից:
9. Օրացույց և միջոցառումների ծրագրավորում՝ օգնելու համար հոգալ ծխի անդամների հոգևոր, նյութական և սոցիալական կարիքները (տես գլուխ 13):
10. Մշտական Կրթական Հիմնադրամ (այն վայրերում, որտեղ ծրագիրը հաստատված է): Վերանայեք ծրագրի մասնակիցների առաջընթացը:
11. Եզրափակիչ հրահանգներ եպիսկոպոսությունից:

4.6.3 Գործողությունների իրականացում

Ծխի խորհուրդը ոգեշնչում է փնտրում, երբ մշակում է գործողությունների ծրագիր՝ անդամների կյանքն օրհնելու համար: Խորհուրդը կենտրոնանում է մարդկանց օգնելու, ոչ թե՝ ծրագրերը կառավարելու վրա:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները իրենց ղեկավարության ժողովներին վերանայում են ծխի խորհրդի որոշումները և ավելացնում են իրենց կազմակերպությունների մյուս ղեկավարների և ուսուցիչների օգնությունը՝ խորհրդի հանձնարարությունները կատարելու համար: Նմանապես, ծխի միսիայի ղեկավարը անց է կացնում միսիոներների համակարգման ժողով՝ լիաժամկետ միսիոներների և ծխի միսիոներների մասնակցությամբ՝ ծխի խորհրդի որոշումները իրականացնելու համար: Այս աշխատանքը, որը կատարվում է կազմակերպությունների ներսում, ծխի խորհրդի ոգու և նպատակի շարունակությունն է հանդիսանում:

Գործողությունների իրականացման ընթացքում, խորհրդի անդամները պետք է զգույշ լինեն, որպեսզի չծանրաբեռնեն անձանց և ընտանիքներին (տես Մոսիա 4.27; ՎևՈւ 10.4): Յուրաքանչյուր անդամի առաջնահերթությունը նրա ընտանիքն է: Ծխի խորհուրդը հետևում է, որպեսզի պատշաճ հավասարակշռություն տիրի անդամի ընտանեկան պարտականությունների և Եկեղեցում նրա պատասխանատվությունների միջև:

Ծխի խորհրդի անդամները պարբերաբար գնահատում են գործողությունների իրականացմանընթացքը և զեկուցում իրենց հանձնարարությունների մասին: Հիմնականում, առաջընթացը պահանջում է հետևողական ուշադրություն և հանձնարարությունների կատարման վերահսկում:

4.6.4 Ծխի գործավարի պարտականությունները

Ծխի գործավարը վարում է ծխի խորհրդի ժողովներին տրված հանձնարարությունների և կայացրած որոշումների հաշվառումը: Նա հետևում է, որպեսզի այդ տեղեկությունը, որն օգտագործում է ծխի խորհուրդը, լինի ճշգրիտ և թարմացված: Նա տրամադրում է «Նոր և վերադարձող անդամի առաջընթաց» ձևի վերջին օրինակները: Նա նաև Եկեղեցու գրառումների պահպանման ծրագրից տրամադրում է համապատասխան վիճակագրական տեղեկություն: Նա իր նախաձեռնությամբ եպիսկոպոսությանը և ծխի խորհրդի անդամներին տրամադրում է այդ աղբյուրներից գտած իր տեղեկությունը, չսպասելով, որ նրանք խնդրեն այդ մասին:

Ծխի գործավարի այլ պարտականությունները նշված են *Handbook 1,* 13.4.2-ում:

4.6.5 Գործադիր քարտուղարի պարտականությունները

Գործադիր քարտուղարը պատրաստում է ծխի խորհրդի ժողովների օրակարգերը, ինչպես նկարագրվում է 4.6.2-ում: Եպիսկոպոսը նաև կարող է խնդրել նրան օգնել իրեն

հետևել ծխի խորհրդի անդամների հանձնարարությունների կատարման ընթացքին: Բացի դա, եպիսկոպոսը կարող է խնդրել նրան ծխի խորհրդի անդամներից ստանալ հաշվետվություններ հետաքրքրվողների, նոր անդամների, ակտիվությանը վերադարձող անդամների և այլ հարցերի վերաբերյալ:

Գործադիր քարտուղարը կարող է ապահովել կապը ծխի խորհրդի և քահանայության գործադիր հանձնախմբի միջև:

Ծխի գործադիր քարտուղարի այլ պարտականությունները նկարագրվում են *Handbook 1,* 13.4.4-ում:

5. Փրկության աշխատանքը ծխում և ցցում

5.1 **Անդամների միսիոներական աշխատանքը . . 22**
- 5.1.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները . . . 22
- 5.1.2 Ծխի խորհուրդ 22
- 5.1.3 Ծխի միսիայի ղեկավար 22
- 5.1.4 Ծխի միսիոներներ 23
- 5.1.5 Միսիոներների համակարգման ժողով 23
- 5.1.6 Անդամների և լիաժամկետ միսիոներների միասնական աշխատանքը 23
- 5.1.7 Մկրտության ծառայություններ և հաստատումներ 23
- 5.1.8 Ծխի միսիայի ծրագիր 23
- 5.1.9 Ցցի ղեկավարներ 24

5.2 **Նորադարձների պահպանում. 24**
- 5.2.1 Նոր անդամների կարիքները 24
- 5.2.2 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները . . . 24
- 5.2.3 Ծխի խորհուրդ 25
- 5.2.4 Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ 25
- 5.2.5 Տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ . 25
- 5.2.6 Ծխի միսիոներներ և լիաժամկետ միսիոներներ. 25
- 5.2.7 Ծխի մյուս անդամների ազդեցությունը 25
- 5.2.8 Ավետարանի սկզբունքների դասարան 26
- 5.2.9 Ցցի ղեկավարներ 26

5.3 **Ակտիվացում 26**
- 5.3.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները . . . 26
- 5.3.2 Ծխի խորհուրդ 27
- 5.3.3 Տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ . . .27
- 5.3.4 Ծխի միսիոներներ և լիաժամկետ միսիոներներ. 27
- 5.3.5 Ավետարանի սկզբունքների դասարան 27
- 5.3.6 Ցցի ղեկավարներ 27

5.4 **Տաճար և ընտանեկան պատմություն 27**
- 5.4.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները . . . 28
- 5.4.2 Ծխի խորհուրդ 28
- 5.4.3 Քահանայապետերի խմբի ղեկավար. 28
- 5.4.4 Ընտանեկան պատմության խորհրդատուներ. 28
- 5.4.5 Տաճարային և Ընտանեկան պատմության դասարաններ և աղբյուրներ. 28
- 5.4.6 Ցցի ղեկավարներ 29
- 5.4.7 Տաճարային և ընտանեկան պատմության աղբյուրներ ցցում 29

5.5 **Ուսուցանել ավետարանը 30**
- 5.5.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները . . . 30
- 5.5.2 Ծխի խորհուրդ 30
- 5.5.3 Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ 30
- 5.5.4 Ուսուցիչներ և ղեկավարներ 31
- 5.5.5 Ծխի կիրակնօրյա դպրոցի նախագահը և նրա խորհրդականները. 31
- 5.5.6 Տպագիր և առցանց աղբյուրներ ուսումնասիրության և ուսուցանման համար 31
- 5.5.7 Ավետարանի ուսուցանման դասընթաց. . . . 31
- 5.5.8 Ցցի նախագահը և նրա խորհրդականները . .31

5. Փրկության աշխատանքը ծխում և ցցում

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամները ուղարկվում են «որպեսզի աշխատեն նրա այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար» (ՎևՈւ 138.56)։ Փրկության այս աշխատանքը ներառում է միսիոներական աշխատանքը, նորադարձների պահպանումը, քիչ-ակտիվ անդամների ակտիվացումը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը և ավետարանի ուսուցանումը։ Եպիսկոպոսությունը ղեկավարում է այս աշխատանքը ծխում, նրան օգնում են ծխի խորհրդի մյուս անդամները։

Թեև եպիսկոպոսը կրում է այս հարցերում վերջնական պատասխանատվությունը, ծխի միսիայի ղեկավարը համակարգում է անդամների միսիոներական աշխատանքը, քահանայապետերի խմբի ղեկավարը համակարգում է տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը, և կիրակնօրյա դպրոցի նախագահը օգնում է ծխի մյուս ղեկավարներին՝ բարելավել ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցանումը։ Եպիսկոպոսը կարող է հանձնարարել իր խորհրդականներից մեկին համակարգել նորադարձների պահպանման աշխատանքը, իսկ մյուսին՝ ակտիվացման աշխատանքը։ Քահանայության կամ օժանդակ կազմակերպության յուրաքանչյուր ղեկավար օգնում է առաջ տանել փրկության աշխատանքը՝ իր կազմակերպության ներսում։

5.1 Անդամների միսիոներական աշխատանքը

5.1.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները

Եպիսկոպոսը ղեկավարում է ծխի խորհուրդը՝ ծխի միսիայի ծրագիրը պատրաստելու և դրան հետևելու հարցում, ինչպես նկարագրված է 5.1.8-ում։

Եպիսկոպոսը կանչում և ձեռնադրում է Մելքիսեդեկյան Քահանայության կրողի՝ որպես ծխի միսիայի ղեկավար։ Եպիսկոպոսը և նրա խորհրդականները կարող են կանչել և ի սպաս դնել այլ անդամների, որոնք կծառայեն որպես ծխի միսիոներներ։

Եպիսկոպոսը և նրա խորհրդականները առաջնահերթություն են տալիս անդամների միսիոներական աշխատանքին։ Նրանք կանոնավոր ուսուցանում են միսիոներական աշխատանքի վարդապետությունը։ Նրանք խրախուսում են ծխի անդամներին աշխատել լիաժամկետ միսիոներների հետ, գտնելով, ուսուցանելով և մկրտելով հետաքրքրվողների։ Նրանք օրինակ են ծառայում, գտնելով և պատրաստելով անհատներին և ընտանիքներին միսիոներների կողմից ուսուցանվելուն։

Եպիսկոպոսը և նրա խորհրդականները օգնում են ապագա լիաժամկետ միսիոներներին, ներառյալ՝ քույրերին և զույգերին, պատրաստվել միսիայում ծառայելուն։

5.1.2 Ծխի խորհուրդ

Անդամների միսիոներական աշխատանքը առավել արդյունավետ է, երբ ծխի խորհրդի անդամները լիովին ընդգրկված են միսիոներական աշխատանքի մեջ։ Քվորումներում և օժանդակ կազմակերպություններում, նրանք խրախուսում են անդամներին մասնակցել միսիոներական աշխատանքին հետևյալ կերպ.

1. Գտնել և պատրաստել մարդկանց ուսուցանմանը։
2. Օգնել միսիոներներին ուսուցանելիս (եթե հնարավոր է, անդամների տներում)։
3. Ընկերակցել հետաքրքրվողներին։
4. Պատրաստվել և պատրաստել իրենց երեխաներին որպես լիաժամկետ միսիոներներ ծառայելուն։

Ծխի խորհրդի ժողովներին, խորհրդի անդամները մշակում և վերանայում են ծխի միսիայի ծրագիրը (տես 5.1.8)։ Նրանք դիտարկում են մկրտության թեկնածուներին, այլ հետաքրքրվողներին և այլ հարցեր, որոնք հիմնված են միսիոներների կողմից պատրաստած Առաջընթացի Հաշվետվության վրա։ Նրանք ծրագրեր են կազմում՝ օգնելու համար յուրաքանչյուր հետաքրքրվողին առաջ գնալ։ Նրանք խորհուրդ են տալիս հետաքրքրվողների համար տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ նշանակել, որոնք կօգնեն նրանց պատրաստվել մկրտությանը և հաստատմանը։

Ծխի միսիայի ղեկավարի առաջարկությամբ, եպիսկոպոսը կարող է ժամանակ առ ժամանակ ծխի խորհրդին հրավիրել լիաժամկետ միսիոներներին։

5.1.3 Ծխի միսիայի ղեկավար

Եպիսկոպոսի ղեկավարությամբ ծխի միսիայի ղեկավարը կրում է հետևյալ պարտականությունները.

Նա համակարգում է ծխի ջանքերը, որոնք ուղղված են հետաքրքրվողներ գտնելուն, նրանց ուսուցանելուն և մկրտելուն: Նա համակարգում է այս աշխատանքը լիաժամկետ միսիոներների և ծխի միսիոներների հետ: Ծխի խորհրդի ժողովներին եպիսկոպոսը կարող է խնդրել նրան վարել միսիոներական աշխատանքի քննարկումները:

Նա վարում է միսիոներների համակարգման ժողովները և ղեկավարում ծխի միսիոներների աշխատանքը:

Նա լիաժամկետ միսիոներների համար ամեն շաբաթ, որքան հնարավոր է շատ ուսուցանման հնարավորություններ է ապահովում:

Լիաժամկետ միսիոներների օգնությամբ, նա կազմակերպում է նորադարձների մկրտության ծառայությունները (տես 20.3.4):

Նա օգնում է համակարգել նոր անդամների հաստատումները հաղորդության ժողովների ժամանակ:

Լիաժամկետ միսիոներների հետ միասին նա մասնակցում է հետաքրքրվողների ուսուցանման և ընկերակցման ջանքերին:

Նա հաճախում է Ավետարանի սկզբունքների դասարան և կարող է ուսուցանել, եթե հանձնարարություն է ստանում եպիսկոպոսությունից:

Որպես ծխի միսիայի ղեկավարի օգնական կարող է կանչվել Մելքիսեդեկյան Քահանայության կրող:

5.1.4 Ծխի միսիոներներ

Եպիսկոպոսությունը և ծխի միսիայի ղեկավարը որոշում են, թե քանի միսիոներներ են հարկավոր ծխում: Ծխի միսիոներները ծառայում են նրանց ղեկավարությամբ: Քահանայություն կրողները, քույրերը, ամուսնացած զույգերը կարող են ծառայել որպես ծխի միսիոներներ: Նրանք կարող են չունենալ իրենց նշանակված զուգընկերներ, սակայն չպետք է միայնակ այցելեն տները: Տղամարդը և կինը միասին չեն այցելում որպես ծխի միսիոներներ, եթե ամուսիններ չեն:

Ծխի միսիոներները կանչվում են ծառայության որոշակի ժամանակահատվածով, օրինակ՝ երկու տարով: Սովորաբար, նրանք չեն կրում Եկեղեցու այլ պարտականություններ, բացի մասամբ անդամության կամ քիչ-ակտիվ ընտանիքների համար տնային կամ այցելող ուսուցիչների հանձնարարությունից: Նրանք չեն կրում անվանական կրծքանշաններ:

Ծխի միսիոներները գտնում և պատրաստում են մարդկանց լիաժամկետ միսիոներների կողմից ուսուցանվելուն: Նրանք նաև օգնում են հետաքրքրվողներին ընկերակցելու և ուսուցանելու հարցերում:

Ծխի միսիոներները այցելում են անդամներին տներում և խրախուսում նրանց միսիոներական փորձառություն ձեռք բերել, գտնելով մարդկանց, որոնց միսիոներները կարող են ուսուցանել, և պատրաստելով մարդկանց ուսուցանմանը:

5.1.5 Միսիոներների համակարգման ժողով

Ծխի միսիայի ղեկավարը վարում է միսիոներների համակարգման ժողովը ծխի միսիոներների և լիաժամկետ միսիոներների հետ: Ժողովը անց է կացվում պարբերաբար: Եթե լիաժամկետ միսիոներները ծառայում են մի քանի ծխերում, նրանք հաճախում են այնքան հաճախ, որքան պայմանները թույլ են տալիս:

Այս ժողովին, ծխի միսիայի ղեկավարը համակարգում է լիաժամկետ միսիոներների և ծխի անդամների աշխատանքը: Ծխի միսիայի ղեկավարը կարող է նաև ղեկավարել քննարկումներ ծխի միսիայի ծրագրի իրականացման հետ կապված, միսիոներների համար նշանակելով որքան հնարավոր է շատ ուսուցանման հանդիպումներ և պայմանավորվելով, որ անդամները ներկա լինեն որքան հնարավոր է հաճախ, երբ հետաքրքրվողները ուսուցանվում են:

5.1.6 Անդամների և լիաժամկետ միսիոներների միասնական աշխատանքը

Միսիայի նախագահը կրում է նորադարձներին մկրտելու և հաստատելու բանալիները: Նրա ղեկավարությամբ, լիաժամկետ միսիոներները հետաքրքրվողներին ուսուցանելու առաջնային պատասխանատվությունն են կրում: Լիաժամկետ միսիոներները նաև վարում են մկրտության և հաստատման հարցազրույցները յուրաքանչյուր թեկնածուի հետ և լիազորում են արարողությունի կատարումը:

Եպիսկոպոսը ծանոթանում է բոլոր հետաքրքրվողների հետ և հետևում նրանց առաջընթացին: Թեև նա հարցազրույց չի անցկացնում մկրտության թեկնածուների հետ, մկրտությունից առաջ նա անձամբ հանդիպում է նրանց հետ: Նա նաև վերահսկում է նրանց հետ ընկերակցելու ծխի անդամների ջանքերը: Հետաքրքրվողների մկրտվելու, հաստատվելու և ակտիվ մնալու հավանականությունը ավելի մեծ կլինի, եթե նրանք ամուր ընկերակցական կապեր ունենան Եկեղեցու անդամների հետ:

Սովորաբար, լիաժամկետ միսիոներների զույգերը չեն առանձնանում ծխի անդամների հետ աշխատելու համար: Սակայն, նրանք կարող են առանձնանալ, եթե անդամների հետ աշխատանքը պահանջում է մեծ թվով ուսուցանման հանդիպումներ անցկացնել: Նման դեպքերում, ծխի միսիայի ղեկավարը հետևում է, որ նրանք, ովքեր աշխատում են որպես լիաժամկետ միսիոներների զուգընկերներ, հասկանան և ընդունեն միսիայի կանոնները: Նա նրանց հրահանգում է, որ նրանք երբեք չպետք է թողնեն լիաժամկետ միսիոներին առանց լիազորված զուգընկերոջ:

5.1.7 Մկրտության Ծառայություններ և հաստատումներ

Երբ հետաքրքրվողը մկրտվելու վճիռ է կայացնում, անմիջապես պետք է մկրտության ծառայության օր նշանակել: Ծառայությունները, սովորաբար, չեն հետաձգվում, եթե անձը պատրաստ է: Ընտանիքի անդամների մկրտությունները չպետք է հետաձգվեն այն պատճառով, որ հայրը քահանայություն ստանա և կատարի մկրտությունը:

Մկրտության ծառայությունը հնարավորություն է տալիս գտնել և խրախուսել այլ հետաքրքրվողների: Նորադարձները պետք է խրախուսվեն հրավիրելու իրենց ընտանիքների անդամներին, բարեկամներին և ընկերներին: Եկեղեցու ղեկավարները և միսիոներները կարող են նաև հրավիրել այլ հետաքրքրվողների, որոնք այդ պահին ուսուցանվում են, նաև հնարավոր հետաքրքրվողների, ղեկավարների և անդամների, որոնք պետք է աշխատեն նոր անդամների հետ: Ծխի այլ անդամներ նույնպես կարող են ներկա լինել:

Նորադարձները հաստատվում են հաղորդության ժողովին՝ այն ծխում, որտեղ ապրում են, նախընտրելի է՝ իրենց մկրտությանը հաջորդող կիրակի օրը:

Մկրտության ծառայությունների և հաստատումների համար ուղեցույցները, ներառյալ 8 տարեկանների մկրտության ծառայությունների և հաստատումների համար ուղեցույցները, տրվում են 20.3-ում:

5.1.8 Ծխի միսիայի Ծրագիր

Եպիսկոպոսի ղեկավարությամբ, ծխի խորհուրդը մշակում է ծխի միսիայի ծրագիր: Ծրագիրը պետք է լինի հակիրճ և պարզ: Այն պետք է ներառի որոշակի նպատակներ և միջոցառումներ, որոնք կօգնեն ծխի քահանայության և օժանդակ կազմակերպությունների անդամներին մասնակցել անդամների միսիոներական աշխատանքին, նորադարձների պահպանմանը և ակտիվացմանը: Ծխի խորհուրդը համակարգում է ծխի միսիայի ծրագիրը՝ ծխին կցված լիաժամկետ միսիոներների ծրագրերի հետ: Ծրագրավորման այդ գործընթացում հետևյալ քայլերը օգտակար կլինեն.

1. Դիտարկեք ծխի կարիքները և միջոցները՝ անդամների միսիոներական աշխատանքի, պահպանման և ակտիվացման հետ կապված, ներառյալ՝ լիաժամկետ միսիոներների առկայությունը:
2. Որոշակի նպատակներ սահմանեք անդամների միսիոներական աշխատանքի, պահպանման և ակտիվացման համար, որոնք պետք է իրականացնել հաջորդ տարի:
3. Որոշեք, թե ինչպես եք իրականացնելու այդ նպատակները: Ղեկավարները կարող են ծրագրել բարձրացնել ծխի ընդհանուր պատկերացումը միսիոներական աշխատանքի մասին և լավացնել վերաբերմունքը: Նրանք կարող են մտքեր առաջարկել միջոցառումների համար, որոնք կօգնեն լիաժամկետ միսիոներներին գտնել, ուսուցանել և մկրտել թվով ավելի շատ հետաքրքրվողներ: Նրանք կարող են նաև ծրագրավորել ուղիներ՝ նոր անդամների հետ ընկերանալու և նրանց ամրացնելու, նաև քիչ-ակտիվ անդամներին ակտիվացնելու համար:

Ծխի խորհուրդը պարբերաբար վերանայում է ծխի միսիայի ծրագիրը և փոփոխում այն, եթե անհրաժեշտ է:

5.1.9 Ցցի ղեկավարներ

Ցցի նախագահը և նրա խորհրդականները

Ցցի նախագահը և նրա խորհրդականները առաջնահերթությունը տալիս են միսիոներական աշխատանքին: Նրանք կանոնավոր ուսուցանում են միսիոներական աշխատանքի վարդապետությունը և խրախուսում են ցցի անդամներին աշխատել լիաժամկետ միսիոներների հետ, գտնելով, ուսուցանելով և մկրտելով հետաքրքրվողների: Նրանք օրինակ են ծառայում, գտնելով և պատրաստելով անհատներին և ընտանիքներին միսիոներների կողմից ուսուցանվելուն:

Յուրաքանչյուր եպիսկոպոսի հետ իր պարբերական հարցազրույցների ժամանակ, ցցի նախագահը խնդրում է ներկայացնել

եպիսկոպոսի ցցի հետաքրքրվողների առաջընթացի մասին հաշվետվություն:

Ցցի նախագահը կանոնավոր հանդիպում է միսիայի նախագահի հետ՝ համակարգելու համար ցցում լիաժամկետ միսիոներների աշխատանքը: Քննարկման հարցերն են՝ միսիոներների քանակը և վայրը, անդամների դերը միսիոներական աշխատանքում, միսիոներների աջակցությունը՝ պահպանման և ակտիվացման ջանքերում, միսիոներների աջակցությունը՝ տեղի անդամների ուսուցման հարցում, նաև միսիոներների սննդի, բնակարանի և տրանսպորտի հարցերը:

Բարձրագույն խորհրդական, որը կցվում է միսիոներական աշխատանքին

Ցցի նախագահությունը նշանակում է միսիոներների գծով բարձրագույն խորհրդական, որն օգնում է գտնել, ուսուցանել, մկրտել և հաստատել հետաքրքրվողների: Այս բարձրագույն խորհրդականը կարող է վարել քննարկումներ այս հարցերի շուրջ քահանայության գործադիր հանձնախմբի ժողովներին, ցցի խորհրդի ժողովներին, ցցի քահանայության ղեկավարների ժողովներին և ցցի այլ ժողովներին:

Միսիոներական աշխատանքին կցված բարձրագույն խորհրդականը ուսուցանում է ծխի միսիայի նոր կանչված ղեկավարներին: Նա նաև ընթացիկ հրահանգավորում է անցկացնում ծխի միսիայի բոլոր ղեկավարների համար և խրախուսում նրանց՝ անհատապես և որպես խումբ: Ցցի նախագահի հաստատմամբ, նա կարող է ուսուցանել ծխի ղեկավարներին և ծխի միսիոներներին:

5.2 Նորադարձների պահպանում

Եկեղեցու նոր անդամները ունեն Եկեղեցու ղեկավարների, տնային ուսուցիչների, այցելող ուսուցիչների և մյուս անդամների աջակցության և ընկերակցության կարիքը: Այդ աջակցությունը օգնում է նոր անդամներին հաստատակամորեն «դարձի գալ դեպի Տերը» (Ալմա 23.6):

5.2.1 Նոր անդամների կարիքները

Եկեղեցու անդամությանը անցնելը մարդկանց մեծամասնության համար դժվար ընթացք է: Այն հաճախ կապված է կրոնական նոր ուսմունքներ ընդունելու և կյանքի նոր ուղի որդեգրելու հետ: Եկեղեցու բոլոր անդամները, հատկապես նոր անդամները, երեք բանի կարիք ունեն, որոնք կօգնեն նրանց ակտիվ մնալ Եկեղեցում՝ ընկերության, հասունանալու և Եկեղեցում ծառայելու հնարավորության և Աստծո խոսքով սնվելու կարիք (տես Մորոնի 6.4): Եպիսկոպոսության ղեկավարությամբ, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները օգնում են անդամներին այս բնագավառներում:

5.2.2 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները

Եպիսկոպոսը ընդհանուր պատասխանատվություն է կրում նորադարձների պահպանման համար: Օգնելու համար նոր անդամներին ակտիվ մնալ Եկեղեցում, եպիսկոպոսը և նրա խորհրդականները կատարում են հետևյալ պարտականությունները: Եպիսկոպոսը կարող է հանձնարարել իր խորհրդականներից մեկին համակարգել այդ ջանքերը:

Նրանք հետևում են, որպեսզի յուրաքանչյուր նոր անդամ ընկերակցության արժանանա:

Նրանք հետևում են, որ յուրաքանչյուր նոր չափահաս անդամ կոչում և ծառայելու հնարավորություններ ստանա:

Նրանք հետևում են, որ 12 տարեկան և բարձր տարիքի եղբայրները, իրենց հաստատումից հետո, սովորաբար, մեկ շաբաթվա ընթացքում, կարգվեն Ահարոնյան Քահանայության համապատասխան պաշտոնի: Նրանք նաև հետևում են, որ այդ եղբայրները ստանան քահանայությունը օգտագործելու հնարավորություններ: Այն եղբայրները, ովքեր արժանի են մկրտվելու և հաստատվելու, արժանի են նաև Ահարոնյան Քահանայությունը ստանալու:

Եպիսկոպոսը և նրա խորհրդականները ղեկավարում են քահանայապետերի խմբի ղեկավարի և երեցների քվորումի նախագահի աշխատանքը, օգնելով 18 տարեկան և բարձր տարիքի եղբայրներին Մելքիսեդեկյան Քահանայություն ստանալ: 18 տարեկան և բարձր տարիքի վերջերս մկրտված եղբայրները կարգվում են որպես երեցներ նրանից հետո, երբ ծառայել են որպես քահանաներ, զարգացրել են ավետարանի մասին բավարար գիտելիքներ և ապացուցել են իրենց արժանավորությունը: Անդամ լինելու որոշակի ժամանակահատված չի պահանջվում:

5.2.3 Ծխի խորհուրդ

Ծխի խորհրդի ժողովներին, խորհրդի անդամները վերանայում են իրենց նպատակները նորադարձների պահպանման հետ կապված, ինչպես տրված է ծխի միսիայի ծրագրում (տես 5.1.8): Նրանք քննարկում են յուրաքանչյուր նոր անդամի առաջընթացը և

պարզում, թե ինչպիսի աջակցություն է պահանջվում: Նրանք կարող են օգտվել «Նոր և Վերադարձող Անդամի Առաջընթացի» ձևից և ղեկավարվել դրանով այդ քննարկման ժամանակ: Նրանք առաջարկում են ճանապարհներ՝ օգնելու համար նոր անդամներին զգալ մյուս անդամների սերը, Տիրոջ արքայությունում ծառայելու ուրախությունը և ավետարանի սկզբունքներով ապրելու արդյունքում եկող խաղաղությունը:

Ծխի խորհուրդը կարող է քննարկել եղանակներ, որոնցով ծխի միսիայի ղեկավարը կարող է աշխատել քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների հետ՝ նորադարձներին ամրացնելու ուղղությամբ: Ծխի խորհրդի անդամները կարող են նաև առաջարկել ծառայության հնարավորություններ նոր անդամների համար, ինչպես օրինակ՝ տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը:

5.2.4 Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ

Եպիսկոպոսության ղեկավարությամբ, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները հնարավորություններ են ստեղծում նոր անդամների համար՝ հոգեպես հասունանալու և Եկեղեցում ակտիվ մնալու համար: Օրինակ, Սփոփող Միության նախագահը պատասխանատու է չափահաս կին նորադարձներին աջակցելու համար: Քանի որ չափահաս տղամարդ նորադարձը ապագա երեց է, ապա նրա առաջընթացի համար պատասխանատու է երեցների քվորումի նախագահը կամ քահանայապետերի խմբի ղեկավարը, ինչպես կորոշի եպիսկոպոսությունը: Երբ ընտանիքից ավելի քան մեկ անդամ է միանում Եկեղեցուն, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները համակարգում են իրենց ջանքերը ծխի խորհրդի ժողովներին:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները կարող են օգնել նոր անդամներին հետևյալ ճանապարհներով.

Նրանք օգնում են նոր անդամներին հասկանալ և կիրառել միսիոներական դասերի վարդապետությունները և սկզբունքները:

Նրանք հետևում են, որ նոր անդամները սովորեն Եկեղեցու հիմնական գործերը, ինչպիսիք են՝ վկայություն բերելը, տասանորդ և այլ նվիրատվություններ վճարելը, ծոմի օրենքով ապրելը, ելույթ ունենալը, քահանայության արարողություններ կատարելը, ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցելը, մահացածների համար մկրտություններ և հաստատումներ կատարելը (որտեղ որ հնարավոր է), և որպես տնային ուսուցիչ կամ այցելող ուսուցիչ ծառայելը:

Նրանք հետևում են, որպեսզի նոր անդամներին մատչելի լինեն սուրբ գրությունները, Եկեղեցու ամսագրերը և ձեռնարկները, որոնք նրանց պետք են Եկեղեցու դասերին մասնակցելու համար:

Եթե նոր անդամները սեմինարիայի կամ ինստիտուտի տարիքի են, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները օգնում են նրանց ընդգրկվել այդ ծրագրերում:

Երբ նոր անդամների տաճարային արարողություններ ստանալու ժամանակը մոտենում է, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները օգնում են նրանց պատրաստվել՝ տաճարային նախապատրաստության սեմինարի միջոցով կամ այլ եղանակներով:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները կարող են հանձնարարել փորձառու անդամներին օգնել ընկերակցել նոր անդամներին: Ղեկավարները կարող են հանձնարարել դա այն անդամներին, ովքեր միանման հետաքրքրություններ ունեն կամ նույն խնդիրների են հանդիպել:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները (կամ նրանց կողմից հանձնարարված անդամները) ամեն շաբաթ նշում են, թե արդյոք վերջերս մկրտված անդամները, որոնք պատկանում են իրենց քվորումին կամ օժանդակ կազմակերպությանը, ներկա են հաղորդության ժողովին: Նրանք հանձնարարում են այցելել նրանց, ովքեր չեն հաճախում, և հրավիրել նրանց հաջորդ շաբաթ:

5.2.5 Տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ

Տնային ուսուցիչները և այցելող ուսուցիչները կարևոր պատասխանատվություններ ունեն՝ նոր անդամների հետ ընկերանալու հարցում: Եպիսկոպոսի հետ խորհրդակցելով, Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները մեծ առաջնահերթություն են տալիս նոր անդամներին նվիրված տնային և այցելող ուսուցիչներ նշանակելու հարցին:

Միսիայի նախագահի լիազորությամբ, լիաժամկետ միսիոներները կարող են օգնել՝ նոր անդամներին տնային կամ այցելությամբ ուսուցանման հարցում:

5.2.6 Ծխի միսիոներներ և լիաժամկետ միսիոներներ

Չնայած պահպանումը հիմնականում ծխի քահանայության կամ օժանդակ կազմակերպությունների ղեկավարների պատասխանատվությունն է, ծխի միսիոներները և լիաժամկետ միսիոներները աջակցում են այս աշխատանքում: Ծխի միսիոներները բոլոր նոր անդամներին կրկին ուսուցանում են առաջին չորս միսիոներական դասերը (տես *Քարոզիր Իմ Ավետարանը,* գլուխ 3): Նրանք նաև ուսուցանում են դաս 5-ը: Ծխի միսիոներներին կարող են օգնել լիաժամկետ միսիոներները, եթե կա դրա անհրաժեշտությունը:

5.2.7 Ծխի մյուս անդամների ազդեցությունը

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները խրախուսում են ծխի անդամներին ամրացնել նոր անդամներին՝ նրանց հանդեպ սեր ցուցաբերելով և նրանց հետ ընկերանալով: Ղեկավարները կարող են խրախուսել ծխի անդամներին հրավիրել նորադարձներին իրենց ընտանեկան տնային երեկոներին, Եկեղեցու ժողովներին, դասերին և միջոցառումներին, անհրաժեշտության դեպքում, ապահովելով նրանց տրանսպորտով:

5.2.8 Ավետարանի սկզբունքների դասարան

18 տարեկան և բարձր տարիքի նոր անդամները Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ հաճախում են Ավետարանի սկզբունքների դասարան: Նոր անդամները սովորաբար հաճախում են Ավետարանի սկզբունքների դասարան մի քանի ամիս: Երբ պատրաստ են, նրանք հաճախում են Ավետարանի վարդապետության դասարան:

Ծխի միսիայի ղեկավարը հաճախում է Ավետարանի սկզբունքների դասարան: Նա համակարգում է ծխում այդ դասարանի և պահպանման աշխատանքները: Եպիսկոպոսության անդամը կարող է հանձնարարել նրան ուսուցանել այդ դասարանում: Ծխի մյուս միսիոներները նույնպես կարող են ներկա լինել:

Տնային ուսուցիչները, այցելող ուսուցիչները և այլ անդամներ կարող են հաճախել դասի՝ ընկերություն հաստատելու համար: Երբեմն, ուսուցիչը կարող է հրավիրել ծխի այլ անդամների, որոնք կարող են կիսվել իրենց փորձով և վկայություններով: Օրինակ, ուսուցիչը կարող է հրավիրել ծխի անդամներին կիսվել իրենց վկայություններով տասանորդի օրհնություններով, խնդիրները հաղթահարելու իրենց փորձառություններով կամ օրհնություններով, որոնք ստացել են Եկեղեցու կոչումները կատարելիս:

Այս դասընթացի ուսուցիչները ունեն հետևյալ պարտականությունները.

Նրանք ընտրում և ուսուցանում են դասեր *Ավետարանի սկզբունքները* ձեռնարկից: Ուսուցանելիս նրանք հաճախ օգտագործում են սուրբ գրությունները, հատկապես՝ Մորմոնի Գիրքը: Նրանք հարմարեցնում են դասերը դասարանի անդամների կարիքներին և հրավիրում են դասարանի անդամներին կիսվել իրենց մտքերով և փորձառություններով:

Նրանք ստեղծում են այնպիսի մթնոլորտ, որը հրավիրում է Հոգին: Նրանք հաճախ բերում են իրենց վկայությունը:

Նրանք խրախուսում են դասարանի անդամներին կանոնավոր կարդալ Մորմոնի Գիրքը և կիսվել իրենց տպավորություններով:

5.2.9 Ցցի ղեկավարներ

Ցցի նախագահը և նրա խորհրդականները

Ցցի նախագահության անդամները վերահսկում են ցցում նոր անդամներին ամրացնելու աշխատանքը: Նրանք ուսուցանում և խրախուսում են մյուս ղեկավարներին այդ գործում: Նրանք հանդիպում են նոր անդամներին, երբ այցելում են ծխեր: Ժամանակ առ ժամանակ, նրանք կարող են նոր անդամների համար ժողովներ անցկացնել՝ ցցի համաժողովի շրջանակներում:

Եպիսկոպոսի հետ իր հերթական հարցազրույցի ժամանակ, ցցի նախագահը խնդրում է ներկայացնել եպիսկոպոսի ծխի նոր անդամների առաջընթացի հաշվետվությունը:

Միսիայի նախագահի հետ իր հերթական ժողովի ժամանակ, ցցի նախագահը կարող է զեկուցել ցցի նոր անդամների առաջընթացի մասին:

Բարձրագույն խորհրդականներ

Բարձրագույն խորհրդականները, որոնք աշխատում են ծխի Մելքիսեդեկյան Քահանայության ղեկավարների հետ, և բարձրագույն խորհրդականները, որոնք աշխատում են ծխի միսիայի ղեկավարների հետ, կարող են օգնել ուսուցանել և ընկերակցել նոր անդամներին: Նրանք կարող են նաև օգնել ապագա երեցներին պատրաստվել ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն:

Ցցի օժանդակ կազմակերպությունների նախագահությունները

Ցցի օժանդակ կազմակերպությունների նախագահությունները կարող են երբեմն աշխատել ծխի օժանդակ կազմակերպությունների ղեկավարների հետ, ուսուցանելով և ընկերակցելով նոր անդամներին:

5.3 Ակտիվացում

Ծխի քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները շարունակ աշխատում են օգնել քիչ-ակտիվ անդամներին վերադառնալ Եկեղեցու ակտիվությանը: Փրկիչն ասել է. «այդպիսիներին դուք պետք է շարունակեք ծառայել. քանզի դուք չգիտեք, միգուցե նրանք վերադառնան ու ապաշխարեն, և գան ինձ մոտ սրտի ողջ նվիրվածությամբ, և ես կբժշկեմ նրանց. և դուք կլինեք նրանց փրկության բերելու միջոցը»: (3 Նեփի 18.32):

Քիչ-ակտիվ անդամները, սովորաբար, դեռ հավատում են ավետարանին, սակայն, հնարավոր է, դժվար փորձությունների են հանդիպել, որոնց պատճառով դժվարանում են հաճախել Եկեղեցի: Նրանք նաև, սովորաբար, ավելի քիչ ընկերներ են ունենում Եկեղեցում, և, հետևաբար, ծխի ժողովներին գնալիս իրենց չեն զգում ընկերների շրջապատում: Նրանք, ովքեր վերադառնում են ակտիվության, հաճախ դա անում են, երբ տեսնում են, որ իրենց կյանքում ինչ-որ բան պակասում է: Արդյունքում, նրանք հասկանում են, որ պետք է փոփոխություններ կատարեն իրենց կյանքում: Այդպիսի պահերին, նրանք Եկեղեցու ակտիվ և հոգատար անդամների սիրո և ընկերության կարիքն ունեն, որոնք ընդունում են նրանց այնպես, ինչպիսին որ կան, և անկեղծ անձնական հետաքրքրություն են ցուցաբերում նրանց հանդեպ:

5.3.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները

Եպիսկոպոսը և նրա խորհրդականները կրում են ակտիվացման աշխատանքների ընդհանուր պատասխանատվությունը: Նրանք ղեկավարում են քահանայության քվորումների և օժանդակ կազմակերպությունների ջանքերը, որոնք ուղղված են օգնելու քիչ-ակտիվ անդամներին վերականգնել հավատքը, իսկ վերադարձող անդամներին՝ ստանալ լիարժեք ընկերակցություն և աջակցություն: Նրանք օգնում են վերադարձող եղբայրներին առաջադիմել քահանայության մեջ և օգնում են եղբայրներին և քույրերին ստանալ տաճարային արարողությունները կամ արժանի լինել կրկին տաճար մտնելու:

Եպիսկոպոսը կարող է հանձնարարել իր խորհրդականներից մեկին համակարգել ակտիվացման աշխատանքը:

5.3.2 Ծխի խորհուրդ

Եպիսկոպոսության ղեկավարությամբ, ծխի խորհրդի անդամները դիտարկում են ակտիվացման իրենց նպատակները, ինչպես նշվում է ծխի միսիայի ծրագրում (տես 5.1.8): Նրանք կիսվում են իրենց կազմակերպություններում քիչ-ակտիվ անդամներին ծառայելու վերաբերյալ իրենց առաջարկություններով: Քիչ-ակտիվ անդամների կարիքներից և հանգամանքներից շարունակ տեղյակ լինելով, ծխի խորհրդի անդամները կարող են հասկանալ, թե երբ են ընտանիքները և անհատները պատրաստ դրականորեն արձագանքելու Եկեղեցու այցելուներին ընդունելու, Եկեղեցու ակտիվությանը վերադառնալու կամ տաճարի նախապատրաստման սեմինարին մասնակցելու հրավերին:

Ծխի խորհուրդը աղոթքով առանձնացնում է քիչ-ակտիվ անդամներին, որոնք առավել մեծ հավանականություն ունեն վերադառնալու ակտիվությանը: Նրանք նաև որոշում են, թե որ ղեկավարները և անդամները կարող են լավագույնս ամրացնել քիչ-ակտիվ անդամներին և նրանց հետ անձնական հարաբերություններ կառուցել: Երբ ընտանիքում մեկ հոգուց ավելի անձինք են քիչ-ակտիվ, ղեկավարները համակարգում են այդ ջանքերը ծխի խորհրդի ժողովների ժամանակ:

Ծխի խորհրդի ժողովներին պարբերաբար քննարկվում են այդ անդամների առաջընթացի հաշվետվությունները: Երբ որոշ անդամներ վերադառնում են ակտիվության կամ մերժում են այդ հրավերը, ծխի խորհուրդը մտածում է մյուսների մասին, որոնք կարող են ավելի արձագանքող լինել: Ղեկավարները կարող են օգտագործել «Նոր և Վերադարձող Անդամի Առաջընթաց» ձևը՝ այդ աշխատանքի ընթացքին հետևելու համար:

5.3.3 Տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ

Եպիսկոպոսի հետ խորհրդակցելով, Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները քիչ-ակտիվ անդամներին կցում են նվիրված տնային ուսուցիչների և այցելող ուսուցիչների: Այս ղեկավարները կենտրոնացնում են իրենց ջանքերը այն քիչ-ակտիվ անդամների վրա, ովքեր ավելի մեծ հավանականությամբ կարող են արձագանքել ակտիվությանը վերադառնալու հրավերին:

5.3.4 Ծխի միսիոներներ և լիաժամկետ միսիոներներ

Ծխի միսիայի ղեկավարը, լիաժամկետ միսիոներները և ծխի միսիոներները կարող են օգնել ակտիվացման աշխատանքում, եթե հարմար է, հատկապես, երբ քիչ-ակտիվ անդամներին ուսուցանելը կարող է հնարավորություններ տալ միսիոներներին՝ ուսուցանելու այդ անդամների ոչ-անդամ ընկերներին կամ բարեկամներին:

5.3.5 Ավետարանի սկզբունքների դասարան

18 տարեկան և բարձր տարիքի քիչ-ակտիվ անդամները Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ կարող են հաճախել Ավետարանի սկզբունքների դասարան (տես 5.2.8):

5.3.6 Ցցի ղեկավարներ

Ցցի նախագահը և նրա խորհրդականները

Յուրաքանչյուր եպիսկոպոսի հետ իր պարբերական հարցազրույցի ժամանակ, ցցի նախագահը խնդրում է ներկայացնել եպիսկոպոսի ծխի քիչ-ակտիվ անդամների առաջընթացի մասին հաշվետվություն: Ցցի նախագահը և եպիսկոպոսը քննարկում են այդ անդամների համար ծխի խորհրդի կողմից պատրաստված ծրագրերը և նպատակները:

Երբ ցցի նախագահը և միսիայի նախագահը հանդիպում են միսիոներական աշխատանքը քննարկելու համար, նրանք կարող են նաև քննարկել այն օգնությունը, որը լիաժամկետ միսիոներները կարող են ցուցաբերել քիչ-ակտիվ անդամների հետ աշխատանքում:

Բարձրագույն խորհրդականներ

Բարձրագույն խորհրդականները, որոնք աշխատում են ծխի Մելքիսեդեկյան Քահանայության ղեկավարների հետ, կարող են օգնել ուսուցանել և ընկերակցել քիչ-ակտիվ անդամներին: Նրանք կարող են նաև օգնել ապագա երեցներին պատրաստվել ստանալ Մելքիսեդեկյան Քահանայություն:

Ցցի օժանդակ կազմակերպությունների նախագահություններ

Ցցի օժանդակ կազմակերպությունների նախագահությունները կարող են երբեմն աշխատել ծխի օժանդակ կազմակերպությունների ղեկավարների հետ, ուսուցանելով և ընկերակցելով քիչ-ակտիվ անդամներին:

5.4 Տաճարային և Ընտանեկան Պատմության աշխատանք

Տաճարներում Եկեղեցու անդամները ստանում են արարողություններ և կապում են սուրբ ուխտեր, որոնք կարևոր են վեհացման համար: Եկեղեցու անդամները գնում են տաճար նաև արարողություններ կատարելու մահացածների համար, ովքեր արարողություններ չեն ստացել:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները ուսուցանում են ծխի անդամներին իրենց հիմնական պարտականությունները տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի մեջ, ինչպես սահմանված է հետևյալ պարբերություններում.

Նրանք խրախուսում են անդամներին ստանալ իրենց տաճարային արարողությունները և օգնել ընտանիքի մոտ անդամներին նույնպես ստանալ իրենց արարողությունները: Ղեկավարները ուսուցանում են անդամներին, որ օժտման նպատակը վեհացմանը պատրաստվելն է, ոչ թե պարզապես ամուսնությանը կամ միսիային պատրաստվելը:

Ղեկավարները օժտում ստացած յուրաքանչյուր անդամի խրախուսում են կրել գործող տաճարային երաշխավորագիր և հաճախ գնալ տաճար, որքանով որ թույլ կտան ընտանեկան և այլ պայմանները: Ղեկավարները նաև խրախուսում են 12 տարեկան և բարձր տարիքի օժտում չստացած չափահասների և երիտասարդների, ներառյալ՝ նոր անդամները, կրել սահմանափակ իրավունքներով տաճարային երաշխավորագիր և հաճախ գնալ տաճար՝ մահացածների համար մկրտվելու և հաստատվելու համար: Ղեկավարները տաճարային այցելության տեղերի սահմանափակումներ կամ հաշվետվության համակարգեր չեն սահմանում: Յուրաքանչյուր անդամ ինքն է որոշում տաճարային աշխատանքում իր մասնակցության հաճախականությունը:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները ուսուցանում են անդամներին ինչպես մասնակցել ընտանեկան պատմության աշխատանքին, գտնելով ընտանիքի նախնիներին, եթե անհրաժեշտ է, նրանց համար տաճարային արարողությունների հայտեր ներկայացնելով, և, եթե հնարավոր է, տաճարում նրանց համար կատարելով այդ արարողությունները:

Ղեկավարները օգնում են անդամներին հասկանալ, որ նրանք չպետք է խնդրեն, որ

տաճարային արարողություններ կատարվեն իրենց հետ կապ չունեցող անձի համար՝ առանց այդ անձի մոտ բարեկամի թույլտվության: Ղեկավարները նաև օգնում են անդամներին հասկանալ, որ նրանք չպետք է նման խնդրանքներ կատարեն հայտնի մարդկանց համար, ովքեր իրենց բարեկամները չեն, կամ այն անձնանց համար, որոնց մասին տեղեկություն է ձեռք բերվել ոչ-լիազորված ծրագրերից:

5.4.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները

Եպիսկոպոսը և նրա խորհրդականները վերահսկում են ծխում կատարվող տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը: Նրանք հետևում են, որպեսզի տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի վարդապետությունները և օրհնությունները կանոնավոր կերպով ուսուցանվեն ծխի ժողովներին:

Հանդիպելով անդամների հետ, եպիսկոպոսը օգնում է նրանց պատրաստվել ստանալ տաճարային արարողությունները և արժանանալ տաճար գնալուն այնքան հաճախ, որքան որ պայմանները թույլ կտան:

Եպիսկոպոսը և նրա խորհրդականները խրախուսում են անդամներին գտնել իրենց ընտանիքների նախնիներին և նրանց համար տաճարային արարողություններ կատարել:

Տաճարային աշխատանքին վերաբերող եպիսկոպոսության այլ պարտականությունները տրված են *Handbook 1,* գլուխ 3-ում:

5.4.2 Ծխի խորհուրդ

Ծխի խորհրդի ժողովին, եռամսյակը առնվազն մեկ անգամ, ղեկավարները քննարկում են տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին վերաբերող հարցեր.

Նրանք քննարկում են այն ուղիները, որոնցով կարող են օգնել անհատներին և ընտանիքներին ստանալ տաճարային արարողությունները և տաճար գնալ այնքան հաճախ, որքան որ պայմանները թույլ կտան:

Նրանք աղոթքով դիտարկում են ծխի այն անդամներին, ովքեր կարող են հրավիրվել տաճարի նախապատրաստման սեմինարներին կամ աշխատել ընտանեկան պատմության խորհրդատուների հետ:

Նրանք քննարկում են ուղիները, որոնցով կարող են օգնել անդամներին մասնակցել ընտանեկան պատմության աշխատանքին:

Նրանք կարող են քննարկել, թե ինչպես կարելի է օգտագործել ընտանեկան պատմության աշխատանքը՝ լիաժամկետ միսիոներների ուսուցանման համար մարդիկ գտնելու և նոր ու քիչ-ակտիվ անդամների օգնելու համար:

5.4.3 Քահանայապետերի խմբի ղեկավար

Քահանայապետերի խմբի ղեկավարը համակարգում է ծխի խորհրդի ջանքերը, որոնք ուղղված են ծխում տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը խրախուսելուն:

Քահանայապետերի խմբի ղեկավարը նաև համակարգում է ընտանեկան պատմության խորհրդատուների աշխատանքը: Եթե ցիցը ունի ընտանեկան պատմության կենտրոն, նա նշանակում է խորհրդատուներ, որոնք կարող են ծառայել ընտանեկան կենտրոնում, եթե նման պահանջ կա ընտանեկան պատմության կենտրոնի տնօրենի կողմից: Եթե ցիցը մասնակցում է FamilySearch ինդեքսավորման ծրագրին, նա առաջարկում է անձանց, ովքեր կարող են ծառայել որպես FamilySearch-ի ինդեքսավորման ծառայողներ:

Եթե ծուխը չունի քահանայապետերի խմբի ղեկավար, երեցների քվորումի նախագահը կամ մեկ այլ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող կարող է կատարել այդ դերը:

5.4.4 Ընտանեկան պատմության խորհրդատուներ

Քահանայապետերի խմբի ղեկավարի հսկողության ներքո, ընտանեկան պատմության խորհրդատուները կրում են հետևյալ պարտականությունները: Որպես ուղեցույց, նրանք օգտվում են *Member's Guide to Temple and Family History Work*-ից:.

Նրանք օգնում են անդամներին գտնել ընտանիքի նախնիներին: Նրանք օգնում են անդամներին պատրաստել տեղեկություն՝ իրենց նախնիների համար տաճարային արարողություններ կատարելու համար: Նրանք օգնում են անդամներին, որոնք համակարգիչներ չունեն կամ չեն կարող օգտվել դրանցից: Եթե հնարավոր է, նրանք այդ օգնությունը տրամադրում են անդամների տանը:

Նրանք կանոնավոր ծառայում են որպես աշխատակազմի անդամներ տեղական ընտանեկան պատմության կենտրոնում: Նրանք կարող են նաև նշանակվել ծխում ուսուցանելու ընտանեկան պատմության դասերը:

Ընտանեկան պատմության խորհրդատուների պարտականությունների մասին լրացուցիչ տեղեկության համար, տես *Family History Consultant's Guide to Temple and Family History Work,* որը նաև մատչելի է LDS.org-ում:

5.4.5 Տաճարային և Ընտանեկան պատմության դասարաններ և աղբյուրներ

Տաճարի նախապատրաստման սեմինարներ

Տաճարի նախապատրաստման սեմինարները օգնում են անդամներին պատրաստվել ստանալ տաճարային արարողությունները և օրհնությունները: Այդ սեմինարները ծրագրավորվում են եպիսկոպոսի ղեկավարությամբ: Դրանք ուսուցանվում են հավաքատանը կամ տանը՝ անհրաժեշտ հաճախականությամբ:

Տաճարի նախապատրաստման սեմինարները հատկապես օգտակար են նոր անդամների, Եկեղեցու ակտիվությանը վերադարձող քիչ-ակտիվ անդամների և օժտում ստացած անդամների համար, ովքեր երկար ժամանակ չեն թարմացրել իրենց տաճարային երաշխավորագրերը: Սեմինարները օգտակար են նաև ակտիվ անդամների համար, ովքեր պատրաստվում են ստանալ իրենց օժտումը:

Եպիսկոպոսության ղեկավարությամբ, ծխի խորհրդի անդամները աղոթքով ընտրում են անդամներին՝ յուրաքանչյուր սեմինարի հրավիրելու համար:

Եպիսկոպոսությունը կանչում է մեկ կամ ավելի ուսուցիչներ, եթե հնարավոր է, ամուսնական զույգի: Դասընթացի դասերը և հրահանգները տրված են *Օժտված ի վերուստ. Տաճարի նախապատրաստման սեմինարի ուսուցչի ձեռնարկում:* Սեմինարի մասնակիցները պետք է ստանան *Պատրաստվել մտնելու Սուրբ Տաճար* գրքույկի իրենց օրինակները:

Ընտանեկան պատմության դասընթաց

Ընտանեկան պատմության դասընթացը կարող է ուսուցանվել Կիրակնօրյա Դպրոցի կամ այլ ժամանակ, որը հարմար է անդամներին: Այդ դասընթացը կազմակերպվում է եպիսկոպոսության, ոչ թե՝ Կիրակնօրյա Դպրոցի նախագահի ղեկավարությամբ: ուսուցիչը օգտագործում է *Instructor's Guide to Temple and Family History Work* ուղեցույցը՝ դասերը մատուցելու համար: Ուսուցիչը սովորաբար հանդիսանում է եպիսկոպոսության կողմից նշանակված ընտանեկան պատմության խորհրդատուն: Դասերը սովորաբար անց են կացվում աշխատանքային հանդիպման տեսքով, որի ժամանակ անդամները կատարում են ընտանեկան պատմության իրական աշխատանք:

Ընտանեկան պատմության առցանց աղբյուրներ

Եկեղեցու ընտանեկան պատմության առցանց աղբյուրներն օգնում են անդամներին իրենց ընտանիքների նախնիների մասին տեղեկություն գտնել և այդ անդամների համար տաճարային արարողություններ կատարելու հայտեր ներկայացնել: Այդ աղբյուրների մեծ մասը մատչելի է նաև Եկեղեցու ընտանեկան պատմության համացանցային կայքում՝ FamilySearch.org:

Այն վայրերում, որտեղ ցցի կամ ծխի հավաքատանը համացանցի հնարավորությամբ համակարգիչներ կան, կամ որտեղ ցցի կամ ծխի համակարգիչներում տեղադրված են ընտանեկան պատմության ծրագրեր, ցցի նախագահությունը կամ եպիսկոպոսությունը հետևում է, որպեսզի այդ համակարգիչները մատչելի լինեն անդամներին՝ համապատասխան ժամանակ օգտագործելու համար: Ընտանեկան պատմության խորհրդատուները կարող են օգնել կազմել համակարգիչների օգտագործման ժամացուցակներ և սովորեցնել անդամներին օգտվել դրանցից:

Անդամները, որոնք օգտագործում են Եկեղեցու վարչական համակարգիչները ընտանեկան պատմության աշխատանքի համար, չպետք է մուտք ունենան անդամության կամ ֆինանսական տեղեկությանը:

5.4.6 Ցցի ղեկավարներ

Ցցի նախագահը և նրա խորհրդականները

Ցցի նախագահը և նրա խորհրդականները վերահսկում են տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը ցցում: Նրանք հետևում են, որպեսզի այդ աշխատանքի վարդապետությունները և օրհնությունները կանոնավոր ուսուցանվեն ցցի ժողովներին:

Երբ ցցի նախագահը հանդիպում է անդամների հետ, նա օգնում է նրանց պատրաստվել ստանալ տաճարային արարողությունները և արժանի լինել շարունակել գնալ տաճար այնքան հաճախ, որքան հանգամանքները թույլ են տալիս:

Ցցի նախագահը և նրա խորհրդականները խրախուսում են անդամներին գտնել իրենց նախնիների մասին տեղեկությունը և նրանց համար տաճարային արարողություններ կատարել:

Տաճարային աշխատանքին վերաբերող ցցի նախագահության այլ պարտականությունները տրված են *Handbook 1,* գլուխ 3-ում:

Բարձրագույն խորհրդական(ներ), որոնք նշանակվում են տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքին

Ցցի նախագահությունը կարող է հանձնարարել մեկ կամ ավելի բարձրագույն խորհրդականներ՝ ուսուցանելու քահանայապետերի խմբի և երեցների քվորումի ղեկավարներին նրանց պարտականությունները, կապված տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի հետ: Եթե անհրաժեշտ է, այդ բարձրագույն խորհրդականները կարող են նաև համակարգել ցցի աշխատանքները FamilySearch ինդեքսավորման գործում և ընտանեկան պատմության կենտրոններում:

5.4.7 Տաճարային և Ընտանեկան պատմության աղբյուրները ցցում

FamilySearch ինդեքսավորման ծրագիրը ցցում

FamilySearch ինդեքսավորման համար, մասնակիցները օգտվում են իրենց համակարգիչներից, որպեսզի օգտվեն այնպիսի փաստաթղթերի նկարներից, ինչպիսիք են՝ մարդահամարների տվյալները, եկեղեցական արձանագրությունները և այլ քաղաքացիական կացության գրառումներ: Այդ պատկերներից նրանք ստեղծում են ավտոմատացված ցուցամատյաններ, որոնք հետագայում մատչելի են դառնում FamilySearch.org կայքի միջոցով:

Անհատները, ներառյալ նրանք, ովքեր Եկեղեցու անդամներ չեն, կարող են ինքնուրույն կատարել FamilySearch ինդեքսավորումը: Ինչևէ, ցցի նախագահությունը կարող է որոշել, որ ցցի անդամների համար ավելի օգտավետ է միասին աշխատել ինդեքսավորման ծրագրով: Նման աշխատանքը կարող է ծառայության հնարավորություն հանդիսանալ քիչ-ակտիվ կամ տնից դուրս գալու կարողություն չունեցող անդամների համար: Երիտասարդները նույնպես կարող են մասնակցել:

FamilySearch ինդեքսավորման ծրագիրը հաստատելու համար, տես *Administrative Guide for Family History,* որը մատչելի է LDS.org կայքում:

Ընտանեկան պատմության կենտրոններ

Որոշ ցցեր ունեն ընտանեկան պատմության կենտրոններ, որոնց հիմնական նպատակն է օգնել Եկեղեցու անդամներին գտնել իրենց ընտանիքների նախնիներին և նրանց համար ապահովել տաճարային արարողությունների աշխատանք: Վարչական համայնքի անդամները նույնպես հրավիրվածեն օգտվելու ընտանեկան պատմության կենտրոններից:

Այդ կենտրոնները թույլ են տալիս օգտվել Եկեղեցու ընտանեկան պատմության գրառումներից, որոնք հավաքվել են միկրոֆիլմերի վրա, ընտանեկան պատմության համակարգչից և համացանցային աղբյուրներից, ինչպիսիք են՝ FamilySearch կայքէջը, ինչպեսև ընտանեկան պատմության աշխատանք կատարելու ուսուցման հնարավորությունից:

Ընտանեկան պատմության կենտրոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար, տես *Administrative Guide for Family History,* որը մատչելի է LDS.org կայքում:

5.5 Ուսուցանել ավետարանը

Ավետարանի արդյունավետ ուսուցանումը օգնում է մարդկանց աճել իրենց վկայությունների և Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի մեջ: Այն ամրացնում է անդամներին, օգնելով նրանց ապրել ըստ ավետարանի սկզբունքների: Երբ Աստծո խոսքը ուսուցանվում է հոգևոր զորությամբ, այն ունենում է ավելի հզոր ազդեցություն մարդկանց մտքի վրա, քան որևէ այլ բան (տես Ալմա 31.5): Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները խրախուսում են արդյունավետ ուսուցանում իրենց կազմակերպություններում: Նրանք հիշում են, որ Եկեղեցու անդամները հաճախում են ժողովներին, փնտրելով զորություն, խաղաղություն և ոգեշնչում, որոնք ապահովում է Աստծո խոսքը:

5.5.1 Եպիսկոպոսը և նրա խորհրդականները

Եպիսկոպոսը և նրա խորհրդականները ուսուցանում են ավետարանը Սուրբ Հոգու զորությամբ և անձնական օրինակով: Նրանք առաջնորդում են ծխի խորհրդի աշխատանքները, հետևելով որպեսզի ծխում ուսուցանումը լինի վեհացնող և վարդապետորեն ճիշտ:

5.5.2 Ծխի խորհուրդ

Եպիսկոպոսության ղեկավարությամբ ծխի անդամները միասին կանոնավոր խորհրդակցում են ծխում ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցանումը բարելավելու համար: Եպիսկոպոսը կարող է հրավիրել Կիրակնօրյա Դպրոցի նախագահին՝ ղեկավարելու այդ քննարկումները և հրահանգում ապահովելու:

5.5.3 Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները աշխատում են արդյունավետ ուսուցանել ավետարանը: Նրանք նաև պատասխանատու են իրենց կազմակերպություններում ուսումնասիրության և ուսուցանման բարելավման համար: Այդ աշխատանքում նրանց կարող է խորհուրդ տրամադրել ծխի Կիրակնօրյա Դպրոցի նախագահությունը:

Առաջարկել անդամներին ծառայել որպես ուսուցիչներ

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները եպիսկոպոսությանը առաջարկում են ծխի անդամների անուններ, ովքեր կարող են կանչվել իրենց կազմակերպություններում ծառայելու որպես ուսուցիչներ: Ղեկավարները պետք է առաջարկեն այնպիսի ուսուցիչներ, ովքեր կաշխատեն պատրաստել դասեր, որոնք կոգեշնչեն դասարանի անդամներին ապրել ըստ ավետարանի սկզբունքների: Այդ անելիս, նրանք հետևում են 19.1.1 և 19.1.2 հոդվածներում տրված սկզբունքներին:

Նոր կանչված ուսուցիչների կողմնորոշում

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները՝ ուսուցչի առաջին դասից առաջ, անհատապես հանդիպում են իրենց կազմակերպություններում նոր կանչված ուսուցիչների հետ: Այդ ժողովներին, ղեկավարները հրահանգում են ուսուցիչներին հետևյալ կերպ.

Նրանք օգնում են ուսուցիչներին ծանոթանալ դասարանի անդամների հետ, եթե դրա կարիքը կա: Նրանք ուսուցիչներին տալիս են դասարանի անդամների ցուցակը և խրախուսում նրանց սովորել դասարանի անդամների անունները: Նրանք նաև խրախուսում են ուսուցիչներին հոգատար հարաբերություններ հիմնել դասարանի անդամների հետ:

Նրանք օգնում են ուսուցիչներին հասկանալ, թե ինչպես կարելի է օգտագործել *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* գիրքը: Նրանք այդ գրքի մեկական օրինակ են տալիս յուրաքանչյուր ուսուցչին և համառոտ կիսվում գրքի բովանդակությամբ:

Եթե պահանջվում է, նրանք օգնում են ուսուցիչներին հասկանալ, թե ինչպես պետք է պատրաստել դասը: Նրանք ուսուցիչներին տալիս են հաստատված ուսումնական ծրագիրը իրենց դասարանների համար և բացատրում են, թե ինչպես պետք է օգտագործեն դրանք: Նրանք նաև վերանայում են «Պատրաստել դասերը» հոդվածը՝ *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* գրքի 98-99 էջերում: (Հաստատված ուսումնական ծրագրի նյութերի և դրանք պատվիրելու հրահանգների համար, տես *Հրահանգներ ուսումնական ծրագրի վերաբերյալ:*)

Շարունակական աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները ուսուցիչների հետ զարգացնում են փոխադարձ օգնության և հոգատարության հարաբերություններ: Իրենց առաջին կողմնորոշիչ հանդիպումից հետո, ղեկավարները կանոնավոր հանդիպում են առանձին ուսուցիչների հետ՝ տեղեկանալու նրանց կարիքների մասին, քննարկելու նրանց ուսանողների կարիքները և վերանայելու այս բաժնում տրված սկզբունքները: Նրանք ուսուցիչներին խրախուսում են նպատակներ դնել, հիմնվելով *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* գրքի «Ծրագիր կազմել ձեր ուսուցանումը բարելավելու համար» հոդվածի վրա, էջեր 24-27:

Հետևել, որպեսզի ուսուցանումը լինի վեհացնող և վարդապետորեն ճիշտ:

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները ուշադիր դիտարկում են Կիրակի օրերի դասերի և այլ դասերի ժամանակ անցկացվող ուսումնասիրության և ուսուցանման ընթացքը: Ղեկավարները, որոնք կանոնավոր չեն հաճախում յուրաքանչյուր դասարան, օրինակ՝ Կիրակնօրյա Դպրոցի և Երեխաների Խմբի նախագահությունների անդամները, պայմանավորվում են ուսուցիչների հետ, որպեսզի ժամանակ առ ժամանակ հաճախեն դասերին: Իրենց դիտարկումների հիման վրա, ղեկավարները խորհրդակցում են ուսուցիչների հետ և քննարկում, թե ինչպես կարելի է բարելավել ուսուցումը դասարաններում:

Ղեկավարները հետևում են, որպեսզի ուսուցիչները օգտագործեն սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների ուսմունքները, ուսումնական ծրագրի հաստատված նյութերը, ինչպես տրված է *Ուսումնական ծրագրի վերաբերյալ հրահանգներում*: Նրանք օգնում են ուսուցիչներին հասկանալ, թե ինչպես կարելի է լրացնել ուսուցանումը Եկեղեցու ամսագրերով, հատկապես *Ensign* և *Լիահոնա* ամսագրերի գերագույն համաժողովների համարների նյութերով:

5.5.4 Ուսուցիչներ և ղեկավարներ

Ավետարանը ուսուցանելիս, ուսուցիչները և ղեկավարները առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով:

Սիրեք նրանց, ում ուսուցանում եք

Ուսուցիչները և ղեկավարները սեր և անկեղծ մտահոգություն են ցուցաբերում նրանց հանդեպ, ում ուսուցանում են: Նրանք սովորում են դասարանի անդամների անունները: Նրանք վերանայում են հաճախելիության տվյալները, որպեսզի տեղյակ լինեն դասարանի այն անդամներից, ովքեր կանոնավոր չեն հաճախում: Նրանք կարող են դասերից հետո կապ հաստատել այդ անդամների հետ և խրախուսել նրանց մասնակցել դասերին:

Ուսուցանեք Հոգով

Դասերը պատրաստելիս և ուսուցանելիս, ուսուցիչները և ղեկավարները փնտրում են Սուրբ Հոգու առաջնորդությունը: Նրանք դա անում են, աղոթելով և խոնարհաբար ընդունելով Տիրոջից իրենց կախվածությունը: Դասերի ժամանակ նրանք հրավիրում են Հոգին, բերելով իրենց վկայությունը այն վարդապետությունների մասին, որոնք ուսուցանում են:

Ուսուցանեք վարդապետությունը

Ավետարանի վարդապետությունները ուսուցանելու և դրանց մասին վկայելու նպատակով, ուսուցիչները և ղեկավարները օգտագործում են սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների ուսմունքները, ուսումնական ծրագրի հաստատված նյութերը: Ուսումնական ծրագրի հաստատված նյութերը յուրաքանչյուր դասարանի կամ քվորումի համար տրված է *Ուսումնական ծրագրի վերաբերյալ հրահանգներում*: Անհրաժեշտության դեպքում, ուսուցիչները և ղեկավարները կարող են լրացնել ուսումնական ծրագրի նյութերը Եկեղեցու ամսագրերով, հատկապես *Ensign* և *Լիահոնա*ամսագրերի գերագույն համաժողովների համարներով:

Ջանասիրաբար սովորելու կոչ արեք

Ուսուցիչները և ղեկավարները խրախուսում են դասարանի անդամներին պատասխանատվություն ստանձնել ինքնուրույն ուսումնասիրել ավետարանը՝ անհատապես, իրենց ընտանիքներում և դասարաններում: Նրանք խրախուսում են դասարանի անդամներին իրենց հետ դասարան բերել իրենց սուրբ գրությունները, եթե հնարավոր է: Ուսուցիչները և ղեկավարները հնարավորություններ են տալիս դասարանի անդամներին ակտիվորեն մասնակցել քննարկումներին, և հրավիրում են դասարանի անդամներին ապրել ըստ ավետարանի և ստանալ խոստացված օրհնությունները:

5.5.5 Ծխի Կիրակնօրյա Դպրոցի նախագահը և նրա խորհրդականները

Ծխի Կիրակնօրյա Դպրոցի նախագահության անդամները միջոց են հանդիսանում օգնելու համար մյուս ղեկավարներին ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցանումը ամրացնելու գործում: Նրանք կարող են հրավիրվել օգնելու ղեկավարներին կողմնորոշել, հրահանգել և ընթացիկ աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին:

5.5.6 Տպագիր և առցանց աղբյուրներ ուսումնասիրության և ուսուցանման համար

Օգնելու համար անդամներին բարելավել ավետարանի ուսումնասիրությունը և ուսուցանումը, Եկեղեցին օգտվում է երկու հրատարակումներից. *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* և *Ուսուցման ուղեցույց*: Այս նյութերը մատչելի են տպագիր և առցանց՝ LDS.org: LDS.org կայքում տեղակայված են այլ նյութեր ևս:

5.5.7 Ավետարանի ուսուցանման դասընթաց

Եպիսկոպոսությունը և ծխի խորհուրդը կարող են որոշել ծխում պարբերաբար անցկացնել Ավետարանի Ուսուցման դասընթաց: Այս դասընթացը օգտակար կլինի ներկա ուսուցիչներին և կօգնի պատրաստվել ապագա ուսուցիչներին: Դասընթացը սովորաբար անց է կացվում Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ: Դասընթացի դասերը տրված են *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* գրքույկի 186-239 էջերում: Եպիսկոպոսությունը հանձնարարում է Կիրակնօրյա Դպրոցի նախագահությանը կամ կանչում է մեկ այլ անդամի, որպեսզի ուսուցանի դասընթացը:

5.5.8 Ցցի նախագահը և նրա խորհրդականները

Ցցի նախագահը և նրա խորհրդականները ուսուցանում են ավետարանը Սուրբ Հոգու զորությամբ և անձնական օրինակով: Նրանք առաջնորդում են ծխի խորհրդի աշխատանքները, հետևելով որպեսզի ծխում ուսուցանումը լինի վեհացնող և վարդապետորեն ճիշտ:

6. Բարօրության սկզբունքները և ղեկավարումը

6.1 **Եկեղեցու Բարօրության Ծրագրի նպատակները 34**

6.1.1 Ինքնապահովում 34

6.1.2 Աղքատների և կարիքավորների մասին հոգալու և ծառայություն մատուցելու անդամների ջանքերը. 35

6.1.3 Տիրոջ շտեմարանը 35

6.2 **Բարօրության ղեկավարումը ծխում. 35**

6.2.1 Եպիսկոպոս 35

6.2.2 Ծխի խորհուրդ 35

6.2.3 Ծխի քահանայության գործադիր հանձնախումբ 36

6.2.4 Քահանայապետերի Խումբ, Երեցների Քվորում և Սփոփող Միություն. 36

6.2.5 Ծխի բարօրության մասնագետներ 37

6.3 **Բարօրության ղեկավարումը ցցում 37**

6.3.1 Ցցի նախագահ 37

6.3.2 Ցցի խորհուրդ 37

6.3.3 Ցցի բարօրության մասնագետներ 37

6.4 **Գաղտնապահություն 38**

6. Բարօրության սկզբունքները և ղեկավարումը

6.1 Եկեղեցու Բարօրության նպատակները

Եկեղեցու Բարօրության նպատակներն են՝ օգնել անդամներին դառնալ ինքնապահովող, հոգ տանել աղքատների և կարիքավորների համար և ծառայություն մատուցել:

1936թ. Առաջին Նախագահությունը նախագծեց Եկեղեցու բարօրության ծրագիրը, նշելով. «Մեզ համար որպես առաջնային նպատակ է հանդիսացել հաստատել . . . մի համակարգ, որի ներքո ծուլության անեծքը կվերանա, նյութական նպաստի չարիքը կհեռանա, և անկախությունը, աշխատասիրությունը, տնտեսվարությունը և արժանապատվությունը կրկին կհաստատվեն մեր ժողովրդի մեջ: Եկեղեցու նպատակն է օգնել մարդկանց օգնել իրենց: Աշխատանքը պետք է կրկին վերահաստատվի որպես առաջնորդող սկզբունք մեր Եկեղեցու անդամների կյանքում» (in Conference Report, Oct. 1936, 3):

6.1.1 Ինքնապահովում

Ինքնապահովումը անձի և ընտանիքի կենսական կարիքները հոգալու ունակությունը, պարտավորվածությունը և ջանքն է: Ինքնապահովող դառնալով, անդամները նաև կարողանում են ծառայել իրար և միմյանց մասին հոգ տանել:

Եկեղեցու անդամները պատասխանատու են իրենց հոգևոր և նյութական բարօրության համար: Օրհնված լինելով կամքի ազատությամբ՝ նրանք արտոնություն և պարտականություն ունեն՝ ընտրելու իրենց անձնական ուղին, լուծելու իրենց անձնական խնդիրները և ձգտելու դառնալ ինքնապահովող: Անդամները կատարում են դա Տիրոջ ոգեշնչման ներքո և իրենց ձեռքի աշխատանքով:

Երբ Եկեղեցու անդամները կատարում են այն ամենը, ինչ կարող են իրենց ապահովելու համար, սակայն դեռևս չեն կարողանում բավարարել իրենց հիմնական կարիքները, առաջին հերթին նրանք պետք է օգնության խնդրանքով դիմեն իրենց ընտանիքներին: Երբ այդ օգնությունը բավարար կամ հնարավոր չէ, Եկեղեցին պատրաստ է օգնելու:

Հետևյալ պարբերություններում նշվում են մի քանի բնագավառներ, որոնցում անդամները պետք է դառնան ինքնապահովող:

Առողջություն

Տերը պատվիրել է անդամներին հոգ տանել իրենց մտքի և մարմնի համար: Նրանք պետք է հնազանդվեն Իմաստության Խոսքին, օգտակար սնունդ ընդունեն, կանոնավոր մարզվեն և բավարար չափով քնեն: Նրանք պետք է իրենց զերծ պահեն մարմինը և միտքը վնասող նյութերից և գործողություններից, որոնք հակում են առաջացնում: Նրանք պետք է պահեն սանիտարա-հիգիենիկ կանոնները և համապատասխան բժշկական և ատամնաբուժական օգնություն ստանան: Նրանք պետք է նաև ձգտեն լավ հարաբերություններ հաստատել ընտանիքի անդամների և մյուսների հետ:

Կրթություն

Կրթությունը ապահովում է հասկացողություն և հմտություններ, որոնք կարող են օգնել մարդկանց ինքնապահովում ձեռք բերել: Եկեղեցու անդամները պետք է ուսումնասիրեն սուրբ գրությունները և լավ այլ գրքեր: Նրանք պետք է կատարելագործեն կարդալու, գրելու և մաթեմատիկայի հիմնարար սկզբունքների իրենց ունակությունները: Նրանք պետք է ձեռք բերեն, որքան հնարավոր է, շատ կրթություն, ներառյալ՝ պաշտոնական կամ տեխնիկական ուսում, եթե հնարավոր է: Դա կօգնի նրանց զարգացնել իրենց տաղանդները, գտնել համապատասխան աշխատանք և արժեքավոր ներդրում կատարել իրենց ընտանիքների, Եկեղեցու և համայնքի կյանքում:

Աշխատանք

Աշխատանքն այն հիմքն է, որի վրա կառուցվում է ինքնապահովումն ու նյութական բարեկեցությունը: Անդամները պետք է պատրաստվեն և զգուշորեն ընտրեն համապատասխան աշխատանք կամ ձեռնարկատիրություն, որը կապահովի իրենց անձնական և ընտանեկան կարիքները: Նրանք պետք է հմտանան իրենց աշխատանքում, լինեն ջանասեր և վստահելի, և իրենց աշխատավարձի ու նպաստների դիմաց ազնիվ աշխատեն:

Տնային պահեստ

Իրենց սեփական և իրենց ընտանիքների կարիքները հոգալու համար, անդամները պետք է կուտակեն իրենց նորմալ սննդացանկին համապատասխան երեք ամսվա մթերքների պաշար: Եթե տեղի օրենքները և պայմանները թույլ են տալիս, նրանք պետք

է աստիճանաբար հավաքեն կյանքի համար անհրաժեշտ հիմնական սննդամթերքի երկարաժամկետ պաշար: Նրանք պետք է նաև հավաքեն խմելու ջուր այն դեպքերի համար, երբ ջուրը աղտոտվում է կամ ջրի մատակարարումը ընդհատվում է: (Տես *All Is Safely Gathered In: Family Home Storage,* 3:)

Ֆինանսներ

Ֆինանսապես ինքնապահովող դառնալու համար, անդամները պետք է վճարեն տասանորդը և նվիրատվությունները, խուսափեն ոչ անհրաժեշտ պարտքից, օգտագործեն բյուջե և ապրեն ծրագրի շրջանակներում: Նրանք պետք է աստիճանաբար ֆինանսական պաշարներ ստեղծեն, կանոնավոր խնայողություններ կատարելով իրենց եկամտից: (Տես *All Is Safely Gathered In: Family Finances,* 3:)

Հոգևոր ամրություն

Հոգևոր ուժը կարևոր է անձի կենսական և հավերժական բարօրության համար: Եկեղեցու անդամների հոգևոր ուժն աճում է, երբ նրանք զարգացնում են իրենց վկայությունները, հավատք են գործադրում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ, հնազանդվում են Աստծո պատվիրաններին, ամեն օր աղոթում են, ուսումնասիրում են սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների ուսմունքները, հաճախում են Եկեղեցու ժողովներին և ծառայում են Եկեղեցու կոչումներում և հանձնարարություններում:

6.1.2 Աղքատների և կարիքավորների մասին հոգալու և Ծառայություն մատուցելու անդամների ջանքերը

Իր Եկեղեցու միջոցով, Տերը ճանապարհ է տալիս աղքատների և կարիքավորների մասին հոգալու համար: Նա խնդրում է Եկեղեցու անդամներին առատությամբ բաժին հանել ըստ նրա, ինչ իրենք են ստանում Նրանից: Նա նաև խնդրել է Իր ժողովրդին այցելել աղքատներին և կարիքավորներին և ծառայել նրանց (տես ՎևՈւ 44.6): Եկեղեցու անդամները քաջալերվում են անձնական և գթասիրտ ծառայություն մատուցել կարիքավորներին: Նրանք պետք է «ջերմեռանդ ներգրավված լինեն բարի գործի մեջ», ծառայելով առանց խնդրելու կամ հանձնարարվելու (տես ՎևՈւ 58.26–27):

Տերը սահմանել է ծոմի օրենքը և ծոմի նվիրատվությունները՝ օրհնելու համար Իր ժողովրդին և նրանց կարիքավորներին ծառայելու հնարավորություն տալու համար (տես Եսայիա ԾԸ.6–12; Մաղաքիա Գ.8–12): Երբ անդամները ծոմ են պահում, նրանց խնդրում են Եկեղեցուն տալ իրենց բացթողած ճաշաբաժնի արժեքին հավասար գումար: Հնարավորության դեպքում, նրանք պետք է առատաձեռն գտնվեն և տան ավելին: Ծոմի օրենքի հետ կապված օրհնություններն են՝ Տիրոջը մոտ լինելը, հոգևոր ավելի մեծ ուժը, նյութական բարեկեցությունը, ավելի մեծ կարեկցանքը և ծառայելու ավելի մեծ ցանկությունը:

Կարիքավորներին ծառայելու որոշ հնարավորություններ տրվում են Եկեղեցու կոչումների միջոցով: Այլ հնարավորություններ կարելի է գտնել անդամների տներում, հարևանների շրջապատում և համայնքներում: Անդամները կարող են նաև օգնել աշխարհով մեկ գտնվող այլ հավատքների աղքատներին և կարիքավորներին՝ Եկեղեցու մարդասիրական աշխատանքին իրենց ներդրումը կատարելով:

Տիրոջ ձևով օգնելը խոնարհեցնում է հարուստին, վեհացնում է աղքատին և սրբացնում երկուսին (տես ՎևՈւ 104.15–18): Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը սովորեցրել է.

«Բարօրության ծրագրի իրական երկարաժամկետ նպատակը բնավորություն ձևավորելն է Եկեղեցու անդամների մեջ՝ նվիրողի և նվեր ընդունողի բնավորություն, փրկելով այն լավագույնը, ինչ նրանց մեջ է, և ծաղկացնելով և պտուղ տալով հոգու թաքնված հարստությունը, որն ի վերջո այս Եկեղեցու գոյության առաքելությունը, նպատակն ու պատճառն է» (ցցերի նախագահների հատուկ ժողով, 2 հոկտ., 1936):

6.1.3 Տիրոջ շտեմարանը

Որոշ տարածքներում Եկեղեցին հիմնել է շինություններ, որոնք կոչվում են եպիսկոպոսի շտեմարաններ: Անդամները իրենց եպիսկոպոսից թույլտվություն ստանալով կարող են գնալ եպիսկոպոսի շտեմարան՝ աղքատների համար մթերք և հագուստ վերցնելու նպատակով: Սակայն Տիրոջ շտեմարանը չի սահմանափակվում այն շենքով, որտեղից մթերք և հագուստ է մատակարարվում աղքատներին: Այն նաև ներառում է Եկեղեցու անդամների նվիրատվությունները՝ ժամանակի, տաղանդների, կարեկցանքի, նյութական և ֆինանսական միջոցների տեսքով, որոնք առաջարկվում են եպիսկոպոսին՝ աղքատներին և կարիքավորներին օգնելու նպատակով: Այսպիսով, յուրաքանչյուր ծխում գոյություն ունի Տիրոջ շտեմարան: Այդ նվիրատվությունները պետք է «գցվեն Տիրոջ շտեմարանը, . . . ամեն մարդ փնտրելով իր մերձավորի շահը, և բոլոր բաներն անելով պարզ աչքով ուղղված Աստծո փառքին» (ՎևՈւ 82.18–19): Եպիսկոպոսը Տիրոջ շտեմարանի գործակալն է:

6.2 Բարօրության ղեկավարումը Ծխում

6.2.1 Եպիսկոպոս

Եպիսկոպոսը ղեկավարում է բարօրության աշխատանքը ծխում: Նա աղքատներին գտնելու և նրանց համար հոգ տանելու աստվածային պարտականություն ունի (տես ՎևՌ 84.112): Նրա նպատակն է օգնել անդամներին՝ օգնել իրենց և ինքնապահովող դառնալ:

Եպիսկոպոսի խորհրդականները, Սփոփող Միության նախագահը, քահանայապետերի խմբի ղեկավարը, երեցների քվորումի նախագահը և ծխի խորհրդի մյուս անդամները օգնում են եպիսկոպոսին այդ պարտականությունները կատարելիս:

Եպիսկոպոսը պահպանում է անդամների ստացած բարօրության օգնության մասին տեղեկության գաղտնիությունը: Նա ուշադիր հետևում է, որպեսզի պահպանվեն օգնություն ստացող անդամների անձնական գաղտնիությունը և արժանապատվությունը: Եթե նա գտնում է, որ ծխի այլ ղեկավարներ կարող են օգնել կարիքավոր անդամներին, նա կարող է կիսվել տեղեկությամբ համաձայն 6.4-ում տրված ուղեցույցների:

Եպիսկոպոսի բարօրության պարտականությունների, ներառյալ՝ ծոմի նվիրատվությունների հիմնադրամներից օգնություն տրամադրելու հրահանգների մասին լրացուցիչ տեղեկության համար, տես *Handbook 1,* 5.2:

6.2.2 Ծխի խորհուրդ

Ծխի խորհրդի ժողովներին, եպիսկոպոսը ուսուցանում է բարօրության սկզբունքները և սովորեցնում խորհրդի անդամներին բարօրության հետ կապված իրենց պատասխանատվությունները: Ծխի անդամները դիտարկում են հոգևոր և նյութական բարօրության հարցերը հետևյալ եղանակներով.

Նրանք միասին խորհրդակցում են այն ուղիների մասին, որոնք կօգնեն ծխի անդամներին հասկանալ և հետևել բարօրության սկզբունքներին:

Նրանք զեկուցում են ծխում հոգևոր և նյութական բարօրության կարիքների մասին, տեղեկություն քաղելով անձնական այցերից, տնային ուսուցիչների և այցելող ուսուցիչների հաշվետվություններից: Եթե տեղեկությունը չափազանց գաղտնի է և չի կարող հաղորդվել ծխի ամբողջ խորհրդին, ղեկավարները առանձին զրուցում են եպիսկոպոսի հետ կամ քահանայության գործադիր հանձնախմբի ժողովի ժամանակ (տես 6.2.3):

Նրանք ծրագրում են, թե ինչպես կարող են օգնել ծխի որոշակի անդամներին հոգալ իրենց հոգևոր և նյութական կարիքները, ներառյալ՝ երկարաժամկետ կարիքները: Նրանք որոշում են, թե ինչպես կարող են օգնել անդամներին, որոնք սահմանափակ հնարավորություններ կամ հատուկ կարիքներ ունեն: Նրանք այդ քննարկումները գաղտնի են պահում (տես 6.4):

Նրանք համակարգում են ջանքերը, որոնք ուղղված են հետևելուն, որ Եկեղեցու օգնությունը ստացող անդամները աշխատելու կամ ծառայություն մատուցելու հնարավորություններ ունենան: Նրանք կազմում և պահում են իմաստալից աշխատանքների ցանկը: Եթե տարածքում գործում է Եկեղեցու բարօրության գործառնությունների ծրագիրը, ապա այդ գործառնությունները օգնության կարիք ունեցող Եկեղեցու անդամների համար կարող են աշխատանքի և ուսուցման հնարավորություններ ապահովել:

Նրանք կազմում և պահում են ծխի անդամների ցուցակը, որոնց հմտությունները կարող են օգտակար լինել կարճաժամկետ, երկարաժամկետ կարիքների կամ աղետների դեպքերում:

Նրանք ծխի համար մշակում և պահում են պարզ գրավոր ծրագիր՝ ծայրահեղ իրավիճակներին արձագանքելու համար (տես *Handbook 1,* 5.2.11): Նրանք համակարգում են այդ ծրագիրը ցցում կամ համայնքում նմանատիպ ծրագրերի հետ:

6.2.3 Ծխի քահանայության գործադիր հանձնախումբ

Եթե անհրաժեշտ է, ծխի քահանայության գործադիր հանձնախումբը քննարկում է գաղտնապահություն պահանջող բարօրության հարցեր: Եպիսկոպոսը կարող է այդ քննարկումներին հրավիրել Սփոփող Միության նախագահին:

6.2.4 Քահանայապետերի Խումբ, Երեցների Քվորում և Սփոփող Միություն

Բարօրությունը կենտրոնական դեր է խաղում քահանայապետերի խմբի, երեցների քվորումի և Սփոփող Միության աշխատանքներում: Քահանայապետերի խմբի ղեկավարների, երեցների քվորումի նախագահության և Սփոփող Միության նախագահության ժողովներին ղեկավարները ծրագրում են, թե ինչպես կարող են ուսուցանել ինքնապահովման և ծառայության սկզբունքները և հոգալ բարօրության կարիքները: Եպիսկոպոսի

ղեկավարությամբ, այդ ղեկավարները օգնում են անդամներին դառնալ ինքնապահովող և լուծումներ գտնել կարճաժամկետ և երկարաժամկետ կարիքներին:

Բարօրության կարճաժամկետ կարիքները

Կարճաժամկետ օգնություն տրամադրելիս, եպիսկոպոսը կարող է հանձնարարություններ տալ Մելքիսեդեկյան Քահանայության կամ Սփոփող Միության ղեկավարներին:

Եպիսկոպոսը, սովորաբար, հանձնարարում է Սփոփող Միության նախագահին այցելել անդամներին, ովքեր կարճաժամկետ օգնության կարիք ունեն: Նա օգնում է նրանց գնահատել իրենց կարիքները և հուշում է եպիսկոպոսին, թե ինչպիսի օգնություն պետք է տրամադրել: Եպիսկոպոսը կարող է խնդրել նրան լրացնել Ապրանքների Եպիսկոպոսի Պատվեր ձևը, որը նա հաստատում և ստորագրում է:

Ընտանեկան կարիքները գնահատելու նպատակով ընտանիքներին այցելելու Սփոփող Միության նախագահի դերը ավելի լիարժեք բացատրվում է 9.6.1-ում: Սփոփող Միության նախագահին և նրա խորհրդականներին վերաբերող կարճաժամկետ բարօրության պարտականությունները տրված են 9.6.2 և 9.6.3-ում:

Բարօրության երկարաժամկետ կարիքները

Կարճաժամկետ շատ խնդիրների պատճառները հանդիսանում են երկարաժամկետ դժվարությունները, ինչպիսիք են՝ վատ առողջությունը, հմտությունների պակասը, անհամապատասխան կրթությունը կամ աշխատանքը, ապրելակերպի սովորությունները և էմոցիոնալ խնդիրները: Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները հատուկ պարտականություն են կրում՝ օգնելու անդամներին հաղթահարել այդ խնդիրները: Նրանց նպատակն է այնպիսի լուծումներ տալ այդ երկարաժամկետ խնդիրներին, որպեսզի փոփոխությունը երկարատև ազդեցություն կրի:

Երբ Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները տեղեկանում են երկարաժամկետ կարիքների մասին, նրանք կարեկցանքով աշխատում են օգնել անհատներին և ընտանիքներին: Նրանք օգտագործում են իրենց կազմակերպություններում և ծխում առկա միջոցները: Նրանք աղոթում են առաջնորդության համար, որպեսզի իմանան, թե ինչպես օգնություն տրամադրել:

Ավելի լավ պատկերացնելով ինչպես պետք է օգնել, Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները սովորաբար այցելում են բարօրության կարիքներ ունեցող անդամներին: Նրանք կարող են օգտագործել Կարիքների և Միջոցների Վերլուծության ձևը կամ պարզապես հետևել այդ սկզբունքներին՝ օգնելու համար անդամներին ծրագիր կազմել բարօրության կարիքները հոգալու համար:

Օգնելով անդամներին հոգալ երկարաժամկետ կարիքները, ղեկավարները խորհրդակցում են եպիսկոպոսի հետ: Որոշ դեպքերում, Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները միասին են աշխատում:

Զեկուցում եպիսկոպոսին և նրա կողմից շարունակական առաջնորդորդություն

Քահանայապետերի խմբի ղեկավարը, երեցների քվորումի նախագահը և Սփոփող Միության նախագահը պարբերաբար զեկուցում են եպիսկոպոսին այն գործողությունների մասին, որոնք իրենք կամ իրենց կազմակերպությունները ձեռնարկել են ծխում կարճաժամկետ և երկարաժամկետ կարիքները հոգալու ուղղությամբ: Բարօրության հարցերում նրանք շարունակ հայցում են եպիսկոպոսի առաջնորդությունը:

Եթե անհատները և ընտանիքները ունեն այնպիսի կարճաժամկետ խնդիրներ, որոնք ինքնուրույն չեն կարողանում հոգալ, և եթե Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները նույնպես չեն կարող լուծել, ղեկավարները անմիջապես տեղեկացնում են այդ մասին եպիսկոպոսին:

Եթե Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները տեղեկանում են արժանավորության կամ ընտանեկան զգայուն հարցերի հետ կապված խնդիրների առկայության մասին, նրանք անդամներին ուղարկում են եպիսկոպոսի մոտ:

Տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ

Հոգևոր և նյութական բարօրության օգնությունը հաճախ սկսվում է տնային և այցելող ուսուցիչների աշխատանքից: Բարության և ընկերասիրության ոգով, որը դրսևորվում է ոչ միայն ամսեկան այցերի ժամանակ, տնային և այցելող ուսուցիչները օգնում են կարիքի մեջ գտնվող անհատներին և ընտանիքներին: Նրանք հաղորդում են նրանց կարիքների մասին, ում ծառայում են, իրենց քահանայության ղեկավարներին կամ Սփոփող Միության ղեկավարներին:

Ծառայություն հայցել Քվորումների և Սփոփող Միության անդամների և մյուսների կողմից

Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները կարող են հայցել անդամների ծառայությունը, որոնց հմտությունները կամ փորձը կարող է օգնել կարիքավորներին: Անդամները կարող են կարճաժամկետ ծառայություն մատուցել, օրինակ՝ կերակուր պատրաստել, երեխային խնամել կամ կիսվել աշխատանքի մասին օգտակար տեղեկությամբ: Անդամները կարող են նաև օգնել ուղղություն ցույց տալ բարօրության երկարաժամկետ կարիքների դեպքում, օրինակ՝ առողջության, առողջապահության, կերակրման, կարիերային պատրաստվելու, կրթություն փնտրելու, փոքր բիզնես սկսելու կամ ընտանեկան ֆինանսները վարելու հարցերում:

Նրանից հետո, երբ ղեկավարները խնդրում են ուրիշներին օգնության համար, նրանք անընդմեջ կապի մեջ են մնում կարիքավոր անձի կամ ընտանիքի հետ, անհրաժեշտության դեպքում խրախուսանք և օգնություն տրամադրելով այլ եղանակներով:

Ղեկավարները կարող են օգնել եպիսկոպոսին, երբ նա անդամներին ուղարկում է օգտվելու Եկեղեցու բարօրության գործառնությունների ծրագրերից, ինչպիսիք են եպիսկոպոսի շտեմարանները, Եկեղեցու զբաղվածության կենտրոնները, Deseret Industries տնտեսող խանութները և ՎՕՍ Ընտանեկան ծառայությունները: Ղեկավարները կարող են նաև օգնել անդամներին օգնություն ստանալ համայնքներից և պետական գործակալություններից:

6.2.5 Ծխի բարօրության մասնագետներ

Բարօրության մասնագետները օգնում են եպիսկոպոսությանը և Մելքիսեդեկյան և Սփոփող Միության ղեկավարներին կատարել իրենց բարօրության պարտականությունները:

Եպիսկոպոսությունը կարող է կանչել զբաղվածության մասնագետ, որը կօգնի անդամներին պատրաստվել աշխատանքի և գտնել հարմար աշխատանք: Եպիսկոպոսությունը կարող է նաև կանչել բարօրության այլ մասնագետներ, որոնք կօգնեն հոգալ անդամների կարիքները, օրինակ՝ կրթության, ուսուցման, սննդի, սանիտարիայի, տնային պահեստի, առողջապահության, ընտանեկան ֆինանսների և Մշտական Կրթական Հիմնադրամի հետ կապված հարցերում:

6.3 Բարօրության ղեկավարումը ցցում

6.3.1 Ցցի նախագահ

Ցցի նախագահը ղեկավարում է ցցում բարօրության աշխատանքը: Բարօրության հետ կապված նրա պարտականությունների մասին լրացուցիչ տեղեկության համար տես *Handbook 1,* 5.1:

6.3.2 Ցցի խորհուրդ

Ցցի խորհրդի ժողովներին, ղեկավարները դիտարկում են հոգևոր և նյութական բարօրության հարցերը հետևյալ եղանակներով.

Նրանք պարզում են բարօրության խնդիրները ցցում և մտածում, թե ինչպես կարելի է հոգալ այդ կարիքները: Ինչևէ, նրանց պարտականությունների մեջ չի մտնում ծխի բարօրության խնդիրների դիտարկումը:

Նրանք ծրագրում են եղանակներ՝ ցցի և ծխի ղեկավարներին բարօրության սկզբունքները ուսուցանելու համար:

Նրանք քննարկում են, թե ինչպես կարող են ծխի ղեկավարներին տեղեկացնել ցցի այն մարդկանց մասին, ովքեր կարող են օգնել բարօրության կարիքներ ունեցողներին:

Նրանք ցցի համար մշակում և պահում են պարզ գրավոր ծրագիր՝ արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար (տես *Handbook 1,* 5.1.3): Նրանք համակարգում են այդ ծրագիրը այլ ցցերում կամ համայնքում նմանատիպ ծրագրերի հետ:

Նրանք ծրագրավորում են բարօրության միջոցառումները, հետևելով, որպեսզի ծխի ղեկավարները աննպատակ լրացուցիչ բեռի տակ չգտնվեն:

Նրանք ծրագրավորում են ցցի բարօրության հանձնարարություններին արձագանքելու ուղիները:

Յոթանասունի Նախագահության կամ Տարածքային Նախագահության անդամի կողմից հանձնարարություն ստանալու դեպքում, նրանք ղեկավարում և աջակցություն են տրամադրում բարօրության աշխատանքներին:

Եթե եպիսկոպոսին հանձնարարվել է օգնել մարդկանց, որոնք տեղափոխման մեջ են կամ անտուն են, ցցի խորհրդի անդամները որոշում են, թե ինչպես կարող են օգտագործել ցցի միջոցները՝ եպիսկոպոսին այդ հարցում օգնելու համար:

6.3.3 Ցցի բարօրության մասնագետները

Ցցի նախագահության անդամը կամ բարձրագույն խորհրդականը, որին հանձնարարվել է, կարող է կանչել ցցի զբաղվածության մասնագետ և բարօրության այլ մասնագետներ: Ցցի այս մասնագետները աղբյուր են հանդիսանում եպիսկոպոսների և ծխի այլ ղեկավարների համար: Մասնագետները կարող են օգնել բարօրության այնպիսի հարցերում, որոնք թվարկված են 6.2.5հոդվածում:

6.4 Գաղտնապահություն

Եպիսկոպոսները և ծխի մյուս ղեկավարները, տեղեկանալով անդամների բարօրության կարիքների և նրանց տրված օգնության մասին, պահում են այդ տեղեկության գաղտնիությունը: Նրանք ուշադիր են լինում, որպեսզի պահպանվեն օգնություն ստացող անդամների անձնական շահերը և արժանապատվությունը: Նրանք ուշադիր են լինում, որպեսզի օգնության կարիք ունեցող անդամները իրենց անհարմար չզգան:

Լինում են պահեր, երբ օգտակար է, որ ծխի ողջ խորհուրդը և, մի գուցե, ծխի այլ անդամները, իմանան անհատի կամ ընտանիքի բարօրության կարիքների մասին: Օրինակ, երբ անդամը գործազուրկ է կամ ավելի լավ աշխատանք է փնտրում, մյուսները կարող են օգնել նրան ավելի արագ գտնել աշխատանք: Նման դեպքերում, եպիսկոպոսը և այլ ղեկավարները սովորաբար թույլտվություն են խնդրում կարիքավոր անդամներից՝ իրենց իրավիճակների մասին տեղեկությամբ կիսվելու համար:

Երբ ղեկավարները խնդրում են ուրիշներին օգնել, նրանք կիսվում են միայն այն տեղեկությամբ, որն անհրաժեշտ է հանձնարարությունը կատարելու համար: Ղեկավարները նրանց նույնպես հրահանգում են պահել գաղտնիությունը:

17. Միօրինակություն և հարմարեցում

17.1 **Որ դեպքերում է պահանջվում միօրինակությունը 132**

17.1.1 Սուրբ գրություններ. 132
17.1.2 Պատվիրաններ և չափանիշներ 132
17.1.3 Վարդապետության մաքրություն. 132
17.1.4 Հաղորդության ժողովներ և կիրակնօրյա ժողովների ժամանակացույց 132
17.1.5 Համաժողովներ 133
17.1.6 Տաճարային աշխատանք 133
17.1.7 Կարգապահական խորհուրդներ. 133
17.1.8 Գրառումներ և հաշվետվություններ 133
17.1.9 Արարողություններ 133
17.1.10 Ուսումնական ծրագիր 133

17.2 **Հանգամանքներ, որոնց դեպքում կարելի է կատարել տեղական հարմարեցում 133**

17.2.1 Ընտանեկան հանգամանքներ 133
17.2.2 Տրանսպորտ և հաղորդակցում 134
17.2.3 Փոքր քվորում կամ փոքր դասարան. . . 134
17.2.4 Ղեկավարների թվաքանակ 135
17.2.5 Անվտանգություն 135

17. Միօրինակություն և հարմարեցում

Եկեղեցու անդամները ապրում են քաղաքական, սոցիալական և տնտեսական տարբեր պայմաններում: Ծխերը և ճյուղերը նույնպես տարբերվում են իրենց չափսերով և ղեկավարների թվով: Պայմանները կարող են պահանջել, որ տեղի ղեկավարները հարմարեցնեն Եկեղեցու որոշ ծրագրեր: Այդ հարմարեցումները, սովորաբար, վերաբերում են օժանդակ կազմակերպություններին, ղեկավարների ժողովներին և միջոցառումների ծրագրերին: Այս գլխի ուղեցույցները կարող են օգնել քահանայության ղեկավարներին որոշել, թե ինչպիսի հարմարեցումներ պատշաճ կլինի կատարել:

Բոլոր ծխերը և ճյուղերը, անկախ չափսերից կամ պայմաններից, կարող են զգալ Տիրոջ Հոգու ներկայությունը նույն չափով: Փրկիչը ուսուցանել է. «Ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողովուած լինին՝ ես այնտեղ նրանց մեջ եմ» (Մատթեոս ԺԸ.20):

17.1 Որ դեպքերում է պարտադիր միօրինակությունը

Իմանալու համար, թե ինչ հարմարեցումներ են անհրաժեշտ, ղեկավարները նախ պետք է հասկանան վարդապետությունները, արարողությունները և գործերը, որոնք հիմնված են սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների և առաքյալների ուսմունքների վրա: Դրանք պետք է միատեսակ լինեն ամբողջ Եկեղեցում:

Ցցերի նախագահները, եպիսկոպոսները և տեղական այլ ղեկավարները սուրբ պատասխանատվություն են կրում՝ ստորև նշված բոլոր բնագավառներում Եկեղեցու միօրինակությունը և մաքրությունը պահպանելու համար: Միատեսակության այս անհրաժեշտությունը հիմնված է «մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն» ունենալու սուրբ գրային սկզբունքի վրա (Եփեսացիս Դ.5; տես նաև Մոսիա 18.21):

17.1.1 Սուրբ գրություններ

Եկեղեցու օրինակելի աշխատություններն են՝ Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը: Շատ լեզուներով Եկեղեցին հաստատել է Աստվածաշնչի մեկ հրատարակություն, որը կարող է օգտագործվել Եկեղեցու ժողովների և դասերի ժամանակ: Նմանապես, Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մնացած երեք սուրբ գրքերի դեպքում, պետք է օգտագործվեն վերջին վավերացված հրատարակությունները: Ոչ մի այլ աշխատություն Եկեղեցում չպետք է դիտարկվի կամ օգտագործվի որպես սուրբ գրություն:

17.1.2 Պատվիրաններ և չափանիշներ

Տիրոջ պատվիրանները և Եկեղեցու արժանավորության չափանիշները տրված են սուրբ գրություններում և Առաջին Նախագահության պաշտոնական հաղորդակցումներում: Տեղական ղեկավարները չպետք է փոփոխեն այդ պատվիրանները և չափանիշները: Տեղական ղեկավարները չպետք է նաև ուսուցանեն իրենց սեփական կանոնները կամ պատվիրանների իրենց մեկնաբանությունները:

Տաճար այցելելու արժանավորության չափանիշները մանրամասվում են տաճարի երաշխավորագրի գրքում տրված հարցազրույցի հարցերում: Տեղական ղեկավարները չպետք է փոփոխեն դրանք:

17.1.3 Վարդապետության մաքրությունը

Եկեղեցու վարդապետությունները տրված են սուրբ գրություններում և վերջին օրերի մարգարեների և առաքյալների ուսմունքներում: Տերը հրահանգել է. «Երեցները, քահանաներն ու ուսուցիչները պետք է ուսուցանեն իմ ավետարանի սկզբունքները, որոնք Աստվածաշնչի մեջ են, և Մորմոնի Գրքի, որը պարունակում է ավետարանի լրիվությունը» (ՎԼՈ 42.12; տես նաև ՎԼՈ 52.9, 36):

Բոլոր ղեկավարները պետք է հետևեն, որպեսզի Եկեղեցում ուսուցանվի ճշմարիտ վարդապետությունը: Եթե մեկն ուսուցանում է կեղծ կամ մտահայեցողական վարդապետություն, ղեկավարները պետք է անհապաղ և նրբանկատորեն ուղղեն այդ: Սխալները, սովորաբար, կարելի է ուղղել առանձին միջավայրում, սակայն լուրջ կամ կրկնվող սխալները կարող են պահանջել ուղղում հանրության ներկայությամբ:

Եթե տեղական ղեկավարները վստահ չեն, թե տվյալ թեմայով որ վարդապետությունները կամ ուսմունքներն են ճիշտ, նրանք կարող են դիմել իրենց անմիջական նախագահող իշխանությանը:

17.1.4 Հաղորդության ժողովների և Կիրակնօրյա ժողովների ժամացուցակներ

Հաղորդության ժողովի անցկացումը սուրբ պարտականություն է (տես ՎԼՈ 59.9)։ Հաղորդության ժողովի հրահանգները տրված են 18.2.2-ում։ Կիրակնօրյա ժողովի ժամացուցակը տրված է էջ 153-ում։ Այդ ժամացուցակը սահմանված է Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի կողմից։ Տեղական ղեկավարները չպետք է այն փոփոխեն։

Ծայրահեղ իրավիճակներում տեղական ղեկավարները կարող են չկայացնել Կիրակնօրյա ժողովը։ Ինչևէ, նման դեպքերը պետք է հազվադեպ լինեն։ Նման իրավիճակներ, որոնց դեպքում ժողով չանցկացնելը կարող է արդարացված լինել, կարող են հանդիսանալ անվտանգության հետ կապված ծայրահեղ խնդիրները կամ խիստ անբարենպաստ եղանակը։ Հնարավորության դեպքում, ժողովները չկայացնելուց առաջ եպիսկոպոսը պետք է խորհրդակցի ցցի նախագահի հետ։

Երբեմն, տեղական առանձնահատուկ իրավիճակը կարող է անհրաժեշտություն առաջացնել երկարատև փոփոխություն կատարել Կիրակնօրյա ժողովի ժամացուցակում։ Օրինակ, փոփոխության անհրաժեշտություն կառաջանա, եթե հավաքատունը վնասվել է հրդեհի, ջրհեղեղի կամ փոթորկի հետևանքով։ Նման իրավիճակում, ցցի նախագահը դիմում է ուղղության համար Տարածքային Նախագահությանը և Տարածքային Յոթանասունականին, որը նախագահում է իր համակարգող խորհրդում։

Շատ փոքր ճյուղերի ղեկավարները կարող են փոփոխել Կիրակնօրյա ժողովների ժամացուցակը, ուղղություն ստանալով իրենց ղեկավարներից և հիմնվելով *Հիմնական միասնության ուղեցույցի* վրա։

17.1.5 Համաժողովներ

Յուրաքանչյուր ցից տարեկան երկու համաժողով է անցկացնում, ինչպես սահմանվել է Տասներկուսի Քվորումի Նախագահի կողմից (տես 18.3.1)։

Ցցի նախագահությունը ցցում յուրաքանչյուր ծխի կամ ճյուղի համար ծրագրում և կազմակերպում է տարեկան մեկ համաժողով և նախագահում է այդ համաժողովին (տես 18.2.5)։ Շրջանի նախագահը նույնը անում է շրջանի յուրաքանչյուր ճյուղի համար։

17.1.6 Տաճարային աշխատանք

Տաճարների սուրբ աշխատանքը կատարվում է Եկեղեցու Նախագահի անմիջական իշխանության ներքո։ Տաճարային աշխատանքին վերաբերող բոլոր հարցերը պետք է դիտարկվեն համաձայն հրահանգների, որոնք տրված են *Handbook 1,* գլուխ 3-ում։ Այդ հարցերից են՝ տաճարային երաշխավորագրերը, կնքումները, կնքումների հաստատումները և կնքումների չեղյալ համարելը։ Եթե ցցի նախագահը չի կարող լուծել հարցը, նա այն ուղարկում է Առաջին Նախագահության Գրասենյակ։

Տեղական ղեկավարները հետևում են, որպեսզի տաճարում հնչող արտահայտությունները, սուրբ արարողությունները և ուխտերը որոշակիորեն չքննարկվեն Եկեղեցու ժողովների ժամանակ։

17.1.7 Կարգապահական խորհուրդներ

Կարգապահական խորհուրդների վերաբերյալ հրահանգները տրված են *Handbook 1,* գլուխ 6-ում։ Ղեկավարները չպետք է շեղվեն այդ հրահանգներից, ներառյալ հաշվետվություններ ներկայացնելու պահանջներից։ Եթե ցցի նախագահը այնպիսի հարցի է հանդիպում, որը չի կարող լուծել, նա այն ուղարկում է Առաջին Նախագահության Գրասենյակ։

17.1.8 Գրառումներ և հաշվետվություններ

Եկեղեցու գրառումներ վարելը սուրբ պարտականություն է (տես ՎԼՈ 20.81–83)։ Պահանջվող գրառումները և հաշվետվությունները տրված են *Handbook 1,* գլուխ 13-ում։ Առաջին Նախագահությունը ժամանակ առ ժամանակ կարող է փոփոխել այդ ձևերը։

Եկեղեցու գրառումները և հաշվետվությունները պատրաստվում են Եկեղեցու համակարգչային համակարգերի միջոցով կամ գրավոր ձևով՝ կախված տարածքից։ Ղեկավարները հետևում են, որպեսզի գրառումները և հաշվետվությունները լինեն ճշգրիտ և ներկայացվեն ժամանակին։

17.1.9 Արարողություններ

Քահանայության արարողությունները կատարելու վերաբերյալ հրահանգները տրված են գլուխ 20-ում։ Այդ հրահանգները չպետք է փոփոխվեն։ Մկրտության և Ահարոնյան Քահանայության պաշտոնների կարգման արարողությունները ստանալու նվազագույն տարիքը ոչ մի դեպքում չի կարելի փոխել։

17.1.10 Ուսումնական Ծրագիր

Եկեղեցու հաստատված ուսումնական նյութերը պետք է օգտագործվեն դասարաններում՝ Կիրակնօրյա ժողովների ժամացուցակի

շրջանակներում: Այդ նյութերը ներառում են Եկեղեցու թողարկած ձեռնարկները, ամսագրերը և ուսուցանման օժանդակ նյութերը: Նոր ձեռնարկներ և դասընթացներ տեղական մակարդակով չեն կարող մշակվել:

Եպիսկոպոսները և ճյուղերի նախագահները կարող են երբեմն ուսուցանել կամ լիազորել քահանայության կամ օժանդակ կազմակերպության հատուկ դաս, եթե զգում են դրա կարիքը:

17.2 Հանգամանքներ, որոնց դեպքում կարելի է կատարել տեղական հարմարեցում

Ցցերի նախագահները, եպիսկոպոսները և ճյուղերի նախագահները իրավասու են պարզ հարմարեցումներ կատարել Եկեղեցու որոշ ծրագրերում: Անհրաժեշտության դեպքում, կարելի է կատարել հետևյալ հարմարեցումները.

1. Օժանդակ կազմակերպությունների ծառայողների և ծրագրերի մեջ
2. Ղեկավարների ժողովների ձևաչափի և հաճախականության մեջ
3. Միջոցառումների ձևաչափի և հաճախականության մեջ

Փոփոխություններ կատարելուց առաջ ցցի նախագահությունը, եպիսկոպոսությունը կամ ճյուղի նախագահությունը խորհրդակցում են միմյանց հետ, նաև ցցի, ծխի կամ ճյուղի խորհրդի հետ: Նրանք խորհրդակցում են նաև իրենց անմիջական նախագահող իշխանության հետ, եթե հանգամանքները արդարացնում են խոշոր կամ արտասովոր փոփոխությունը: Փոփոխություններ կատարելիս ղեկավարները պետք է միշտ փնտրեն Հոգու առաջնորդությունը:

Հարմարեցումների պատշաճ լինելը որոշելու համար, ղեկավարները կարող են հաշվի առնել հետևյալ գործոնները:

17.2.1 Ընտանեկան հանգամանքները

Կոչումներ տալիս, ղեկավարների ժողովները և միջոցառումները ծրագրավորելիս, ղեկավարները հաշվի են առնում անդամների ընտանեկան պայմանները: Եկեղեցու ծառայությունը և մասնակցությունը որոշակի չափով զոհաբերություն է պահանջում: Ինչևէ, ամուր ընտանիքները չափազանց կարևոր են Եկեղեցու համար, և անդամներին չի կարելի խնդրել չափից դուրս ընտանեկան զոհաբերություններ կատարել՝ ծառայելու կամ ծրագրերին և միջոցառումներին աջակցելու նպատակով:

Օրինակ, պետք է հաշվի առնել անդամի ամուսնու կամ կնոջ Եկեղեցու կոչում(ներ)ը: Ընտանիքները չպետք է ծանրաբեռնված լինեն Եկեղեցու պարտականություններով: Այլ հանգամանք, որը կարելի է հաշվի առնել, դա ընդհանուր ժամանակն է, որն անհրաժեշտ է անդամներին իրենց ընտանիքների և անձնական այլ կարիքները հոգալու համար: Աշխարհի որոշ մասերում, մարդիկ ստիպված են լինում աշխատել երկու կամ երեք աշխատեղերում: Ղեկավարները պետք է ուշադիր լինեն, որպեսզի հաշվի առնեն այդ՝ կոչումներ տալիս, ղեկավարների ժողովներ և միջոցառումներ ծրագրավորելիս:

17.2.2 Տրանսպորտը և հաղորդակցումը

Որոշ ցցեր կամ ծխեր ընդգրկում են աշխարհագրական լայն տարածքներ և անդամները ստիպված են լինում երկար տարածություն անցնել ժողովներին և միջոցառումներին մասնակցելու համար: Ժողովների և միջոցառումների կարիքները գնահատելիս, ղեկավարները պետք է հաշվի առնեն անդամների ճանապարհորդության համար պահանջվող ժամանակը և ծախսերը:

Աշխարհի որոշ տարածքներում ավտոմեքենաները տարածված չեն և տեղափոխումները կատարվում են ոտքով, հեծանիվով, ավտոբուսով և այլն: Մեծ տարածությունների պայմաններում ղեկավարները պետք է հարմարեցնեն Եկեղեցու ծրագրերը և ղեկավարների ժողովները այնպես, որպեսզի անդամներին ավելի հեշտ լինի մասնակցել:

Անգամ այն տարածքներում, որտեղ ավտոմեքենաները լայնորեն տարածված են, ղեկավարները պետք է հաշվի առնեն երկար տարածքներ վարելու ծախսերը: Որոշ դեպքերում, օրինակ՝ բարձրագույն խորհրդի գործերը վարելիս, ղեկավարները կարող են օգտագործել համատեղ հեռախոսազանգերը, է-փոստը և համացանցը՝ տրանսպորտային մեծ ծախսերը կրճատելու նպատակով: Այս միջոցներից օգտվելիս, ղեկավարները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն խորհրդապահ հարցերին:

Կյանքի տարբեր փուլերում գտնվող անդամները տարբեր մատչելիություն ունեն տրանսպորտային միջոցներին: Օրինակ՝ երեխաներով ընտանիքներն այդքան ճկուն չեն տեղափոխման հարցում, քան երիտասարդ ամուրիները, որոնք, երբեմն, մեծ տարածություններ անցնելու միջոցներ ունեն: Այն վայրերում, որտեղ երիտասարդ ամուրիները կարող են հավաքվել խելամիտ ժամանակի և ծախսերի սահմաններում, պետք է

կազմակերպվեն միջին հաճախականության բազմացից միջոցառումներ (տես 13.3.1)։

Աշխարհի որոշ մասերում հեռախոսակապը թանկ է և շատ անդամներ չունեն հեռախոսներ։ Նմանապես, է-փոստը և համացանցը կարող է վատ հասանելի լինել որոշ տարածքներում։ Եթե այդ միջոցները թանկ են կամ, ընդհանուր առմամբ, ոչ մատչելի, ղեկավարները պետք է կատարեն համապատասխան հարմարեցումներ։

Որտեղ ճանապարհորդելը դժվար է կամ թանկ, իսկ հաղորդակցման միջոցները՝ անհամապատասխան, տնային և այցելող ուսուցումը ավելի դժվար է իրականացնել։ Նման դեպքերում, ղեկավարները կարող են հարմարեցումներ կատարել, հետևելով 7.4.3 և 9.5.3-ին։

17.2.3 Փոքր քվորումը կամ փոքր դասարանը

Երեցներ և քահանայապետեր

Եթե ծխում կիրակի օրը քահանայության ժողովին կարող են մասնակցել քիչ թվով երեցներ կամ քահանայապետեր, ապա նրանք կարող են հավաքվել միասին։ Սակայն, ոչ մի դեպքում չպետք է կազմավորվի Մելքիսեդեկյան Քահանայության քվորում։ Եթե ծխում կան կարգված երեցներ և քահանայապետեր, ապա պետք է կազմակերպվեն և՛ երեցների քվորում, և՛ քահանայապետերի խումբ։

Քանի որ շրջաններում չկան քահանայապետերի քվորումներ, ճյուղերը շրջաններում չունեն քահանայապետերի խմբեր։ Այդ ճյուղերը հաճախող քահանայապետերը հավաքվում են երեցների քվորումի հետ միասին։

Երիտասարդ Տղամարդիկ և Երիտասարդ Կանայք

Եթե ծխում կամ ճյուղում երիտասարդ տղամարդկանց թիվը փոքր է, Ահարոնյան Քահանայության քվորումները միասին են հավաքվում հրահանգներ ստանալու և միջոցառումներ անցկացնելու համար (տես 8.11 և 8.13.1)։ Ինչևէ, պետք է կազմավորվեն առանձին քվորումներ, յուրաքանչյուրի համար պետք է կանչվեն և հաստատվեն ղեկավարներ։

Եթե ծխում կամ ճյուղում երիտասարդ կանանց թիվը փոքր է, նրանք կարող են միասին հավաքվել հրահանգներ ստանալու և միջոցառումներ անցկացնելու (տես 10.6.2 և 10.8.1)։ Յուրաքանչյուր տարիքային խմբի համար կարող է կանչվել դասարանի նախագահություն, կամ մեկ նախագահություն կարող է կանչվել մի քանի տարիքային խմբերի համար, մինչև որ հնարավոր լինի կազմակերպել համապատասխան դասարանները։

Եթե չափահաս ղեկավարների թիվը սահմանափակ է, Երիտասարդ Տղամարդկանց նախագահությունը կարող է ուսուցանել կիրակնօրյա դասերը և վարել միջոցառումները առանց խորհրդատուների օգնականի։ Երիտասարդ Կանանց նախագահությունը կարող է նույնը անել երիտասարդ կանանց համար։ Շատ փոքր միավորում, Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց նախագահները կարող են լինել իրենց կազմակերպությունների միակ չափահաս ղեկավարները։ Այդ դեպքում, նրանք ուսուցանում են կիրակնօրյա դասերը և ղեկավարում բոլոր երիտասարդ տղամարդկանց և կանանց միջոցառումները։ Հնարավորության դեպքում, բոլոր կազմակերպություններում պետք է կանչվեն խորհրդականներ և քարտուղար։

Քանի որ երիտասարդներին օգտակար է մեծ խմբերով շփվելը, երկու կամ ավել փոքր ծխերի կամ ճյուղերի երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք կարող են երբեմն հավաքվել համատեղ միջոցառումներ անցկացնելու։ Եթե հարևան ծխերը և ճյուղերը թվով ավելի քիչ երիտասարդ տղամարդիկ և կանայք ունեն, եպիսկոպոսները և ճյուղերի նախագահները կարող են թույլատրել երիտասարդներին միասին անցկացնել շաբաթվա միջոցառումները։ Այս տարբերակները դիտարկելիս, ղեկավարները պետք է հաշվի առնեն այնպիսի գործոններ, ինչպիսին եք՝ հեռավորությունը և ճանապարհածախսը։

Ցցի կամ բազմացից պարբերական միջոցառումները հատկապես կարևոր են այն ծխերում կամ ճյուղերում, որտեղ երիտասարդների թիվը փոքր է (տես 13.3 և 13.4)։

Փոքր ցցում կամ շրջանում, Երիտասարդ Տղամարդկանց նախագահը կարող է լինել ցցի կամ շրջանի Երիտասարդ Տղամարդկանց միակ ղեկավարը։ Նույնը կիրառելի է ցցի կամ շրջանի Երիտասարդ Կանանց նախագահի դեպքում։ Եթե հնարավոր է, յուրաքանչյուր կազմակերպության համար պետք է կանչվեն խորհրդականներ և քարտուղար։

Երեխաների Միություն

Մի քանի երեխաներով ծխում կամ ճյուղում, Երեխաների Միության նախագահությունը կարող է կազմակերպել թվով ավելի քիչ դասարաններ, միավորելով մի քանի տարիքային խմբեր։

Փոքր ծխում կամ ճյուղում, Երեխաների Միության նախագահությունը կարող է լինել

Երեխաների Միության ղեկավարների և ուսուցիչների միակ խումբը: Շատ փոքր միավորում Երեխաների Միության նախագահը կարող է լինել Երեխաների Միության միակ ղեկավարը: Այդ դեպքում, նա վարում է միացյալ ժամը և ուսուցանում է դասարանում, որը միավորում է բոլոր երեխաներին: Հնարավորության դեպքում, պետք է կանչվեն լրացուցիչ ղեկավարներ և ուսուցիչներ, ինչպես նշվում է 11.7-ում:

Փոքր ցցում կամ շրջանում, Երեխաների Միության նախագահը կարող է լինել ցցի կամ շրջանի Երեխաների Միության միակ ղեկավարը: Հնարավորության դեպքում, պետք է կանչվեն լրացուցիչ ղեկավարներ, ինչպես նշվում է 11.7-ում:

17.2.4 Ղեկավարների թիվը

Եթե ղեկավարման բոլոր պաշտոնները համալրելու համար բավական թվով որակավորված անդամներ չկան, ապա նախագահող պաշտոնյաները կարող են համալրել միայն առավել կարևոր պաշտոնները: Ակտիվ, փորձառու անդամների ղեկավարման պաշտոնների կանչելուց բացի, նախագահող պաշտոնյաները պետք է ոգեշնչման միջոցով գտնեն ապագա ղեկավարներ նոր անդամների, անփորձ անդամների և քիչ անդամների մեջ, որոնք կարող են վերադառնալ ակտիվության: Եկեղեցու անդամները չպետք է փորձառու կամ հիանալիորեն որակավորված լինեն՝ կոչում ստանալու համար: Կոչում ունենալը նրանց համար ծառայելու և հոգեպես աճելու կարևոր ուղի է:

Եթե ղեկավար պաշտոններում ծառայելու համար անդամների թիվը չի բավականացնում, նախագահող պաշտոնյաները կարող են իրենց ցիցը, ծուխը կամ ճյուղը կազմավորել ավելի փոքր չափսերով: Օրինակ, որոշ կազմակերպություններ կարող են ունենալ միայն նախագահ և մեկ խորհրդական, որը կծառայի նաև որպես քարտուղար. նաև որոշ ծրագրեր կարող են պարզեցվել:

Շատ փոքր ճյուղում, որը չունի Երիտասարդ Կանանց կամ Երեխաների Միության նախագահ, Սփոփող Միության նախագահը կարող է օգնել ծնողներին ուսուցում կազմակերպել երիտասարդ կանանց և երեխաների համար, մինչև որ կանչվեն Երիտասարդ Կանանց և Երեխաների Միության նախագահները:

Շատ փոքր ճյուղերի ղեկավարները հետևում են *Հիմնական միավորի ուղեցույցի* հրահանգներին:

17.2.5 Անվտանգություն

Աշխարհի որոշ տարածքներում հանցագործության ցուցանիշները շատ բարձր են կամ տիրում է անկայուն քաղաքական իրավիճակ: Եթե այդ տարածքների ղեկավարները համարում են, որ անդամների համար երեկոյան ճանապարհորդությունները վտանգավոր են, նրանք կարող են հանել երեկոյան միջոցառումները: Դա նշանակում է, որ Եկեղեցու միջոցառումների թիվը կնվազի, իսկ որոշ միջոցառումներ կծրագրվեն շաբաթ և կիրակի օրերին:

Եթե անվտանգությունը կամ ճանապարհածախսը լուրջ խնդիրներ են հանդիսանում, ղեկավարները կարող են երիտասարդների միջոցառումների որոշ մասը անցկացնել կիրակի օրը: Այդ միջոցառումները պետք է առանձնացվեն կիրակնօրյա ժամացուցակից և կիրակի օրվա ոգին պետք է պահպանվի: